

Բ. ԲԱՇԵԱՆ

ՀԱՅԿԱՐԱՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ

ԸՆԹԱՑՔ

Ը. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1971
ՏՊԱՐԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՊԵՏՐՈՒԹ

425.21
Բ 194
1971



Բ. ԹԱՇԵԱՆ

Վարդան

ՀԱՅԿԱՐԱՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ

ԸՆԹԱՑՔ

Ը. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Թարեփոխուած)

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

1 9 7 1
ՏՊԱՐԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՊԷՏՐՈՒԹ

1. ԴՊՐՈՑԻՆ ՃԱՄԲԱՆ

Ճմրաեն խիստ բուքին, սառնամանիքին,
Դպրոցին ճամբան
Դժուար է, երկա՛ր, շատերու համար:

Զուարթ ու շէնշող գարնան, արեւին,
Դպրոցին ճամբան
Կարճ է աւելի ու շատ հաճելի:

Իսկ ով կը սիրէ ուսում, գիտութիւն,
Դպրոցին ճամբան
Միշտ կարճ է, դիւրին, գարնան թէ ձմրան:

ՀԱՆԵԼՈՒԿ Ա.— Կակուղ կաշի,
Ո՛չ կը հալի,
Ո՛չ կը մաշի։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բուֆ.— *Զիւնախառն հով։*
Սառնամանիք.— *Սառի պէս պաղ օր։*
Շէնշող.— *Ուրախ, զուարթ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ձեզի համար դժուա՞ր թէ դիւրին է դպրոցին ճամբան։ — Որո՞ն երկար կը թուի այդ ճամբան եւ որո՞ն կարճ։ — Դուք կը դժգոհի՞ք դպրոց երթալու առեն։ — Ո՞վ ամենէն աւելի ուրախութեամբ դպրոց կ'երթայ։ — Ձեր կարծիքով՝ գարո՞ւնը աւելի հաճելի է թէ ամառը։

2. ԱՄԷՆ ԲԱՆ ԳԻՏԷ

1

Լեւոն այրբենարանի առաջին դասը սորվեր էր եւ հաւատացած էր, թէ այլեւս ամէն բան գիտէ։ Հպարտ–հպարտ գնաց քրոջը քով եւ ըսաւ.

— Մաննի՛կ, ես դպրոց պիտի բանամ, ուսուցիչ պիտի ըլլամ։

— Լա՛ւ, — ըսաւ Մաննիկ, — մեղի ալ դաս կու տա՞ս։

— Կու տամ, — պատասխանեց Լեւոն գլուխը շարժելով։

2

Իսկոյն ամբողջ «դպրոց»ը հաւաքուեցաւ։ Մինասը, Սարգիսը, Մաննիկն ու Շուշիկը քով քովի նստան, իսկ Լեւոն սկսաւ կարդալ.

— Առաջին դաս՝ Ա, երկրորդ՝ Բ, երրորդ՝ Գ, չորրորդ՝ Դ, լմնցաւ գնաց։ Հասկցա՞ք։

— Լեւոնի՛կ, — յարեց Մաննիկ քաշուելով, — կարծեմ այրուբենը աւելի երկար է։

— Բա՛ն կ'ըսես դուն ալ... չա՞տ կը հասկընաս իրը թէ, — բարկացաւ Լեւոն։ — Տե՛ս, ահա բոլոր տառերը այս էջին վրայ են. ես բոլորն ալ գիտեմ։

— Հապա դուն մէյ մը էջը դարձո՛ւր, — կրկնեց Մաննիկ վախվխելով։

3

Լեւոն բարկացած դարձուց էջը եւ ի՛նչ տեսնէ ապէկ... տառե՛ր, տառե՛ր, անվերջ տառե՛ր։

Այն առեն գիրքը վար ձգեց, ձեռքովը ծածկեց երեսը եւ սկսաւ լալ։

Մինասը, Սարգիսը, Մաննիկն ու Շուշիկը պէտք է մխիթարէին խեղճ Լեւոնը, որ կը պարծենար, թէ ամէն բան գիտէ։

ԱՌԱՆ.— Խօսք ըսածդ կլոր է.
Խորհէ՛, վերջը գլորէ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այբբենարան։— *Քերական, այբուբենը սովորեցնող գիրք։*
Ցարեց։— *Աւելցուց, վրայ բերաւ։*
Այբուբեն։— *Լեզուի մը տառերուն ամբողջութիւնը։*
Պարծենալ։— *Մեծ-մեծ խօսիլ, մեծութիւն ծախել։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Լեւոն ինչո՞ւ կը կարծէր, թէ ամէն բան գիտէ։ — Ի՞նչ ըսաւ Գրոցը։ — Ի՞նչ դաս տուաւ իր «աշակերտ»ներուն։ — Ի՞նչ ըսաւ Մանկիկ։ — Լեւոն ինչո՞ւ բարկացաւ։ — Վերջը ի՞նչ եղաւ։ — Մեր այբուբենը քանի՞ տառերէ բաղկացած է։ — Մէկը կրնա՞յ պարծենալ, թէ ամէն բան գիտէ։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Հայերէնի մէջ գործածուած առոգանութեան նշաններն են։

(՛) Շեշտ, օրինակ։— պարո՛ն, նստէ՛։

(՜) Երկար, օրինակ։— ո՜հ, ի՜նչ բախտ։

(՞) Պարոյկ կամ հարցական նշան, օրինակ։— ո՞ւր կ'երթաս։

3. ԿԱՐԵՒՈՐ ԴԱՍԸ

Զաւէն նստեր էր դրասեղանին առջեւ ու դաս կը պատրաստէր։ Յանկարծ ներս մտաւ հօրաքոյրը։

— Այդ ի՞նչ կ'ընես, Զաւէ՛ն, դասե՞ր կը պատրաստես, — հարցուց հօրաքոյրը Զաւէնի մազերը շոյելով։

— Այո՛, հօրաքոյր։ — պատասխանեց Զաւէն գլուխը վերցնելով։ — Թուարանութիւնը վերջացուցի, պատմութիւնն ալ սորվեցայ, հիմա իրագիտութեան դաս կը պատրաստեմ։

— Թուարանութիւնը գիտեմ ինչ է, պատմութիւնն ալ կը հասկնամ, բայց ի՞նչ բան է իրագիտութիւնը։ ի՞նչ կը սորվիք այդ դասին, — հարցուց նորէն հօրաքոյրը։



— Իրագիտութիւնը կը խօսի բոյսերու եւ կենդանիներու մասին, կը խօսի մեր ուտելիքներուն եւ ուրիշ անհրաժեշտ առարկաներու մասին։ ան է, որ մեզի կը սորվեցնէ, թէ ի՛նչը ինչէն կը շինեն եւ ի՛նչպէս կը շինեն։

— Այդ ի՞նչ կարեւոր դաս է եղեր։ մեր ժամանակը չկար, — ըսաւ հօրաքոյրը։

Զրսաւ միայն, թէ ի՛նչ դասեր կային իր ժամանակ։

ԱՌԱԾ։— Ծոյլին համար ամէն օր կիրակի է։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծոյլ։— *Փայփայել, զգուել։*
Անհրաժեշտ։— *Շատ կարեւոր։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ի՞նչ կ'ընէր Զաւէն։ — Ո՞վ ներս մտաւ յանկարծ։ — Ի՞նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ։ — Հօրաքոյրը ինչո՞ւ չէր գիտեր, թէ ի՛նչ բան է իրագիտութիւնը։ — Ի՞նչ կը սորվեցնէ մեզի այդ գիտութիւնը։ — Դուք ի՞նչ դասեր կ'առնէք դպրոցին մէջ։ — Այդ դասերէն ո՞րը աւելի կը սիրէք. ինչո՞ւ։

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Առոգանութեան նշանները ձայնաւոր գիրերու վրայ կը դրուին միայն։

Մեր ձայնաւոր գիրերն են ա, ե, է, ը, ի, ո, օ։

4. ԱՌՈՒՆ

Գըլգը՛լ, գըլգը՛լ, — կ'ըսէ առուն։—
Կու գամ ակէն աղբիւրներուն,
Կ'անցնիմ մօտէն պարտէզներուն,
Կ'երթամ դաշտեր՝ մօտ ու հեռուն։

Գըլգը՛լ, գըլգը՛լ, — կ'ըսէ առուն։—
Կ'երթամ ծարաւ փըթիթներուն,
Խամբելու մօտ ծաղիկներուն,
Տաքէն չորցած ածուներուն։

Գըլգը՛լ, գըլգը՛լ··· կ'երթայ առուն,
Այնպէ՞ս վրնիտ, այնպէ՞ս հոսուն.
Վազքը պաղուկ իր ջուրերուն
Դադար չունի եւ ոչ ալ քուն···

ՀԱՆԵԼՈՒԿ Բ։— Ձերմակ դաշտեր, սեւ-սեւ հուսներ,
Ձեռքով կը ցանեմ, աչքով կը հնձեմ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գըլգըլ։— *Վազելու առեն ջուրին հանած ձայնը։*
Փթիթ։— *Մել, նոր ծլած ծաղիկ։*
Խամբել։— *Թոսմել, թօշնել։*
Հոսուն։— *Հոսող, վազող (ջուր)։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Առուն ուրկէ՞ կու գայ եւ ո՞ւր կ'երթայ։ — Առանց ջուրի ի՞նչ պիտի ըլլային ծաղիկներն ու բոյսերը։ — Ո՞ր ջուրերը վնիտ ու մաքուր կ'ըլլան։ — Ե՞րբ եւ ինչո՞ւ կը բարձրանան առուներուն կամ գետերուն ջուրերը։ — Ի՞նչ կը պատահի երբ գետ մը յորդի։

5. ՀԱՅՐԻԿԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

1

Առուն կանուխ արթնցաւ փոքրիկ Բաֆֆիկը, վազեց հայրիկին մօտ եւ ուրախ-ուրախ ըսաւ անոր.

— Հայրի՛կ, գիտե՞ս այսօր ինչ պիտի ըլլամ։

— Դո՛ւն գիտցիր նայինք, — խնդաց հայրիկը։

— Է՛, կոկոն պիտի ըլլամ. օրիո՛րդը ընաւ։

— Կոկո՞նը որն է։

— Մեծ դասարան է. ես արագ-արագ կը կարդամ, անոր համար.

— Ապրի՛ս, — ուրախացաւ հայրիկը. — միւս փոքր դասարաննե՞րը ինչ են:

— Առաջ Ծիլ, վերջը Բողբոջ, եւաքն ալ Կոկոն. ամենէն մեծն է Ծաղիկը:

— Օ՛, — հիացաւ հայրիկը, — այդ ո՞րքան բարձր — բարձր դասարաններ կան եղեր ձեր դպրոցը: Ես ձեր դպրոցը գամ, ո՞ր դասարանը կրնամ ըլլալ:

2

Փոքրիկ Բաֆֆիկը մտածեց-մտածեց ու դաւաւ հայրիկին ճիշդ ատիճանը:

— Դո՞ւն, — ըսաւ, — դուն «ծառ» կ'ըլլաս:

Յանկարծ մէջ նետուեցաւ Արփիկը:

— Դուն ալ, — բաւ խօսքը հայրիկին ուղղելով, — այնքան մեծցեր ես, հայրիկ եղեր ես, տակաւին դպրոց կ'երթաս: Քիչ մը ալ տունը նստէ, մայրիկին օգնէ...

Հայրիկը չէր գիտեր ի՞նչ պատասխան տար հիմա:

ԱՌԱԾ.— Մէկ ծաղիկով գարուն չի գար:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծիլ Բողբոջ Ծաղիկ Կոկոն	Այս անուններով կը կոչուին մանկապարտէզի չորս դասարանները:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչո՞ւ ուրախ էր Բաֆֆիկ: — Ի՞նչ ըսաւ հայրիկին: — Հայրիկը իրա՞ւ դպրոց երթալ կ'ուզէր: — Բաֆֆիկի կարծիքով՝ ի՞նչ էր հայրիկին ճիշդ ատիճանը: — «Ծառ» անունով դասարան կա՞յ մանկապարտէզի մէջ: — Հապա ի՞նչ ըսել կ'ուզէր Բաֆֆիկ: — Իսկ ի՞նչ ըսաւ փոքրիկ Արփիկը: — Յարմար պատասխան մը կրնա՞ք գտնել Արփիկի ըսածին:

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ձեր այսօրուան դասին մէջ առոգանութեան նշաններ կա՞ն. ո՞ր բառերուն վրայ դրուած են եւ ի՛նչ կը կոչուին:

---

6. ԱՐԴԵՆ ՎԱՐՊԵՏ Է

1

Փոքրիկ Մարտիրոսը աշկերտ է կօշկակար Յովսէփին քով: Ուշադրութեամբ կը հետեւի վարպետին բոլոր շարժումներուն ու կը տեսնէ, որ ան միշտ միւնոյն բանը կը կրկնէ միւնոյն ձեւով:

Հինգ օր եւաք, փոքրիկ Մարտիրոս յայտնեց ծնողքին, թէ ինք արդէն վարպետ է եւ պէտք չունի ուրիշներու մօտ աշկերտ ըլլալու: Ու մէկ-մէկ բացատրեց, թէ ի՛նչպէս կը կարեն կօշիկը:

Եւ այլեւս չգնաց վարպետին քով աշխատելու։

2

Շաբաթ մը անցաւ։ Կոշկակար Յովսէփ ի զուր սպասեց աշկերտին։ Ան չկար ու չկար։ Ճարահատ՝ գնաց մօրը ու հարցուց.

— Ի՞նչ եղաւ Մարտիրոսը. ինչո՞ւ չի գար խանութ։



— Իմ տղաս արդէն վարպետ է, — պատասխանեց մայրը քթին տակէն խնդալով. — ան գիտէ, թէ կօշիկ կարելու համար պէտք է ոտքին չափը առնել, կաշին թրջել, կաղապարի վրայ անցընել, հերիւնով ծակել, դամեր դամել եւայլն։

Կոշկակար Յովսէփ ինքն ալ սկսաւ խնդալ, յետոյ ասելցուց.

— Կը տեսնե՞ս խելոցի ապան. բաւական չէ, որ ինք սորվեր վերջացուցեր է, կ'ուզէ մայրն ալ վարպետ դարձնել։

Փոքրիկ Մարտիրոս լսեց այս խօսքերը, բայց չկրցաւ պատասխան մը տալ։

ԱՌԱԾ — Աչքով տեսածը աւելի լաւ է,
քան ականջով լսածը։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի զուր — Զուր տեղը, պարապ տեղը։
Ճարահատ — Ճարը հատած, յոյսը կտրած։
Կաղապար — Փայտէ շինուած օրինակ, ոտքի ձեւով, որուն վրայ կաշին կ'անցընեն եւ կօշիկը կը կարեն։
Հերիւն — Կաշի ծակելու յատուկ պողպատէ գործիք։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ո՞վ էր փոքրիկ Մարտիրոսը։ — Ի՞նչ տեսաւ կօշկակար Յովսէփին մօտ։ — Գնաց ի՞նչ ըսաւ ծնողին։ — Արհեստ սորվելու համար կը բաւէ՞ միայն տեսնելը։ — Իրա՞ւ Մարտիրոս սորված էր կօշիկ կարել։ — Ինչո՞ւ ըսաւ, թէ սորված է։ — Իսկ ի՞նչ բանի վրայ կը խնդային Մարտիրոսի մայրն ու կօշկակարը։

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Առոգանութեան նշաններ դրէք հետեւեալ բառերուն վրայ, պէտք եղած տեղերը.
Ով, ահ, ինչու, եկուր, աւաղ, ուր, կարդա։

7· ԳԱՅԼԸ ԵՒ ՈՒԼԸ

Գայլը տեսաւ ուլիկ մ'աղուոր,
Որ կեցած էր ժայռի մը ծայր·
«Վա՛ր իջիր, չո՛ւտ, – ըսաւ անոր, –
Սիրո՛ւն այծիկ, դուն չե՞ս վախնար·
Եթէ սահիս եւ իյնաս վար,
Կ'ըլլայ մարմինդ հաղար կըտոր»:

«Լրէ՛, լրէ՛, գայլ կեղծաւոր, –
Պատասխանեց ուլը կայտառ, –
Գիտեմ՝ ունիս փոր մը խոշոր,
Կը փարատես դառնուկ, ոչխար·
Բայց դիս խաբել դուն չես կրնար,
Գովեստներդդ սուտ են բոլոր»:

ՀԱՆԵԼՈՒԿ Գ·– Կաշիէ տանիք,
Մագէ ցուիք:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կայտառ·– *Աչխոյժ, վառվռուն:*
Փարատել·– *Բդկաել, կոսր-կոսր ընել:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·– Ի՞նչ տեսաւ գայլը· ո՞ւր: – Ի՞նչ ըսաւ: – Ուլիկը ի՞նչ պատասխանեց: – Ի՞նչ էր գայլին բուն նպատակը: – Խաղուեցա՞ւ ուլիկը: – Ի՞նչ տեսակ կենդանի է գայլը: – Անկէ աւելի կեղծաւոր կենդանի՞ մանուն գիտէ՞ք:

8· ՈՒԼԻԿԸ

1

Հեռաւոր անտառի մը մէջ այծ մը կ'ապրէր: Ան ունէր սիրուն ուլիկ մը· ամէն օր տունը կը թողուր գայն, իսկ ինք կ'երթար. խոտ արածելու: Իրիկունը կը դառնար տուն, դուռը կը զարնէր ու կը կանչէր·



Սեւո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն ուլիկ,
Ման եմ եկեր սարէ սար,
Կաթ եմ բերեր քեզ համար·
Բա՛ց դռնակը, ներս դամ ես,
Անույշ-անույշ կաթ տամ քեզ:

Ուլիկը ուրախ-ուրախ կը բանար դուռը, մայրը կը մտնէր ներս, կաթ կու տար իրեն եւ գարձեալ կ'երթար արածելու: ՀԷՔ

2

Գայլը իր պահուրտած տեղէն կը տեսնէր ու կը լսէր այս բոլորը: Իրիկուն մը այծէն առաջ դնաց դուռը զարկաւ եւ հոստ ձայնով կանչեց·

Սեւո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն ուլիկ,
Ման եմ եկեր սարէ սար,
Կաթ եմ բերեր քեզ համար.
Բա՛ց դռնակը, ներս գամ ես,
Անոյշ-անոյշ կաթ տամ քեզ:

Ուլիկը լսեց, բայց դուռը չբացաւ:

— Ո՞վ ես դուն, — ըսաւ, — քեզ չեմ ճանչնար: Իմ մայրս այդպէս չի կանչեր. անիկա քաղցր ձայն ունի: Քու ձայնդ հաստ է և կոշտ: Դուռը չեմ բանար: Գնա՛, չեմ ուզեր քեզ:

Գայլը հեռացաւ գլուխը կախ:

ԱՌԱՆՑ — Փորձուած սատանան չփորձուած հրեշտակէն աղէկ է:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուլ — *Այծի ձագ:*
Ուլիկ — *Պզտիկ ուլ:*
Ման գալ — *Պտրտիլ, շրջիլ:*
Քաղցր — *Անոյշ, մեղմ (ձայն):*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ո՞ւր կ'ապրէր այծը՝ որո՞ւ հետ: — Ո՞ւր կ'երթար ամէն օր՝ ինչո՞ւ: — Ի՞նչ կ'ըսէր ուլիկին, երբ իրիկունը տուն դառնար: — Օր մը ի՞նչ ըրաւ գայլը: — Ի՞նչ պատասխան տուաւ ուլիկը: — Ի՞նչ պիտի պատահէր, եթէ դուռը բացած ըլլար:

9. Ի՞ՆՉ ՊԱՏՄԵՑ ՈՒԼԻԿԸ

Ուլիկին պատմութիւնը դեռ չվերջացուցինք: Տեսէք, թէ ի՛նչ պատմեց մեր ուլիկը իր մօր, երբ իրիկունը տուն վերադարձաւ ան:

«Դիտե՞ս, մայրիկ, ի՛նչ պատահեցաւ այսօր, — սկսաւ պատմել մեր խոհեմ ու խելացի ուլիկը.— քիչ առաջ մէկը եկաւ, դուռը զարկաւ քեզի պէս եւ կանչեց հաստ ձայնով.

Սեւո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն ուլիկ...

«Յետոյ ուզեց, որ դուռը բանամ: Այնպէս վախցա՛յ, այնպէս վախցա՛յ... դուռը չբացի. ըսի՝ չեմ ուզեր, գնա՛»:

— Պա՛, պա՛, պա՛, Սեւո՛ւկ ջան, ի՞նչ լաւ է եղեր, որ դուռը չես բացեր, — ըսաւ մայրը վախով: — Այդ եկողը գայլ էր. եկեր է, որ քեզ ուտէ: Ուրիշ անգամ եթէ նորէն գայ դուռը չբանաս. ըսէ՝ գնա՛, թէ չէ մայրս կու գայ, քեզ կը սպաննէ իր սուր եղջիւրներով...:

Ուլիկը հաւատացած էր, թէ իր մայրը գայլէն աւելի զօրաւոր է:

ԱՌԱՆՑ — Մուկն իր դրանը առիւծ է:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խոհեմ։— *Զգոյշ, զգուշաւոր։*
Եղջիւր։— *Կառոյ։*
Զօրաւոր։— *Ուժով։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ի՞նչ պատմեց ուլիկը։ — Ի՞նչ ըսաւ մայրը։ — Ո՞վ էր ուրեմն եկողը։ — Ի՞նչ պատուիրեց մայրը ուլիկին։ — Ճի՞շդ է, որ այծ մը իր եղջիւրներով կրնայ սպաննել գայլը։ — Եթէ չի կրնար, հապա ինչո՞ւ ուլիկին մայրը ըսաւ, թէ կրնայ։ — Ի՞նչ բան է խոհեմութիւնը։ օրինակ մը կրնա՞ք տալ։

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Ձեր այսօրուան դասին մէջ քանի՞ շեշտ, պարոյկ եւ երկար կայ։ ո՞ր բառերուն վրայ դրուած են։

Դուք ալ գրեցէք վեց բառ եւ անոնց վրայ դրէք առոգանութեան յարմար նշաններ։

10։ Ո՞Վ Է ՈՒԺՈՎԸ

— Ես ինը տարու եմ, Արան՝ երեք,
Չի կրնար հասնիլ ան ինծի երբեք։
Իրաւունք չունի՞մ միթէ իր ձեռքէն
Գիրքը առնելու, քանի որ իրմէն
Աւելի ուժով ու մեծ եմ արդէն։

— Անչո՛ւշտ, ըսաւ հայրն անոր ժպտադէմ։
Բայց նախ թող, որ ե՛ս քու գիրքդ առնեմ։
— Ա՛խ, ինչո՞ւ, հայրի՛կ, իմ գիրքս կ՚առնես։
— Վասն զի քեզմէ շատ ուժով եմ ես...։

ՀԱՆԵԼՈՒԿ Դ։— Քանի՞ հաշիւ՝ կը կարենայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժպտադէմ։— *Ժպտուն դէմքով, ժպիտը դէմքին։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Փոքրիկ տղան ի՞նչ կ՚ուզէր ընել։ — Ինչո՞ւ կ՚ուզէր Արայի գիրքը առնել ձեռքէն։ — Հայրը իրաւունք տուա՞ւ իրեն։ ի՞նչ ըսաւ։ — Փոքրիկ տղան գոհ մնա՞ց։ — Հայրը ի՞նչ կ՚ուզէր հասկցնել փոքրիկ տղուն։

11։ ՎԱՆԿ ԿԸ ԽԱՂԱՆ

Տղաքը բոլորուեր էին սեղանին շուրջ եւ վանկ կը խաղային։ Մէկը բառ մը միտք կը պահէր, յետոյ ամենուն մէջ ան առաջին վանկը ու քանի վանկէ կազմուած ըլլալը։ Մնացեալները պէտք է գտնէին, թէ ի՛նչ էր միտք պահուած բառը։

Կարգը եկաւ փոքրիկ Երանիկին։

— Ո՞րն է միտք պահած բառիդ առաջին վանկը, — հարցուց մեծ եղբայրը, որ խաղին ղեկավարն էր։

— Առաջին վանկն է կարա, — պատասխանեց Երանիկ։

Ամէնքը մէկ սկսան խնդալ։

— Միայն մէ՛կ վանկը պէտք է ըսես, — սրբագրեց մեծ եղբայրը։

— Ես բոլորը չըսի, մէկ մաղը միայն ըսի, — արդարացաւ փոքրիկ Երանիկը։

— Աղէ՛կ, քանի՞ վանկ է բառը, — հարցուց նորէն եղբայրը։

— Երեք վանկ է։

— Կա–բա–սի, Կա–բա–պետ, կա–բա–ւան, — ըսին ուրախը։

— Զէ՛, չէ, ուսելու բան է, — բացատրեց Երանիկ։

— Կարա՞. Երեք վանկո՞վ, ուսելու բա՞նսխալ չըլլա՛ս։

— Ինչո՞ւ սխալ պիտի ըլլամ. կարապ է, կարա՛պ, — պոչեց Երանիկ յաղթական։

Եւ ամէնքը մէկ նորէն սկսան խնդալ։

ԱՌԱՆՑ — Անխելքին լեզուն երկար կ'ըլլայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բոլորաթիւ — Ճարմը հատաբաթիւ։
Վեկտաթար — Կատարարոց, առաջնորդող։
Կարասի — Կահ, կազմած, ատն վերաբերեալ իրեղէններ։
Կարաւան — Միասին ճամբորդողներու խումբ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Տղաքը ի՞նչ կը խաղային։ — Ի՞նչ էին խաղին պայմանները։ — Փոքրիկ Երանիկը ի՞նչ պահած էր միտքը։ — Ինչո՞ւ խնդացին տղաքը։ — Ճի՞շդ է որ կարապ բառը երեք վանկ է։ — Երանիկի հաշուով ո՞րն էր վերջին վանկը։ — Ճի՞շդ էր իր հաշիւը։ — Ուրեմն ճանի՞ սխալ ըրաւ Երանիկ։

12. ՊԶՏԻԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գոհարիկ չվոխած մօտեցաւ մայրիկին, վար առաւ սեւուկ աչուկները եւ ըսաւ.

— Մայրի՛կ, պզտիկ պատմութիւններ դուն չատ կը սիրես, այնպէս չէ՞։

— Այո՛, աղջիկս։

— Կ'ուզե՞ս, մայրի՛կ, պատմեմ քեզի այդ տեսակ պատմութիւն մը։

— Պատմէ՛, միայն թէ չատ հին բան չըլլայ։

— Ո՛չ, մայրիկ, բոլորովին նոր է։ Ես ինքս ալ նոր սորվեցայ, քիչ առաջ, նեբսը՝ հիւրասենեակին մէջ։

— Աղէ՛կ, պատմէ նայիմ։

— Բայց չատ պզտիկ պատմութիւն է, մայրի՛կ։

— Աւելի լաւ, որ պզտիկ է։

— Սկսի՞մ։

— Սկսէ։

— Կար ու չկար...

— Ե՞տքը։

— Կար ու չկար, ապակիէ ծաղկաման մը կար, սիրուն ծաղկաման մը... սեղանի մը վրայ։

— Լա՛ւ, ե՞տքը։

— Եաքը ան, որ այդ ծաղկամանը... կոտրեցի: Բայց ա՛լ չեմ ըներ, մայրիկ. ուրիշ անգամ ա՛լ ամենևին ձեռք չեմ պպցներ այդ ամաններուն:

ԱՌԱՆՑ.— Երկաթը տաք տաք կը ծեծեն:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիւրասենեակ.— *Հիւրերը ընդունելու յատուկ սենեակ:*
Ծաղկաման.— *Ծաղիկի աման, Թաղար:*
Ամենևին.— *Բնաւ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Օր մը ի՞նչ ըսաւ Գոհարիկ իր մօրը: — Ի՞նչ նպատակով հնարեց ան իր պատմութիւնը: — Գուք ի՞նչ պիտի ընէիք, եթէ իր տեղը ըլլայիք: — Մայրիկը հաւնեցա՞ւ Գոհարիկի հնարած պատմութեան: — Կրնա՞ք դուք ալ նման պատմութիւն մը հնարել: — Ի՞նչ տեսակ աղջիկ էր Գոհարիկ:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հայերէնի մէջ գործածուած կէտադրութեան նշաններն են.

(՝) Բութ, օրինակ.— աշխարհագրութեան ուսուցիչը՝ պարոն Վարդանեան:

(,) Ստորակէտ, օրինակ.— գարունը եկաւ, ձիւները հալեցան:



13. ՁԻՆ ԵՒ ՑՈՒՎԸ

Առոյգ ձի մը, մանուկ մ՚առած իր վրան,
Դաշտերուն մէջ ապին անպին կու գար ման.
Մերթ կը վազէր, կը վազվզէր ուստուստուն,
Եւ մերթ հապիւ կը պպշէր թարմ խոտերուն:

«Ի՞նչ, — մտընչեց ցուն անպիէն զայրացած, —
Ըզքեզ վարել պզտիկ արդո՞ւն այդ մընաց,
Շո՛ւտ, պատժէ զայն եւ վրայէդ նետէ վար.
Երթայ սորվի, թէ ձիուն հետ չեն խաղար»:

«Ի՞նչ յաղթանակ, ի՞նչ փառք եւ ի՞նչ մեծ պատիւ, —
Ըսաւ անոր ծիծաղելով ձին ազնիւ.—
Ամօթ չէ՞ ինձ եւ չե՞ն խնդար իմ վրրաս,
Երբ վար նետեմ սա խեղճ մանուկն անվրնաս»:

ՀԱՆԵԼՈՒԿ Ե։— Ասդին խուիմ,
Անդին խուիմ,
Թէն ընեմ՝ նստիմ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցուլ։— *Արու եզ։*
Մերք։— *Երբէմն։*
Ոստոստուն։— *Ցատկռտող, ցատկռտելով։*
Թարմ։— *Նոր բուսած, նոր հասած (խոտ)։*
Մռնչել։— *Գոռալ, ուժով գոռալ։*
Զայրացած։— *Սաստիկ բարկացած։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ի՞նչ կ'ընէր ձին։ — Ցուլը ի՞նչ ըսաւ ա-նոր։ — Ի՞նչ պատասխան տուաւ ձին։ — Ի՞նչ տեսակ կենդանի է ձին։ ցո՞ւլը։ — Ի՞նչ բանի մէջ էր ձիուն ազնուութիւնը։ — Ի՞նչ պիտի ըլլար փոքրիկ տղան, երէ ցուլին վրայ նստած ըլլար։ — Ուրիշ պատմութիւններ գիտէ՞ք ցուլերու կամ ձիերու մասին։

14. ԲԱԴԻԿ ՏԻՄԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

(Ա. ՄԱՍ)

1

Կը լսէ՞ք։

— Կը՛ռթ... կը՛ռթ...

Գիտէ՞ք, թէ ո՛վ կը կըռթկըռթայ այսպէս։ հռչակաւոր բադիկ Տիմը։

Ո՞վ չի ճանչնար Տիմը։ անոր արկածնե-րուն մասին կարելի է մեծ գիրք մը գրել։

Տիմը երեք քոյր եւ երեք եղբայր ունի։

բոլորն ալ սովորական բադիկներ են, Տիմը ուրիշ բան է, կը սիրէ խաղալ միայնակը, իսկ բադ մայրիկը յուզուած կը հարցնէ։

— Ո՞ւր է Տիմը, բան մը պատահած չըլլա՞յ...

Բակին մէջ ամէնքը կը մեկնին բադ մայրիկը եւ կ'ըսեն, թէ Տիմը չար է ու անհնազանդ։

Ծադիկ կովը կ'ըսէ։

— Այս Տիմին վերջը ի՞նչ պիտի ըլլայ։

— Ա՜խ, — կը հառաչէ Բուլ այծը, — ան օր մը ատոպակին մէջ պիտի իյնայ։

Իսկ Տիմը կը ծիծաղի ու կ'ըսէ։

— Կը տեսնենք... կը՛ռթ, կը՛ռթ...

2

Անգամ մը, Տիմը բակէն դուրս ելաւ։ նայեցաւ աջ, նայեցաւ ձախ եւ վազեց դաշտ։

— Է՜յ, Տի՛մ, — անհանգստացաւ բադ մայրիկը, — հեռուները մի՛ երթար։

— Ոչի՛նչ, մա՛յրիկ, — ըսաւ Տիմը, — շուտով կը վերադառնամ։

Եւ շարունակեց վազել։

ԱՌԱԾ։— Օձն իր շապիկը կը փոխէ,
Բնութիւնը չի փոխեր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արկած — *Պատահար, փորձանք։*

Հոչակաւոր — *Նշանաւոր, երեւելի։*

Հառաչել — *Ամ քաշել։*

Տապակ — *Խոհանոցի ման մը, որուն մէջ միս կամ ձուկ կը տապկեն։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ո՞վ է Տիմը։ ինչո՞վ կը տարբերի իր քոյրերէն ու եղբայրներէն։ — Ի՞նչ կը սիրէր ամենէն աւելի։ — Բաղ մայրիկը ինչո՞ւ կ'անհանգստանար, ինչէ՞ն կը վախնար։ — Ի՞նչ կ'ըսէր Ծաղիկ կովը, Բուլ ա՞յծը։ — Անգամ մը ի՞նչ պատահեցաւ։ — Ի՞նչ տեսակ կենդանի է բադը։ սա՞զը։ հնդկահա՞ւը։ սիրամա՞րգը։

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Կէտադրութեան միւս նշանները են։

(.) Միջակէտ, օրինակ — տուն հասանիք։ ժամ մը ետք անձրեւ եկաւ։

(:) Վերջակէտ, օրինակ — դասապահը վերջացաւ։ Մէկ դասապահը երեք քառորդ ժամ է։

---

15. ԲԱԴԻԿ ՏԻՄԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

(Բ. ՄԱՍ)

1

Բադիկ Տիմը վազե՛ց, վազե՛ց, վերջը տեսաւ գետակ մը։

— Օհօ՛, — ըսաւ ինք իրեն, — այստեղ կարելի է լողալ։ Ի՞նչ մաքուր ջուր է, ինաւ նման չէ մեր լճակին։

Եւ սկսաւ դիտել յատակի գոյնզգոյն քարերը։ Կը պատրաստուէր գետակը նետուիլ, երբ յանկարծ տեսաւ երկար ոտքերով հրէշ մը, որ դուրս ինկած աչքերով իրեն կը նայէր։

2

— Վա՛յ, ո՞վ ես դուն, — վախով հարցուց Տիմը։

— Ես գորտն եմ, — պատասխանեց հրէշը եւ ջուրէն դուրս ցատկեց։

— Գո՞րտն ես, — ուրախացաւ Տիմը։— այդ լաւ է։ մայրիկս կ'ըսէ, թէ գորտը շատ համեղ է։ Ես հիմա պիտի ուտեմ քեզ։

– Փորձէ՛, – կըսկըռաց գորտը։

– Ահա՛ կը փորձեմ, – ըսաւ Տիմը եւ գորտին վրայ վազեց։

– Կը՛ս, կը՛ս, կը՞ս..., – կանչեց գորտը եւ ծռեցաւ ձախ։ Տիմն ալ նոյնը ըրաւ։

Յանկարծ գորտը ցատկեց վեր եւ վերէն՝ թըը՛մփ՝ ինկաւ չիսակ Տիմին վրայ։ ապա ձայն տուաւ.

– Է՞, հիմա վազէ նայիմ։

Տիմը վախցաւ եւ սկսաւ լալ։

– Վա՞յ, մա՛յրիկ, գորտը կ՚ուզէ ուտել զիս։

Բայց մայրիկը վազեց եկաւ, իսկ գորտը նետուեցաւ ջուրը եւ՝ բը՛լդ–բը՛լդ՝ թաղուեցաւ ջուրին տակ։

ԱՌԱՆՁ։– Դիտող բարը մամուռ չի բռներ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրէշ։– *Այլանդակ կենդանի։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։– Օր մը ո՞ւր գնաց բաղիկ Տիմը։ – Հոն ո՞ւր հանդիպեցաւ։ – Գան մնա՞ց այս հանդիպումէն։ ինչո՞ւ։ – Վերջը ի՞նչ պատահեցաւ։ – Ձեր կարծիքով՝ ո՞վ աւելի քաջ է, բա՞դը թէ գորտը։ – Ո՞ւր կ՚ապրին գորտերը։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։– (« ») Ձակերտ, օրինակ։– ուսուցիչը հարցուց։ «Դասդ սորվա՞ծ ես»։

( ) Փակագիծ, օրինակ։– հայրս (շատոնց մեռած է ան) շատ կը սիրէր զիս։

16։ ԲԱԴԻԿ ՏԻՄԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

(Գ։ ՄԱՍ)

1

Միւս առաւօտ Տիմը նստած էր լճափին եւ կը տաքնար արեւուն տակ։ Յանկարծ տեսաւ, որ մարդ մը կ՚անցնէր հեռուէն, զամբիւղը ձեռքին։

– Ո՞ւր կ՚երթայ արդեօք, – մտածեց Տիմ եւ դնաց մարդուն ետեւէն։

Մարդը մօտեցաւ գետակին, զամբիւղէն հանեց տոպրակ մը եւ նետեց ջուրը։

Երբ մարդը հեռացաւ վերջապէս, Տիմ ինքն ալ նետուեցաւ ջուրը եւ լողալով հասաւ տոպրակին։ Ծիւ–ծիւ ձայն մը կու գար տոպրակին մէջէն։

2

– Տարօրինակ է,– մտածեց Տիմը,– ես երբեք չեմ լսած, որ տոպրակը ծլծլայ։

Եւ տոպրակը քաշեց տարաւ ափ։

– Միաո՛ւ..., – ծլծլաց տոպրակը նորէն։

– Վա՞յ, – զարմացաւ Տիմ, – այստեղ մէկը կայ։

Բացաւ տոպրակը։ դուրս եկաւ նիհար, ցուրտէն դողացող կատուի ձագ մը։

— Միաո՛ւ, — ըսաւ ձագը, — դիս մահէն փրկեցիր։ Ո՞վ ես դուն։

— Ես Տիմն եմ, — պատասխանեց բադիկը, — իսկ դո՞ւն ով ես։

— Ես ալ Սեւուկն եմ։ Տէրս կ'ըսէ, թէ ես շատակեր եմ, ատոր համար ալ դիս գետը նետեց, բայց դուն փրկեցիր զիս։ Հիմա ո՞ւր երթամ։

— Եկուր ինծի հետ. մեր բակին մէջ ուտելիք շատ կայ։

Եւ Տիմը, հպարտ-հպարտ, Սեւուկը ետեւը ձգած, մտաւ իրենց բակը։

ԱԾԱՌ։— Ո՛վ որ ուզածը կ'ըսէ,
Պէտք է չուզածը լսէ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Համեղ։— *Համով։*
Լեռափ։— *Լիճին ափը, եզերքը։*
Զամբիւղ։— *Տեսակ մը փոքր կողով, սակառ։*
Տարօրինակ։— *Անսովոր, զարմանալի։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Առտուն ի՞նչ պատահեցաւ։ — Ի՞նչ ըրաւ Տիմը։ — Տոպրակին մէջ ի՞նչ կար։ — Ո՞վ էր Սեւուկը։ — Տէրը ինչո՞ւ ջուրը նետեր էր զայն։ — Վերջը ո՞ւր գացին Տիմը եւ Սեւուկը։ — Ո՞ր կենդանիները վախկոտ են։ — Կրնա՞ք հաւատարիմ կենդանիի անուն մը տալ։

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— (—) Գծիկ, օրինակ։— ուրկէ՞ կու գար։— դպրոցէն։

(...) Կախման կէտ կամ բազմակէտ, օրինակ։— աղմուկ մի՛ հաներ, երբէ ոչ...

---

17. ԺԱՄԱՑՈՅՑԸ

Ամէն մէկ ժամ լրանալուն
Ժամացոյցը՝ թին-թան-թին...
Ուրախ-զուարթ կու տայ ձայն,
Կը յայտնէ ժամն ամէնքին։

— Յա՛միկ, ժամը, ա՛յ, ութն է, տե՛ս,
Հնազանդ չե՞ս մայրիկին.
Ժամացոյցը, տե՛ս, կ'ըսէ քեզ՝
Դէ՛հ, քնացիր. թին-թան-թին...

Նիրհեց Ցաամիկն արդէն յոգնած,
Շուտ արթնցաւ ու խաղաց,
Նախաճաշէն ետքը յանկարծ
Ժամացոյցը զրընգաց...



— Մա՛յրիկ, ժամը, ա՛յ, տասն է, տե՛ս,
Լսէ՛, լսէ՛, թին-թան-թին...
Ժամացոյցը, տե՛ս, կ՚ըսէ քեզ՝
Խնձոր մը տուր Ցաամիկին...:

ՀԱՆԵԼՈՒԿ Զ.— Մանուկ մը կար զօրեղ, հրեղէն,
Խմեց հատցուց ջուրը գետէն:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիրհել՝— Քնանալ:
Զրնգալ՝— Զրնգ-զրնգ ձայն հանել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՝— Ի՞նչ կ՚ընէ ժամացոյցը: — Որո՞նք են այս ոտանաւորին մէջ խօսող անձերը: — Ի՞նչ կ՚ըսէ մայրիկը· ի՞նչ կ՚ըսէ Ցաամիկը: — Եթէ դուք բլայիք Ցաամիկին տեղը, ի՞նչ պիտի ըսէիք: — Քանի՞ տեսակ ժամացոյցներ ծանօթ են ձեզի:

18· ՄԻԱՄԻՏ ՏՂԱՆ

Գրիգոր անուան գնաց փայտ բերելու: Բարձրացաւ ծառը եւ, ճիւղին վրայ նստած, սկսաւ կտրել ճիւղը:

Ծառին մօտէն ձիաւոր մը անցաւ: Վեր նայեցաւ ու ըսաւ·

— Ա՛յ ապա՛յ, վար պիտի իյնաս:

Ձիաւորը գնաց, իսկ Գրիգոր ճիւղը կտրեց եւ իրաւ ալ վար ինկաւ:

— Վա՜յ, — մտածեց միամիտ ապան, — ձիաւորը ամէն բան գիտէ: Վազեմ հարցնեմ՝ ի՞նչ է քրոջս անունը:

Վազեց հասաւ ձիաւորին ու հարցուց·

— Քեռի՛, ըսէ՛, ի՞նչ է քրոջս՝ Վարդուհիին անունը: writ

— Վարդուհի, — պատասխանեց ձիաւորը ժպտելով։

Տղան զարմացաւ։

— Է՜հ, գիտե՞ս, թէ քանի՛ եղբայր ունիմ ես։

— Մե՞ծ են եղբայրներդ։

— Վարոսը չուտով պիտի աւարտէ դպրոցը, Փանոսը այս ամեն դպրոց գնաց, իսկ Պետրոսը դեռ օրօրոցն է։

— Երեք եղբայր ունիս։

Գրիգորը աւելի զարմացաւ։

— Քեռի՛, այս ի՞նչ իմաստուն մարդ ես դուն. ամէն բան գիտես...

Ձիաւորը խնդաց եւ շարունակեց ճամբան։

ԱՌԱՆՑ։— Խելքը տարիքին մէջ չէ, գլխուն մէջ է։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քեռի։— *Մօրեղբայր։*
Իմաստուն։— *Խելացի։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ո՞ւր գնաց Գրիգորը։ Ի՞նչ ընելու։ — Ցանկարծ ո՞վ անցաւ հոնկէ։ — Ի՞նչ ըսաւ ձիաւորը։ — Ի՞նչ բանի մէջ է Գրիգորի միամտութիւնը։ — Կրնա՞ք ըսել, թէ ո՞րն է միամիտ բառին հականիշը։ — Թռչուններուն մէջ ո՞վ ամենէն աւելի միամիտ է։ — Կենդանիներուն մէջ ո՞վ ամենէն աւելի խորամանկ է։

---

19. ՈՒՐ ԳՆԱՑ

1

Փոքրիկ Վաչիկը մինակ էր սենեակին մէջ։ սեղանին վրայ-սեղան հագուստի խողանակը։ Ամբողջ քաշեց սեղանին տակէն, բարձրացուցվրան, տուաւ խողանակը եւ կ'ուզէր վար իջնել մէկ մրն ալ ի՞նչ սեղանէ...

Սիրուն, գոնդուրամակերով ոտայտմը կը նայէր իրեն, կարծես միւս սենեակէն։

— Վա՛հ, ա՞ս որտեղէն եկաւ։

Վաչիկ զարմացած նայեցաւ քիչ մը ու ժպտեցաւ։

Միւսն ալ հոնկէ ժպտեցաւ։

2

Վաչիկ շատ զոհ մնաց տակէ ու կանչեց։

— Եկուր խաղանք։ Ես այնպէ՞ս սիրուն ձի մը ունիմ...

Տղան ալ հոնկէ ձեւրով ըրաւ ու բան մը բաւ, բայց այնքան կամաց, որ Վաչիկ չլսեց։

— Ի՞նչ կ'բաես, ե՞ս գամ։ Զէ՛, չեմ ուզեր, դուն եկուր,— բաւ ու գլուխը շարժեց։

Ան ալ հոնկէ գլուխը շարժեց։

Այս շարժումին արդէն չհաւնեցաւ Վաչիկ, քիթ ու բերանը թթուեցուց եւ բռունցքը ցոյց տուաւ։

Ան ալ հոնկէ բռունցքը ցոյց տուաւ։

Վաչիկ բարկացաւ ու լեզու հանեց։ Ան ալ իսկոյն հոնկէ լեզու հանեց։

Այս անգամ կատղեցաւ Վաչիկ, խողանակը առաւ ու չբա՛խկ...պատէն կախուած հայելին կտոր-կտոր եղաւ, թափեցաւ գետին։

Մայրիկը աղմուկ լսելով ներս վազեց տեսնելու, թէ ի՞նչ էր պատահած. իսկ Վաչիկ ապշեր մնացեր էր աթոռին վրայ ու կը նայէր, թէ ո՞ւր կորսուեցաւ այն սատանայ տղան...։

ԱՌԱԾ.— Մեղմը լալով, պարտքը տալով։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանգուր.— *Ոլորուած, գոռոզ։*

Բռունցք.— *Գոց ձեռք (հարուածելու համար). կռուփ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ ըրաւ փոքրիկ Վաչիկը։ — Ի՞նչ էր տեսածը։ — Ի՞նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ երկու փոքրիկ տղոց միջեւ։ — Երկո՞ւ էին տղաքը իրապէս։ — Ինչո՞ւ բարկացաւ Վաչիկ։ — Դուք գիտէ՞ք, թէ ո՛ւր կորսուեցաւ միւս տղան։

ՊԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— (՝) Այս նշանը կը կոչուի ապաթարց, որ ջնջուած գիրի մը տեղ կը դրուի. օրինակ՝ կ'ուտեմ, կ'երգեմ, փոխանակ ըսելու կը ուտեմ, կը երգեմ։

20. ՊԶՏԻԿ ԶԱՐԱՃԱՅԻՆ

Է՜հ, ի՞նչ ընեմ, ձեռքս չէ
Խելօք նստիլ ու կարդալ.
Քիչ մը խօսիլ ու խնդալ
Կարծեմ սակայն դէշ բան չէ։

Լո՛ւռ... դանդակը կը զարնէ,
Պէտք է նստիլ աշխատիլ.
Պարոնդս հոն կեցեր է,
Պէտք չէ խնդալ ու խօսիլ։

Կը պատժէն դիս, կը սատեն,
Լաւ չէ խօսիլը, կ'ըսեն։
Բայց ի՞նչ ընեմ, ներեցէք,
Լուռ նստիլը ձեռքս չէ...։

ՀԱՆԵԼՈՒԿ Է.— Քանի՛ կտրեմ՝ կ'երկննայ,
Քանի՛ տաշեմ՝ կը հաստնայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սատեն.— *Յանդիմանել։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ կ'ըսէ փոքրիկ տղան։ — Դժուա՞ր է խելօք նստիլ ու աշխատիլ։ — Ե՞րբ արգիլուած է խօսիլը։ — Ուրիշ ի՞նչ յանցանքներու համար կը պատժուին տղաքը։ — Տիպար աշակերտ ըլլալու համար ի՞նչ պէտք է ընել։

21. Ո՞Վ ՇԱՏ ԼՈՅՍ ԿՈՒ ՏԱՅ

Լուսինը ըսաւ.

– Եթէ ամպերը արգելք չըլլան, ես ամբողջ աշխարհին լոյս կու տամ։

Ճրագը ըսաւ.

– Միայն անպիտան հովէն կը վախնամ ես։



Լամբը ըսաւ.

– Ես ձեզմէ աւելի պիտանի եմ պիշերը աշխատողներուն, դրող – կարդացողներուն. միայն թէ ինծի քարիւղ տան չարունակ։

Մոմը կը պատասխանէր ըսելու, թէ ինք աւելի օգտակար է, բայց այդ ժամանակ գրը-

գաց մեքենան եւ էլեկտրական լամբերը լուսաւորեցին փողոցն ու շէնքերու բոլոր անկիւնները։

Մոմը պլպլաց, ճրագը ծխաց, լամբը բարկութենէն ճաթեցուց իր վրայի ապակին, իսկ լուսինը արդէն շատոնց մտեր էր ամպերուն ետին։

Ի՞նչ պիտի պատահէր, եթէ այդ միջոցին արեւը ծագէր յանկարծ։

ԱՌԱԾ։– Նախ տես, ապա զարմացիր,
Նախ կեր, ապա գոհացիր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պիտանի։– *Գործող, օգտակար։*
Դրդռալ։– *Ագմուկով շարժիլ, աղմկել։*
Պլպլալ։– *Տկար լոյս արձակել։*
Ծխալ։– *Ծուխ հանել։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։– Ի՞նչ ըսին լուսինը, ճրագը, լամբը։ – Ի՞նչ պիտի ըսէր մոմը։ – Ի՞նչ պատահեցաւ այդ ժամանակ։ – Ի՞նչ եղան մոմը, ճրագը, լամբը, լուսինը։ – Ուրիշ ի՞նչ բան լոյս կու տայ։ – Մարդիկ ի՞նչ տեսակ լոյս կը գործածէին առաջ. հիմա՞։

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։– Ձեր այսօրուան դասին մէջ կէտադրութեան ի՞նչ նշաններ կան։ Դուք ձեզմէ նախադասութիւն մը գրեցէք եւ կէտադրութեան նշաններ դրէք ուր որ պէտք է։

22. Ան Ո՞վ է...

1

Առտուն դպրոց կ'երթամ պայուտակը ձեռքս։ Ճամբան մէկը գլխարկս վար կը ձգէ. կը վերցնեմ զայն ու եւեւ կը դառնամ՝ նայելու համար, թէ ո՛վ է։ Զարմանալի՛ բան, մարդ-մարդասանք չկայ։

Կ'ուզեմ ճամբաս շարունակել. մէկը եւ կը հրէ գիս եւ չի ձգեր, որ առաջ երթամ։ Եւեւ կը դառնամ նորէն, բայց դարձեալ մարդ չեմ տեսներ։

Մէկը կը սկսի գայլի պէս ոռնալ գլխուս վերեւ։ Վեր կը նայիմ. ծառին ճիւղերը կը շարժին, բայց շարժողը չ'երեւար։

Կը վազեմ առաջ, ասկայն շունչս կը կտրի. մէկը ուժով կը փաթթուի փէշերուս, կը մտնէ վերարկուիս մէջ՝ սուլելով ու ֆչալով։ Կը նայիմ շուրջս, բան մը չեմ տեսներ։

2

Աներեւոյթ ձեռք մը փոշիի ամպեր կը բարձրացնէ, ուել մը առած փողոցը կ'ուլէ կարծես, թուղթի կտորներ օդին մէջ կը թռցրնէ։ Հոս կը նայիմ, հոն կը նայիմ, նորէն բան մը չեմ տեսներ։

Յանկարծ մէկը գլխարկս կ'առնէ կը տանի։ Ան ո՞վ է, կը պոռամ զայրացած ու չորս կողմս կը նայիմ դարձեալ։ Կը տեսնեմ, որ գլխարկս ինք իրեն առաջ կը վազէ։ Ո՞վ ըրաւ, ո՞վ տարաւ. չեմ դիտեր ու չեմ դիտեր։

Եւ կրկին կը պոռամ, ձայնս քիչ մը աւելի բարձրացնելով.

— Ան ո՞վ է։

ԱՌԱԾ.— Բարկացոտը սուր կը նայի,
Կասկածոտը ծուռ կը նայի,
Կեղծաւորը վար կը նայի։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յշալ.— Ցրչ-ֆրչ ձայն հանել։
Անհերեւոյթ.— Զտեսնուող, չերեւցող։
Կրկին.— Նորէն, դարձեալ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞վ է, որ այս փոքրիկ տղուն գլխարկը վար կը ձգէ, գայլի պէս կ'ոռնայ, ծառին ճիւղերը կը շարժէ, ուժով կը փաթթուի անցորդներու փէշերուն։ — Ուրիշ ի՞նչ կ'ընէ այս անծանօթը։ — Ո՞ւր աւելի վտանգաւոր է ան, ծովուն մէ՞ջ, ցամաքին վրա՞յ, օդի՞ն թէ անապատին մէջ։ — Հասկցա՞ք, թէ ո՞վ է ան։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Մէկ կամ աւելի գիրեր երբ մէկ հնչումով կ'արտասանուին, վանկ կը կազմեն. օրինակ՝ գիրք, թուղթ։ Կան միավանկ, երկավանկ, եռավանկ եւ բազմավանկ բառեր։

23. ՏՈՐԻՑ, ՏՈՐԻՑ.

Սիրուն աղջիկ եմ,
Վարդի վենջիկ եմ,
Ոսկեզօծ մատիկ,
Կարապի վրդիկ...
Տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր...
Բուռ մը կրակ եմ,
Մութ տան ճրագ եմ,
Կամար ունքերով,
Սև–սև աչքերով
Սիրուն աղջիկ եմ,
Վարդի վենջիկ եմ...
Տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր...:

ՀԱՆԵԼՈՒԿ Ը.— Մէկը կայ, որ կը կենայ
Լիճին վրայ ու ծովին,
Ովկիանոսին կամ գետին,
Բայց չի թրջիր բնաւին:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վենջիկ.— *Պզտիկ փունջ, ծաղիկի կապոց:*
Ոսկեզօծ.— *Ոսկիով պատած, ոսկիով ջրած:*
Կարապ.— *Ջրային թռչուն մը:*
Բուռ մը.— *Ափ մը:*
Կամար.— *Աղեղի ձեւ ունեցող:*
Ունք.— *Ցանք:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Փոքրիկ աղջիկը ինչի՞ կը նմանցնէ ինքզինքը: — Ի՞նչ կը նշանակէ «բուռ մը կրակ եմ»: — Ի՞նչ իմաստով գործածուած է «մութ տան ճրագ եմ» խօսքը: — Ի՞նչպէս կ'ըլլայ կարապի վիզը, կամար յօ՞նքը: — Փոքրիկ աղջիկը ինչո՞ւ միշտ ինքզինքի կը գովէ: — Մեծ աղջիկներն ալ կրնա՞ն նոյն բանը ըսել իրենց համար:

24. ՊԵՏԻԿԻՆ ԴԵՂԱՏՈՒՄԸ

1

Լուսիկը արդէն առողջացած էր. կ'ուզէր ելլել անկողինէն, բայց բժիշկը թոյլ չէր տար: Այսօր վերջին անգամ կը սպասէին բժիշկին:

Յանկարծ՝ թը՛խկ – թը՛խկ... դուրսէն դուռը գարկին:

– Հրամեցէք, բժի՛շկ, – բաւ Լուսիկին մայրը եւ սկսաւ հիւանդին վերմակը շտկել:

Ներս մտաւ Լուսիկին եղբայրը՝ փոքրիկ Պետիկը: Հագած էր հօրը երկար վերարկուն, ձեռքը առած էր անոր գաւազանը եւ աչքին դրած էր պապիկին ակնոցները:

Բոլորը խնդացին, բայց Պետիկը կարեւորութիւն չտուաւ: Բժիշկի պէս գլխով բարեւեց եւ հարցուց.

– Հիւանդս ի՞նչպէս է:

Ըսաւ եւ ախոռը քաշեց հիւանդին մահճակալին մօտ, երկու անգամ հագաց ու նստաւ:

ժամացույցի տեղ դրպանէն հանեց տատիկին ասեղի տուփը, բռնեց հիւանդին բազկերակը, հանեց նաեւ երկար գրչատուփը, մէկ ծայրը դրաւ ականջին, իսկ միւս ծայրը՝ Լուսիկի կուրծքին եւ ուշի – ուշով քննեց հիւանդը:

2

– Հիւանդը ի՞նչպէս է, – հարցուց մայրը ժպտելով:

– Լաւ է, միայն թէ չմսեցնէ՛ք, – պատասխանեց փոքրիկ բժիշկը, ապա անցաւ սեղանին առջեւ եւ սկսաւ դեղատոմս գրել:

– Տեսէ՛ք, երկու տեսակ դեղ գրեցի, մէկը՝ ծիրանի անոյշ է. ամէն անգամ պէտք է երեք թէյի գդալ առնէ առաւ եւ իրիկուն, ճաշէն առաջ. իսկ միւսը՝ շաքարի կլոր դեղահատեր են. երկու ժամը անգամ մը չորս հատ պէտք է առնէ:

– Շաքարի դեղահատերը աւելորդ են, պարո՛ն բժիշկ, – խնդուքը հազիւ զսպելով ըսաւ մայրը:

Փոքրիկ բժիշկը նեղը ինկաւ, բայց պատասխանը դաւաշուտ մը.

– Ը՛... ը՛... շաքարի դեղահատերը շատ օգտակար ու քաղցր են. եթէ Լուսիկը չկրնայ բոլորը առնել, կէսը թող տայ եղբօրը՝ Պետիկին:

Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ:

Յանկարծ դուռը բացուեցաւ ու ներս մտաւ բժիշկը:

Մեր Պետիկը դեղատոմսը առաւ և պո՛ւ... փախաւ դուրս:

ԱՌԱՆ.– Գնա մեռիր,
Եկուր սիրեմ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեղատոմս.– *Դեղագիր, որուն մէջ բժիշկին կողմէ կը նշանակուին հիւանդին տրուելիք դեղերը:*
Բազկերակ.– *Բազուկի հաստ երակը:*
Ծիրան.– *Ոսկեգոյն համեղ պտուղ մը:*
Դեղահատ.– *Դեղի հատիկ. հապ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Ո՞վ էր Պետիկը. օր մը ի՞նչ ըրաւ: – Կրնա՞ք նկարագրել բժիշկի մը այցելութիւնը հիւանդին: – Ի՞նչ պատուէրներ տուաւ Պետիկ իր հիւանդ քրոջը համար: – Ո՞րն է այս պատմութեան ամենէն զուարճալի կողմը:

25. Ի՞ՆՉՆ Է ԼԱՒԸ

Կատուն ըսաւ.

– Ամենէն լաւը կաթն է. ըսենք՝ մուկն ալ դէշ չէ, սակայն բռնելը դժուար է:

Աքլորը, որ թառին վրայ կեցած մտիկ կ՚ընէր, ըսաւ.

– Կաթն ալ բա՞ն է. լաւը այն է, որ ափ մը կուտ ըլլայ:

Շունը, լեզուն դունչին քսելով, ըսաւ.

– Դուք ալ բանի անուն տուիք հա՛. ամենէն լաւը ո՛չ կաթն է, ո՛չ կուտը. ոսկորն է, ոսկո՛րը:



Այծը ա՛լ չհամբերեց. մօրուքը վեր վար շարժելով՝ ըսաւ.

– Ինծի որ հարցնէք, կաթէն, կուտէն ու

ոսկորէն աւելի լաւ է խուրձ մը խոտը:

Իսկ ի՞նչ պիտի ըսէր փոքրիկ Արմիկը, եթէ ներկայ ըլլար այս խօսակցութեան:

ԱՌԱԾ.– Ծուռ նստինք, շիտակ խօսինք:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աքլոր.– Աքաղաղ:

Թառ.– Թառելու, հանգչելու տեղ (հաւերու եւ թռչուններու համար):

Դունչ.– Կենդանիներու կզակը:

Խուրձ.– Կապոց, արցակ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Ի՞նչ ըսաւ կատուն. աքլո՞րը. շո՞ւնը. ա՞յծը: – Այս կենդանիներէն ո՞րը մսակեր է, ո՞րը բուսակեր: – Ուրիշ մսակեր կենդանիի անուն գիտէ՞ք: – Ո՞վ է, որ թէ՛ մսակեր է եւ թէ բուսակեր: – Իսկ ի՞նչ բան կը սիրեն բոլորն ալ, – կատուն, աքլորը, շունը, այծը: – Ի՞նչ պիտի ըսէր առիւծը, եթէ ներկայ ըլլար կենդանիներու խօսակցութեան:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.– Մէկ վանկով արտասանուած բառերը միավանկ կը կոչուին. օրինակ՝ դաս, շուն. երկու վանկովները՝ երկավանկ, օրինակ՝ մատիտ, տետրակ. երեք վանկովները՝ եռավանկ, օրինակ՝ դասարան, ուսուցիչ:

26. ԳԱՌԸ

Պարտէզին մէջ ծառ մը կար,
Ծառին տակը գառ մը կար.
Գառին բուրդը ճերմակ էր:
Տէրը եկաւ ու խուզեց,
Գառին ձայնը չլսեց:



Հոս խուզեց,
Հոն խուզեց,
Առաւ բուրդէն,
Առաւ մորթէն.
Շատ չդնաց բարակէն,
Առաւ քիչ մ'ալ դրմակէն:
Բերաւ չինեց լաւ վերմակ,
Վրան քաշեց ճեփ-ճերմակ,
Ինկաւ անհոգ քընացաւ.
Գառը դուրսը մրսեցաւ:

ՀԱՆԵԼՈՒԿ Թ.— Նստիմ՝ կը կարնանայ,
Կանգնիմ՝ կ'երկնանայ,
Քալեմ՝ հետս կու գայ,
Քշեմ՝ չ'երթար:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խուզել.— *Անասուններու մազը կամ բուրդը կտրել:*
Դրմակ.— *Ոչխարի պոչ:*
Անհոգ.— *Հոգ չունեցող:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Գառին տէրը ի՞նչ ըրաւ: — Ինչո՞ւ խուզեց բուրդը: — Առանց բուրդի՞ մնաց գառը: — Ի՞նչ է դրմակը: — Ի՞նչ կը հանեն անկէ եւ ինչի՞ կը գործածեն: — Գառներուն բուրդը ճերմա՞կ կ'երլայ միայն: — Վերմակէն զատ ուրիշ ինչե՞ր կը շինուին բուրդով:

27· ԱՍԱՆԿ ԱԼ ԴԱՍԸՆԿԵ՞Ր...

1

Ցամիկ յոգներ էր թուարանութեան խնդիրները լուծելէ, ուզեց քիչ մը հանգստանալ։ Վար դրաւ մատիտը, տետրակը մէկ կողմ նետեց եւ մօտեցաւ Ժուժուին։

Ժուժուն, տան շունը, ճերմակ մազերով եւ խելացի աչքերով, փռուեր էր պատին տակ ու դունչը դրեր առջեւի թաթերուն վրայ։

— Ըսէ՛ նայիմ, վեց անգամ հինգ քանի՞ կ՚ընէ, — հարցուց Ցամիկ Ժուժուին։

Բայց Ժուժուն պոչը շարժեց միայն եւ հարցական ձեւով նայեցաւ Ցամիկին։

— Ի՞նչ երեսս կը նայիս յիմար — յիմար· չե՞ս գիտեր, չե՞ս յիշեր, — կրկնեց Ցամիկ զժգոհ։

2

Շունը յանցաւորի պէս քաշեր էր պոչը եւ ուշադիր կը հետեւէր Ցամիկի շարժումներուն։

Ցանկարծ լայն մը բացաւ բերանը եւ երկա՛ր յօրանջեց։

— Չէ՛, — խնդաց Ցամիկ, — դուն ալ շատ ընդունակ չես երեւար թուարանութեան։

Ժուժուն կը շարունակէր յօրանջել եւ մռլտալ· կարծես բան մը ըսել կ՚ուզէր, բայց չէր կրնար։

ԱՌԱԾ — Շունը յիշէ, փայտը քաշէ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հարցական — *Բան մը հարցնելու ձեւով։*
Ընդունակ — *Յարմարութիւն ունեցող· կարող։*
Յօրանջել — *երեւակալ, բերանը լայն-լայն բանալ։*
Մռլտալ — *Մոմոալ, քթին տակէն ձայներ հանել։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ինչէ՞ն յոգներ էր Ցամիկ։ — Ի՞նչ հարցուց Ժուժուին։ — Պատասխան մը տուա՞ւ Ժուժուն։ — Ի՞նչ էր Ցամիկի դժգոհութեան պատճառը։ — Ի՞նչ կը սպասէր շունէն։ — Ի՞նչ պիտի ըսէր Ժուժուն, եթէ խօսիլ գիտնար։ — Շուներու գլխաւոր յատկութիւնը ի՞նչ է։ — Կրնա՞ք նկարագրել շուն մը։

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Երեքէն աւելի վանկ ունեցող բառերը ընդհանրապէս կը կոչուին բազմավանկ· ուրախութիւն, ծափահարութիւն, նախապատրաստական բազմավանկ բառեր են։

28· ԱՐՋՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

1

Արջը ըսաւ մեղուին.

— Ի՞նչ կը տրտրզաս չարունակ. ըսածդ ալ բա՛ն մը ըլլար: Ամէն մէկ ելնիդ կաթիլ մը մեղր կը չինէք, ան ալ դուք կ'ուտէք:

— Մարդո՛ւն հարցուր, — ըսաւ մեղուն, — ան շատ կը սիրէ մեղրը:



«Զի գիտէր, որ ես ալ կը սիրեմ անիծեալ մեղրը», — մտածեց արջը ու հարցուց.

— Հաւատաս չի գար: Կրնա՞մ անդամ մը տեսնել ձեր փեթակը:

— Ինչո՞ւ չէ, կը բաւէ որ դուն քեզ խելօք պահես:

— Կը պահեմ, — պատասխանեց արջը եւ օրօրուելով գնաց փեթակին քով:

2

Բայց երբ ներս նայեցաւ, բերնին ջուրերը վազել սկսան: Թաթը խոթեց փեթակին մէջ՝ քիչ մը մեղր առնելու համար. սակայն փոքրիկ մեղուները այնպէս մը խայթեցին, որ ստիպուեցաւ ետ քաշուիլ եւ գլուխը առած փախաւ:

Անկէ ետք միշտ սարսափով կը յիշէր մեղուները եւ կ'ըսէր ինք իրեն.

— Չէ՛, եղբայր, ասոնք փոքր են, բայց միացած են: Դժուար է ասոնց դէմ երթալ:

ԱՌԱԾ·— Միութիւնը զօրութիւն է:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տրտրզալ·— *Տրդ-տրդ ձայն հանել:*
Փեթակ·— *Մեղուներու բոյն:*
Թար·— *Ձեռք, սաք (կենդանիներու):*
Սարսափ·— *Մատիկ վախ, սոսկում:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·— Արջը օր մը ի՞նչ ըսաւ մեղուին: — Ի՞նչ պատասխան ստացաւ անկէ: — Վերջը ի՞նչ եղաւ: — Արջը ինչո՞ւ չկրցաւ պահել իր խոստումը: — Մեղուները ի՞նչ երին: — Ի՞նչ ըսաւ արջը ինք իրեն: — Աչս պատմութենէն ի՞նչ եզրակացութիւն կրնանք հանել:

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ·— Քանի՞ վանկ ունին հետեւեալ բառերը·— անգդ, վազր, սանտր, աստղ:

29· ՓՈՔՐԻԿ ՍՆԱՓԱՌԸ

Սընափառ մը կար փոքրիկ,
Հագիւ վեց էր իր տարիք։
Օր մը ըսաւ ինք իրեն·
«Ես մեծ պարոն եմ արդէն»։

Վեհ քայլերով դընաց ան,
Առաւ պապուն դաւազան,
Եւ հօրը մեծ գլխարկին
Մէջ թաղուեցաւ կիսովին։

Երբ դուրս ելաւ, փողոցին
Քարերն անդամ դողացին·
Մեծ–մեծ մարդկեր բարեւեց՝
Իր տարիքովն հագիւ վեց։

Անցորդները, քիչ մ՚անդին,
Քահքահ մրն է վրդովեցին·
Ըսին· «Գլխա՛րկ պատուական,
Ո՞ւր կը տանիս այս տղան»։

ՀԱՆԵԼՈՒԿ Ժ·— Երբ ըսեմ՝ «ե՛կ, ե՛կ», չի գար,
Երբ ըսեմ՝ «մի՛ գար», կու գայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սնափառ·— Պարապ. բաներով հպարտացող, սնապարծ։
Վեհ·— Մեծ, փառաւոր։
Կիսովին·— Կիսով չափ, միայն կէսը։
Քահքահ·— Բարձրաձայն խնդուք։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·— Փոքրիկ սնափառը ի՞նչ ըսաւ օր մը ինք իրեն։ — Ցետոյ ի՞նչ ըրաւ։ — Փողոցին քարերը ինչո՞ւ դողացին։ — Անցորդները ինչո՞ւ խնդացին· ի՞նչ ըսին։ — Ի՞նչ բանի մէջ էր փոքրիկ տղուն սնափառութիւնը։

30· ՀՈՒՐԻԿԻՆ ԱՂՕԹՔԸ

Փոքրիկ Հուրիկը կը պատրաստուէր պառկիլ։ Մայրիկը գրկեց զինք, համբուրեց ու ըսաւ·

— Աղօթքդ չմոռնա՛ս։

Հուրիկ ծունկի եկաւ անկողնին մէջ, բարձրաձայն «Հայր մեր» մը ըսաւ ու ձեռքերը իրարու միացնելով յարեց·

— Աստուա՛ծ, դուն պահէ հայրիկս, մայրիկս, Նունիկը, Աշխէնը։

— Ալ ուրիշ ո՞վ, — հարցուց մայրիկը ժըպտելով։

— Պապիկս, մամիկս, հօրեղբայր Վահանը, Լեւոնը, Վիգէնը, Կուտիկը···

Լեւոնն ու Վիգէնը իր ընկերներն էին, իսկ Կուտիկը իրենց տան շունն էր։

Ագօթքը վերջացած համարելով՝ Հուրիկ ուրախ զուարթ մտաւ վերմակին տակ։

2

— Ա՛խ զուն, անպիտա՛ն, Կուտիկն ալ մեր շարքը գրիր հա՞, — խնդաց մայրը աղջկան գլուխը համբուրելով։

— Կարելի չէ՞, մայրիկ, — զարմացաւ Հուրիկ։ — Է՛, լաւ, Կուտիկը թող մնայ, — աւելցուց խոյն։ — Թո՛ղ, Աստուած, Կուտիկը թո՛ղ։

Մայրը նորէն խնդաց, գրկեց ու նորէն համբուրեց փոքրիկ Հուրիկը եւ դուրս ելաւ։

Աչքերը առաստաղին յառած՝ Հուրիկ սկսաւ մտածել. «Ինչո՞ւ Աստուած պիտի չպահէ Կուտիկը»։ Մտածե՛ց, մտածե՛ց, գլուխը բարձրացուց քիչ մը եւ չշնչաց սենեակին լռութեան մէջ.

— Չէ՛, Աստուած, չէ՛, Կուտիկն ալ պահէ, բայց մայրիկիս չըսե՛ս...։

Ու նորէն մտաւ վերմակին տակ։

ԱՌԱՆ՝— Լաւութիւն ըրէ եւ ջուրը նետէ.
Զուկը չիմանայ, Աստուած կ'իմանայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարք՝— *Կարգ։*
Առաստաղ՝— *Ծածկ, ձեղուն։*
Յառել՝— *Աչքերը բանի մը վրայ անկած նայիլ։*
Շշնջալ՝— *Փսփսալ, մրմնջել։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՝— Պառկելու տեղն ի՞նչ ապօրէ բրաւ Հուրիկ։ — Ինչո՞ւ ուզեց, որ Աստուած Կուտիկն ալ պահէ։ — Մայրիկը ի՞նչ դիտողութիւն բրաւ։ — Յետոյ ի՞նչ մտածեց Հուրիկ։ — Ինչո՞ւ շշնջաց՝ «մայրիկիս չըսե՛ս»։

ՊԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝— Ձեր այսօրուան դասին մէջ ցոյց տուէք երկու միավանկ, երկու երկավանկ եւ երկու եռավանկ բառեր։ Դուք ձեզմէ զատէք չորս վանկով բառ մը։

31· ՎԱ՛ՂԸ, ՎԱ՛ՂԸ

1

Առաւն, դուլպանները հագնելու ատեն, Զարուհի տեսաւ, որ անոնցմէ մէկուն կրունկը ծակեր է: Ծակը հագիւ գնդասեղի մը գլխուն չափ կար· ուստի՝ Զարուհի ըսաւ անհոգութեամբ·

– Վնաս չունի, դեռ շատ խոշոր չէ· վա՛ղը կը լեցնեմ:

Միւս օր ծակը եղաւ սիսեռի մը չափ· Զարուհի տեսաւ, բայց նորէն հոգը չընրաւ եւ կրկնեց·

– Թող մնայ հիմա, վա՛ղը կը կարեմ:

Ծակը երթալով խոշորցաւ, ու երբ վերջապէս Զարուհի որոշեց կարկաեալ դուլպան, արդէն ուշ էր· կարկաելիք տեղ չէր մնացած:

Այսպէ՞ս պիտի բլլար, եթէ առաջին օրէն լեցնէր փոքրիկ ծակը, որ հագիւ գնդասեղի մը գլխուն չափ էր:

2

Զարուհիին դասընկերները, երբեկուր ատեն վերադառնալէ ետք, կը լուացուէին նախ, թեթեւ նախընթերեք մը կ՚ընէին, կը

հանդչէին քիչ մը, ապա կը սկսէին յաջորդ օրուան դասերը պատրաստել:

Զարուհի այդպէս չէր ըներ:

– Ես վաղը կը պատրաստեմ, հիմա քիչ մը խաղամ,– կ՚ըսէր:

Վաղը կ՚ըլլար եւ դասերը չէր գիտնար: Միշտ այսպէս էր ան· սովորութիւն ըրեր էր ըսելու·

– Վաղը կը կարեմ, վաղը կը սորվիմ, վաղը կը՛ գրեմ:

Օր մը Զարուհի հարցուց իր մէկ դասընկերուհիին·

– Դուն ի՞նչպէս կ՚ընես, որ ամէն օր դասերդ կը գիտնաս:

Դասընկերուհին պատասխանեց·

– Ես երբեք «վա՛ղը, վա՛ղը» չեմ ըսեր: Դուն ալ ինծի պէս ըրէ եւ տես, թէ ի՛նչ լաւ կ՚ըլլայ:

Զարուհի որոշեց իր դասընկերուհիին պէս ընել եւ այլեւս ընաւ «վաղը, վաղը» չըսել:

Իրա՛ւ ալ, շատ չանցած, եղաւ գպրոցին առաջին աշակերտուհիներէն մէկը:

ԱՌԱԾ·– Այսօրուան գործը վաղուան մի՛ ձգեր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կրունկ·– Ոտքին հաւուի կողմը:

Նախընթերիք·– Ճաշ՝ երեկոյեան ընթրիքէն առաջ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Առատ մը ի՞նչ տեսաւ Զարուհի։ — Ի՞նչ ըսաւ ինք իրեն։ — Ի՞նչ պէտք է ընէր։ — Ինչո՞ւ մեծցաւ զուլպայինն ծակը։ — Ի՞նչ կ'ընէին Զարուհիին դասընկերուհիները։ — Ինք ինչո՞ւ չէր գիտնար դասերը։ — Ի՞նչպէս հասկցաւ իր սխալը։ — Ի՞նչ պէտք է ընել յառաջադէմ աշակերտ մը ըլլալու համար։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Միավանկ, երկավանկ, եռավանկ բառեր գտէք եւ խօսքեր կազմեցէք անոնցմով, հետեւեալ օրինակին համաձայն։ «Եղբայրս դաս կը պատրաստէ»։

32։ ԱՐԱՔՍԸ ԿՈՒ ԳԱՅ



Արաքսը կու գայ բարձրը սարերէն,
Փրփուրը բերնին, ազմուկ–չառաչով։
Արաքսը կու գայ խոր խոր ձորերէն՝
Շղթայուած է պէս կանչ ու մրռունչով։։։։

Զա՛ն Արաքս, Արա՛քս, հայրենի՛ մեր գետ,
Զուրերդ անոյշ են, հոսուն ու վրճիտ։
Հեռու եմ քեզմէ, բայց մրքով քեզ հետ,
Կարօտ եմ տեսքիդ, ազմուկ–չառաչիդ։
Ա՜խ, ինչքա՜ն կ'ուզեմ ունենալ թեւեր,

Երթալ հայրենի դաշտերուն մօտիկ,
Ըլլալ Արաքսի ջուրերուն ընկեր,
Խաղալ ու երգել՝ զերդ ուրախ թռչնիկ։

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԱ։— Բերան ունի՝ լեզու չունի,
Ականջ ունի՝ հոգի չունի,
Փոր ալ ունի՝ աղիք չունի։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շառաչ։— *Սաստիկ, ուժգին ձայն։*
Մռունչ։— *Գոռում–գոչում։*
Զերդ։— *Իբրեւ, նման, կը գրուի նաեւ զերթ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ուրկէ՞ եւ ի՞նչպէս կու գայ Արաքսը։ — Ինչո՞ւ «հայրենի գետ» կ'ըսեն անոր։ — Ո՞ւր կը գտնուի եւ ո՞ւր կը թափի։ — Ի՞նչ կը նշանակէ «մտքով քեզ հետ եմ»։ — Ուրիշ ի՞նչ բաներու կարօտը կը զգաք օտարութեան մէջ։

33. ՀԻՄԱ՛, ՄԱՅՐԻԿ...

1

Փոքրիկ Սեղան կ՚օրօրուէր պարտէզը, ծառէն կախուած օրօրոցին մէջ։ Յանկարծ լսեց մայրիկին ձայնը.

— Ներս եկուր, աղջի՛կս, չո՛ւտ ըրէ։

— Հիմա՛, մայրիկ, — եղաւ փոքրիկ աղջիկան պատասխանը։

Եւ շարունակեց օրօրուիլ։

Փողոցին դրան առջեւ կեցած էր գեղեցիկ ինքնաշարժ մը։ Դրացի Յակոբեաններն էին. եկեր էին, որ Սեղան ալ անոնց տանին խաղալու, իրենց աղջկան՝ Սոնային հետ։

Սեղային մայրը քանի մը վայրկեան ի զուր սպասելէ ետք, խնդրեց դրացիներէն, որ այլեւս չսպասեն ու երթան իրենց պտոյտը ընելու։

— Ասիկա լաւ դաս մը կ՚ըլլայ մեր Սեղային համար, — աւելցուց ան։

Յակոբեանները արդէն մեկնած էին, երբ Սեղա ուզեց հասկնալ, թէ ինչո՞ւ մայրիկը կանչեր էր զինք։ Ու երբ իմացաւ պատճառը, շատ տխրեցաւ. բայց ի՛նչ օգուտ, եղածը եղած էր։

2

Շարաթ մը ետք, իր պուպրիկներուն հետ խաղացած տանն, Սեղա լսեց, որ մայրիկը նորէն զինք կը կանչէ։

— Հիմա՛, մայրիկ, — ըսաւ դարձեալ անհոգ աղջիկը եւ շարունակեց իր խաղը։

Այս անգամ ալ մօրեղբայրն էր եկողը։ Եկեր էր, որ շարժապատկերի ներկայացումի մը տանի զինք։ Երբ վերջապէս ներս գնաց հասկնալու, թէ ի՛նչ կ՚ուզէին իրմէ, մօրեղբայրը արդէն ձգեր գացեր էր երկար սպասելէ ետք։

Յանցանքը որո՞ւնն էր սակայն։ Սեղա զղջաց իր սխալը եւ որոշեց այլեւս չկրկնել զայն։

— Մայրի՛կ, — ըսաւ արցունքները սրբելով, — ա՛լ տակէ ետքը ինաւ պիտի չուշանամ, «հիմա՛, մայրիկ» ըսածիս պէս խսկոյն քովդ պիտի վազեմ։

Սեղա պահեց իր խոստումը։ Եւ ա՛յնքան երջանիկ էր տատը համար։

ԱՌԱՆԾ — Գուն Քուն, բախտդ արքուն։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ինքնաշարժ։— *Ինք իրեն շարժող կառք (սթռ)։*
Շարժապատկեր։— *Շարժող պատկեր (սինեմա)։ Կ'ըսուի նաեւ շարժանկար։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ի՞նչ տեսակ աղջիկ էր Սեդա։ — Պատժուեցա՞ւ իր անհոգութեան համար, ի՞նչպէս։ — Վերջապէս ի՞նչ խոստացաւ մայրիկին։ — Պահե՞ց իր խոստումը։ — Դուք ալ զգա՞ծ էք շարժապատկերի ներկայացումներու։ — Ո՞րը կը նախընտրէք, ինքնաշարժով պտո՞յտը թէ շարժապատկերի ներկայացումը։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Հայերէնի մէջ թիւը երկուք է, եզակի եւ յոգնակի։ Անուն մը եզակի է, երբ միայն մէկ անձ, մէկ անասուն եւ մէկ իր կը ցուցնէ։ օրինակ՝ հովիւ, ոչխար, արտ։

34. ՈՍԿԻԻՆ ՈՒ ԵՐԿԱԹԻՆ ՎԷՃԸ

Անգամ մը ոսկին ու երկաթը իրարու հետ վէճի բռնուեցան։

— Ես ամենէն ընտիր մետաղն եմ։ — Կ'ըսէր ոսկին։— ամէնքը կը սիրեն ու կը փնտռեն զիս։ Ինձմով կը շինեն զրամը, ինձմով կը շինեն նաեւ գեղեցիկ շղթաներ, սիրուն մանեակներ, օղեր եւ ուրիշ շատ զարդեղէններ։ Է՛հ, ի՛նչ երկարեմ, եւ ամբողջ աշխարհը կրնամ գնել։

— Շատ մի՛ պարծենար, — պատասխան տուաւ երկաթը։ — Իրաւ է, որ մարդիկ շատ երես կու տան քեզի, բայց իմ ըրածներէս ո՛չ մէկը կրնաս ընել դուն։

— Ես ամենէն յարգի մետաղն եմ, — կըրկնեց ոսկին գոռոզութեամբ։

— Բայց տուն շինելու համար մարդիկ տեսակ տեսակ մեքենաները ոսկիով չեն շիներ։ Ասկէ զատ, — աւելցուց երկաթը, — եթէ մարդիկ ինձմով չշինեն ըրիչը, ի՞նչպէս պիտի հանէին քեզ հողին տակէն։

Ոսկին ուզեց պատասխան տալ, բայց ըսելու բան չգտաւ։

ԱՌԱԾ։— Ոսկին մանր է,
Գինը ծանր է։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընտիր։— *Ընտրուած, լաւագոյն, ազնիւ տեսակ։*
Մանեակ։— *Ոսկիէ կամ արծաթէ շինուած զարդեղէն։*
Գոռոզութիւն։— *Հպարտութիւն, մեծամտութիւն։*
Ըրիչ։— *Երկաթէ գործիք՝ հող փորելու համար։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ի՞նչ էր տեղի ունեցածը։ — Ի՞նչ ըսաւ ոսկին։ ի՞նչ պատասխան տուաւ երկաթը։ — Ինչո՞վ կը շինեն բահը, կացինը, ուրագը, մուրճը։ — Ուրիշ ի՞նչ բաներ կը շինեն երկաթով։ — Ոսկի՞ն իրաւունք ունէր թէ երկաթը։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Անուն մը յոգնակի է, երբ մէկէ աւելի անձ, անասուն կամ իր կը ցուցնէ, օրինակ՝ հովիւներ, ոչխարներ, արտեր։

35· ԳԵՏԱԿԸ

Ո՞ւր կը վազես այդպէս արագ,
Ա՛յ դուն վըճիտ, սիրուն գետակ·
Կանգ առ, խաղանք այս ծառին տակ:

– Զէ՛, փոքրիկըս, երթամ պիտի·
Տե՛ս, ջաղացքը դիւղին մօտի,
Պէտք է ուժ տամ, որ պտըտի:

Իսկ հովտին մէջ, այն լերան մօտ,
Ինձ կը սպասեն ծաղիկ ու խոտ
Եւ խո՛նջ, ծարա՛ւ նախիրն ու հօտ:

Դէ՛, կը տեսնե՞ս, մընաս բարով,
Ճամբաս լեցուն՝ հապար գործով,
Դադար չունիմ ես մինչեւ ծով: –

Ըսաւ գետակն արագ–արագ,
Վազեց, մըտաւ այն լերան տակ՝
Իր ջուրերուն կանչովն յատակ:

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԲ·– Ոտքեր չունի՝ կը քալէ,
Բերան չունի՝ կը կլէ,
Դադար չունի դառնալէ:

ԲԱՌԵՐ ՅԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գետակ·– Պզտիկ գետ:
Վճիտ·– Մաքուր, յատակ:
Ջաղացք·– Այն տեղը, ուր ցորենը աղալով ալիւր կը շինեն: Կ'ըսուի նաեւ Ջրաղաց:
Հովիտ·– Երկու լեռներու միջեւ տարածուած դաշտ:
Խոնջ·– Յոգնած:
Նախիր·– Կովերու, եզներու խումբ:
Հօտ·– Ոչխարներու խումբ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·– Փոքրիկ աղան ի՞նչ ըսաւ գետակին: – Ինչո՞ւ կ'ուզէր, որ կանգ առնէր անիկա: – Ի՞նչ պատասխանեց գետակը: – Ինչո՞ւ իրեն կը սպասէին ծաղիկները, խոտերը, նախիրն ու հօտը: – Որո՞նք են գետին օգուտները· վնասներ ալ ունի՞: – Ձեր բնակած երկրին մէջ ի՞նչ նշանաւոր գետեր կան: – Ո՞րն է Հայաստանի «մայր գետ»ը:

36. ՋՈՒՐԻՆ ՕԳՈՒՏՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ

— Գրեցէ՛ք, ապա՛ք, ջուրի օգուտներուն եւ վնասներուն մասին զատ-զատ, — ըսաւ ուսուցիչը աշակերտներուն:

Ոմանք գրեցին օգուտներուն մասին, ոմանք ալ՝ վնասներուն:

Ահա Ռուբէնին գրածը.

«Ջուրը օգտակար է, որովհետեւ կը խմենք զայն. անով կը լուացուինք, կերակուր կ'եփենք, ջրաղաց կը բանեցնենք, բոյսեր կը ջրենք, հրդեհ կը մարենք»:

Ահա՛ նաեւ Զաւէնին գրածը.

«Ջուրը վնասակար է, որովհետեւ մարդիկ կը խեղդուին անոր մէջ: Անիկա հիւանդութիւններ կը տարածէ, նաւեր կը խորտակէ, ճահիճներ կը ձեւացնէ, փողոցներ կը ցեխոտէ»:

Ռուբէնի եւ Զաւէնի ընկերները չէին գիտեր, թէ ո՛ր մէկուն իրաւունք տան: Բայց երբ ուսուցչին բացատրութիւնները լսեցին, հասկըցան որ ջուրին օգուտները խիստ շատ են, իսկ վնասներէն կարելի է խուսափիլ, եթէ զգոյշ ըլլանք եւ հոգ տանինք անոնց առջեւն առնելու:

ԱՌԱԾ — Բաժակ մը ջուր,
Ով ուզէ՝ տո՛ւր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ոմանք — *Մէկ քանիներ:*
Խորտակել — *Բանդել, կործանել:*
Ճահիճ — *Ցեխոտ եւ կայուն ջուրի տարածութիւն:*
Խուսափիլ — *Խոյս տալ, փախչիլ, հեռու մնալ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ուսուցիչը ի՞նչ ըսաւ աշակերտներուն: — Ի՞նչ գրեց Ռուբէն. ի՞նչ գրեց Զաւէն: — Որո՞ւն իրաւունք տրուաւ ուսուցիչը: — Ձեր կարծիքով ջուրին օգուտնե՞րը աւելի շատ են թէ վնասները: — Ո՞ր ջուրերը կը խմուին: — Ծովու ջուրէն ի՞նչ օգուտներ կրնանք ձեռք բերել:

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Ձեր տետրակին մէջ գրեցէք ջուր, երկ, տուն, ձեռք, երես, վարդ, կրակարան, մայրիկ, նախանաշ, ընկեր, օգուտ: Այս բառերը եզակի՞ են թէ յոգնակի. ինչո՞ւ:

37. ՋՈՒՐԻՆ ԵՐԳԸ

Ես յատակ ջուրն եմ, ես գով ջուրն եմ. ի՞նչ պիտի ընէին մարդիկ, եթէ ես չըլլայի:

Առաւօտէն մինչեւ իրիկուն կը հոսիմ աղբիւրէն. ո՛չ հանգիստ ունիմ, ո՛չ դադար: Կ'ելթիամ առուները՝ ամիսը-ամիսը, կը լուսամ աղտոտ ձեռքերը ու կաթի պէս ճերմակ կ'ընեմ. կը լուսամ մրոտ երեսները ու վարդի պէս կարմիր կ'ընեմ:

Տեսէ՛ք, ասոնը դրուած է կրակարանին վրայ, ու ես կ'եռամ անոր մէջ, որպէս զի մարդիկը պատրաստէ նախաճաշ, ճաշ եւ ընթրիք:

Կը հոսիմ, կ'ելթիամ պաշտելը. կը ջրեմ ծառերը, ծաղիկները, խոտերն ու բոյսերը:

Ես առուակ կ'ըլլամ, վտակ ու գետ կ'ըլլամ: Ես ծով ու ովկիանոս կ'ըլլամ: Կը բարձրանամ օդին մէջ ու ամպ կ'ըլլամ: Կը չրջիմ երկրէ երկիր, աշխարհէ աշխարհ. անձրեւ կու տամ երաշտ հողերուն, ցօղ կու տամ ծարաւ բոյսերուն:

Ես եմ, որ ձիւն կ'ըլլամ, կարկուտ կ'ըլլամ, սառոյց կ'ըլլամ: Ես եմ, որ կենդանիներու պապակը կ'անցընեմ: Ես եմ, որ կը զովացընեմ ձեզ, մանուկնե՛ր, երբ ամառը սաստիկ ծարաւ զգաք:

ԱՌԱԾ.— Կարկլ-կարկլ լին կ'ըլլայ,
Հեռուն կ'երթայ գետ կ'ըլլայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յատակ.— *Վճիտ, մաքուր:*
Մրոտ.— *Մրոտած, ապտոտ:*
Սան.— *Կերակուր եփելու աման:*
Վտակ.— *Փոքր գետ:*
Շրջիկ.— *Պտրտիլ:*
Երաշտ.— *Չոր, անջրդի:*
Ցօղ.— *Կաթիլ (ջուրի):*
Պապակ.— *Սաստիկ ծարաւ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ կ'ըսէր ջուրը: — Ի՞նչ տեսակ գործեր կը կատարէ ան: — Ի՞նչպէս ամպ կ'ըլլայ. յետոյ անձրեւի կը վերածուի: — Ի՞նչպէս ձիւն, կարկուտ եւ սառոյց կը դառնայ: — Ի՞նչպէս կրնանք գիտնալ, որ ձիւնը, կարկուտը եւ սառոյցը ջուր են: — Ջուրին չափ օգտակար ուրիշ ի՞նչ բաներ կան:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Եզակի բառ մը յոգնակի դնելու համար բառին ծայրը կ'աւելցնենք *եր* կամ *ներ*: *Եր* կ'աւելցնենք, երբ բառը միավանկ է, օրինակ՝ ծառ—ծառեր: *Ներ* կ'աւելցնենք, երբ բառը մէկէ աւելի վանկ ունի, օրինակ՝ մատիտ—մատիտներ:

38. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ՝ ԳԱՌՆԱՐԱԾ



Մեր Դաւիթ հսկան
Մանուկ մըն էր գեռ եօթ-ութ տարեկան։
Մանուկ մը, իրա՛ւ, բայց ա՜յնքան ուժեղ,
Որ իրեն համար հա՛ մարդ, հա՛ մժեղ։
Գընաց հօրեղբայրն իր՝ Զէնով Օհան
Բերաւ երկաթէ զոյգ մը ոռնոման.
Մահակ մը երկար չալակը տուաւ,
Սասմայ քաղաքին գառնարած ըրաւ։
Գըշեց գառները մեր հովիւ հսկան,
Ելաւ Սասունի լեռներն աննըման.
«Հէ՛յ, ջա՜ն լեռներ,
Սասմայ լեռներ...»

Երբ կանչեց, ձայնէն իր ահեղ ու խոր՝
Ադամուկ — ապապակ ինկաւ սար ու ձոր,
Վայրի գազաններ որջերէն փախան,
Քարէ քար ինկան, ցիր ու ցան եղան։
Իսկ Դաւիթ վազեց անոնց եռուէն,
Ո՛րը այս լեռնէն, ո՛րը այն ձորէն՝
Աղուէս, նապաստակ, գայլ, եղնիկ բռնեց,
Հաւաքեց բերաւ, գառներուն խառնեց։

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԳ.— Քար քարի վրայ՝ քար չէ,
Լեռ-սար կ'արածի՝ ոչխար չէ,
Հաւկիր կ'ածէ՝ հաւ չէ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մժեղ.— Թռչող փոքր միջատ մը։
Ոռնոման.— Ոռքի ման, կոշիկ։
Մահակ.— Հաստ գաւազան (հովիւի)։
Գառնարած.— Գառները արածող։
Անմման.— Նմանը չունեցող։
Աղեղ.— Ամուսր, խիստ փախչելիք։
Որջ.— Վայրի կենդանիներու բնակութեան տեղ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞վ էր Դաւիթ։ — Հօրեղբայրը ի՞նչ բրաւ զինք։ — Ինչո՞ւ վայրի կենդանիները որջերէն փախան, երբ Դաւիթի ձայնը լսեցին։ — Ի՞նչ կը նշանակէ «քարէ քար ինկան»։ — Դաւիթ ինչո՞ւ հետամուտ եղաւ վայրի կենդանիներու եւ խառնեց իր գառներուն։ — Կարդացա՞ծ էք Սասունցի Դաւիթի ամբողջ պատմութիւնը։

39. ՉԵՂԱ՛Ի...

1

Արփիկը տեսաւ, որ փոքր եղբայրը երկու տանձ ունի. կանչեց ու ըսաւ.

– Արմէ՛ն, տես ի՛նչ գրուած է գիրքին մէջ։

Արմէն, որ շատ կը սիրէր գիրքի պատմութիւնները, ըսաւ.

– Կարդա՛, լսեմ։

«Կար ու չկար, – իրը թէ սկսաւ կարդալ Արփիկ, – փոքրիկ տղայ մը կար. մազերը գանգուր, այտերը կարմիր, աչքերը սեւուլիկ, անունն ալ՝ Արմէն»։

– Արմէ՞ն, – ուրախացաւ եղբայրը։

– Այո՛, – պատասխանեց Արփիկ եւ շարունակեց. «Ան շատ բարի էր։ Օր մը մայրիկը անոր տուաւ երկու տանձ, մեծ–մեծ տանձեր, չափարի պէս քաղցր»։

– Այսպէս, հա՞, – ըսաւ Արմէն իր տանձերը ցոյց տալով։

– Այո՛, ճիշդ քու տանձերուդ պէս։ «Արմէն դնաց քոյրիկին մօտ ու ըսաւ անոր.– Արփի՛կ ջան, այս պզտիկ տանձը ինծի, մեծը՝ քեզի»։

– Է՛հ, այդ ի՞նչ պատմութիւն է. իրա՞ւ այդպէս ըսաւ Արմէն։

– Հապա՛, – պատասխանեց Արփիկ եւ կը սպասէր, թէ ի՞նչ պիտի ընէ եղբայրը։

2

Արմէն սկսաւ մտածել։ Մտածե՛ց, մտածե՛ց, յետոյ ըսաւ.

– Կ'երեւի եղբայրը չէր ուզեր միւսակը ուտել տանձերը, քրոջն ալ բաժին հանեց։ Բայց ինչո՞ւ անպատճառն մեծ տանձը պէտք է տար։

Նորէն մտածեց, քրոջը երեսը նայեցաւ, վերջապէս ասելցաւ.

– Գիտե՞ս ինչ, Արփի՛կ, գուն սխալ կը կարդաս. Արմէնը փոքր տանձը տուած բլլալու է քրոջը։

Ըսաւ ու խածաւ մեծ տանձը։

ԱՌԱՆՁ.– Խօսքը մեծին, ջուրը պզտիկին։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանգուր.– Գրգռուած, գուզ։
Այո.– Թռչ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Արփիկ ի՞նչ բան փոքրիկ եղբօրը։ – Ի՞նչ էր իր նպատակը։ – Արմէն նստաւաց Քրոջը պատմութեան։ – Ի՞նչ բրաւ վերջին։ – Ի՞նչ տեսաւ, ապշիկ էր Արփիկ։ – Ձեր բնակած երկրին մէջ ի՞նչ պտուղներ կան։ – Տանձի ծառին ի՞նչ կ'բանեն, ապրելի՞ ծառին։

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒԹԻՒՆ.– Հետեւեալ բառերէն որո՞նք շատի գործածուած կու տան եւ ինչո՞ւ. դպրոց–դրպրոցներ, պայուսակ – պայուսակներ, ձեռք – ձեռքեր, բակարդ – բակարդներ, գլխարկ – գլխարկներ, մուկ–մուկեր։

40. ՄԵԾ ՀԱՅՐԻԿԻՆ ԱԿՆՈՑԸ

1

Անգամ մը մեծ հայրիկին ակնոցը կորսը-
ւեցաւ։ Ամէն կողմ նայեցան, փնտռեցին, բայց
ի զուր. ակնոցը չկար ու չկար։

Խեղճ մեծ հայրիկը կէս մը կոյրի պէս էր.
ո՛չ թերթ կրնար կարդալ, ո՛չ ալ գիրք։ Փոք-
րիկ Գեղամը տեսաւ տխրած և չատ զարմացաւ,
հապա ինք ի՞նչպէս կրնար առանց ակնոցի թէ՛
կարդալ եւ թէ գրել։

Գնաց մեծ հայրիկին քով ու հարցուց.

— Այդ ի՞նչպէս կ՚ըլլայ, մեծ հայրիկ, որ
դուն առանց ակնոցի չես կրնար գիրք կարդալ,
իսկ ես կրնամ։

Մեծ հայրիկը նախ ժպտեցաւ, յետոյ
ըսաւ, թէ ինք ծեր էր, առանց ակնոցի չէր
կրնար տեսնել, բայց ակնոցով ամէն բան կը
տեսնէր եւ լաւ կը տեսնէր։

Սախրուեցան նոր ակնոց մը գնել մեծ հայ-
րիկին համար։

2

Օր մը փոքրիկ Գեղամը վազեց մեծ հայ-
րիկին քով եւ ծանր ու լուրջ երեւոյթով մը
ըսաւ անոր.



— Մե՛ծ հայ-
րիկ, ակնոցդ
ի՞նծ ի կա-
ստա՞ս. հիմա
կը բերեմ նո-
րէն։

— Ի՞նչ պիտի
ընես, զաւա՛-
կըս, — հարցուց
մեծ հայրիկը։

— Դուն կ՚ըսես, որ ակնոցով լաւ կը տես-
նես. տա՛ւը անգամ մը ինծի, աչքիս անցընեմ
ու նայիմ, թէ մայրիկը ո՞ւր գրեր է խորոված
չապանակը։

ԱՌԱԾ — Ծերանաս, ծերին վիճակն իմանաս։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թերթ — Լրագիր։
Լուրջ — Խոհուն, ծանրաբարոյ։
Խորոված — Կրակի վրայ եփուած, տապկուած։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ինչո՞ւ մեծ հայրիկը այլեւս չէր կրնար գիրք կամ թերթ կարդալ։ — Փոքրիկ Գեղամը ինչո՞ւ զարմացաւ։ — Ի՞նչ ըսաւ մեծ հայրիկին։ — Ի՞նչ պատասխան տուաւ մեծ հայրիկը։ — Ի՞նչ ընելու համար ուզեց նոր ակնոցը։ — Միայն ծերե՞րը ակնոց կը գործածեն։ — Ի՞նչ ըսել է կարդատես, հեռատես։

ՊԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Ի՞նչ պէտք է աւելցնենք հետեւեալ բառերուն ծայրը, որպէս զի շատի գաղափարը տան, այսինքն յոգնակի ըլլան — գիրք, ակնոց, թուղթ, գնդակ, շապանակ, աչք, փիսիկ, զաւակ, պատմութիւն։

41. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ ԵՒ ՔԱՂՔՑԻՔ

Մեր հովիւ հսկան
Իր հսան հաւաքեց, ապա՝ իբիկուան՝
Քրչեց ասջուէն ու տարաւ քաղաք.
Կապկա՞նձ ու ունոց, ճի՞չ ու ապաղակ...
Մէյ մըն ալ յանկարծ քաղքցիք տեսան,
Որ ահա կու գան գայլ, աղուէս, գազան.
«Վա՜յ, ամա՜ն, փախէ՛ք,
Հէ՛յ, եամա՜ն, փախէ՛ք»...
Պոռացին աջէն, պոռացին ձախէն
Ծերեր ու կիներ՝ փախէն, սարսափէն:
Որը ասուն վազեց, որը՝ ժամ, խանութ,
Ամուր փակեցին դուռ ու լուսամուտ:
Դաւիթը կեցաւ, նայեցաւ չորս դին.
«Վա՜հ, այս քաղքցիք ի՞նչ շուտ կը պառկին:
Հէ՛յ դուք, ուլասէ՛ր, հէ՛յ դուք, գառնասէ՛ր,
Դէ՛հ, ելէք շուտով, բացէք ձեր դռներ,
Ո՛վ որ մէկ ունէր, ասա հատ եմ ըրեր,
Ո՛վ ասաբ ունէր, քրսան եմ բերեր...
Է՛, շուտով ելէք, եկէք ու տարէք,
Ձեր գառն ու ուլը գոմէն ներս ըրէք»:
Տեսաւ որ չեն գար, չեն ուզեր բանալ
Դուռ ու պատուհան, պառկեցաւ ինքն ալ,
Գրլուխը գրրաւ քարի մը դիմաց,
Մուշ-մուշ քընացաւ մինչեւ լուսաբաց...:

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԳ.— Զայն մի հաներ, բարեկա՛մ,
Ամենեին մի՛ խօսիր.
Անուն որ տաս մէկ անգամ,
Գիտցիր, որ գիս մեռցուցիր:

ԱՌԹԵՔ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղքցիք.— *Քաղաքի մէջ բնակողներ:*
Կապկանձ.— *Շունէրու լայու ձայնը:*
Ունոց.— *Գայլերու կամ շունէրու պոռալու ձայնը:*
Ամուր.— *Ուժով:*
Լուսամուտ.— *Պատուհան:*
Ուլատէր.— *Ուլի տէր, ուլ ունեցող:*
Գառնատէր.— *Գառի տէր, գառ ունեցող:*
Գոմ.— *Ոչխարներու բնակութեան տեղ.*
Լուսաբաց.— *Լոյսին բացուիլը, առաւօտ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Դաւիթ ո՞ւր տարած էր հօտը: — Ի՞նչ ըրին քաղքցիք: — Ինչո՞ւ կը վախնային: — Ի՞նչ ըսաւ Դաւիթ: — Ցետոյ ի՞նչ ըրաւ: — Քաղքցիք ինչո՞ւ չբացին իրենց դռներն ու պատուհանները: — Ի՞նչ պիտի պատահէր, եթէ գառներն ու գայլերը միասին ներս մտնէին գոմէն:

42· ՇԱՐԺՈՂ ՏՈՒՆԸ

Երբ պապս առաջին անգամ վերադարձաւ կայարանէն, զարմացած մարդու մը երեւոյթը ունէր։ Դեռ նոր տեսած էր շոգեկառքը։

– Ամենէն առաջ անիկա իր մեկնելու ժամը ունի, – սկսաւ պատմել պապս։ – Երեք անգամ զանգով կը կանչեն քեզ· ուշացա՞ր, ուրեմն կը մնաս։

«Ուզած ժամանակդ չես կրնար վար իջնել· զո՛ւն պէտք է յարմարիս անոր։ Կեցաւ՝ կ'իջնես, չկեցաւ՝ հեռը կ'երթաս։



«Ո՛չ ձի է քաշողը, ո՛չ եզ։ Ո՛չ հանդիսատ կ'ուզէ, ո՛չ քուն, ո՛չ ուտելիք։ Պէտք է միայն կրակ տալ եւ ուռատ ջուր։ Կառք չէ, սայլ ալ չէ, տեսակ մը շարժական տուն է։ Կը վազեն տեղեակները իրարու հետ, մէկը միւսը քաշելով, միւսին շարժելով ու միւսին կանգ տնելով։

«Այս քաղաքին մէջ աչքդ կը զոցես ու երբ կրկին բանաս, ուրիշ քաղաք մը կը գտնես դուն քեզ։ Առաջ եթէ երեք օրէն կը հասնէիր տեղ

մը, հիմա կէս օրն ալ բաւական է նոյն ճամբան անցնելու համար։

«Հասկցայ միայն, թէ ինչո՞ւ երբեմն–երբեմն ձայնը ձգած կը գոռայ, կը սուլէ, սար ու ձոր կը թնդացնէ»։

Երբ վերջացուց պապս, մենք սկսանք բարձրաձայն խնդալ։ Հապա ի՞նչ պիտի ըսէր ան, եթէ տեսած ըլլար օդանաւը։

ԱՌԱՆ·– Ճանապարհին հացը բեռ չէ,
Կեղծաւորին լացը սէր չէ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կայարան·– *Կառախումբերուն կենալու, սպասելու տեղը։*
Շոգեկառք·– *Շոգիով շարժող կառք։*
Շարժական·– *Շարժուն, շարժող։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·– Պապիկը ի՞նչ պատմեց կայարանէն վերադարձին։ – Ինչի՞ կը նմանցնէր շոգեկառքը։ – Դուք ալ բանի մը կրնա՞ք նմանցնել զայն։ – Գիտէ՞ք, թէ ինչո՛ւ կը սուլեն շոգեկառքերը։ – Փոխադրութեան ուրիշ ի՞նչ միջոցներ կան։ – Ո՞րն է անոնց մէջ ամենէն արագընթացը։

43. ԱՂԸ

1

Ձեր մայրիկը երբ կերակուր եփէ, անպատճառ աղ կը ձգէ անոր մէջ։

Ճաշի սեղանին վրայ դուք միշտ կը տեսնէք աղամանը, բայց հարցուցա՞ծ էք ինքզինքնիդ, թէ ի՛նչ է աղը եւ թէ ինչո՛ւ մարդիկ այնքան աղ կը գործածեն։

Չէ՞ք հարցուցած. ուրեմն լսեցէք՝ բացատրեմ։

Աղը կը գտնուի այն տեսակ հողերու մէջ, որոնք շատ հին ատեններ ծովու կամ լիճի ջուրերով ծածկուած են եղեր։ Ան կը գտնուի նաեւ ծովու ջուրերուն եւ աղի լիճերու մէջ։

Մեր գործածած աղը կա՛մ աղահանքերէն կ'ելլէ եւ կամ աղի լիճերէն։ Աղահանքերէն կը հանեն խոշոր կտորներով, ապա կը փշրեն ու կը մանրցնեն շաքարի պէս։

Իսկ աղի լիճերէն ջուրը կը փոխադրեն մեծ աւազաններու մէջ եւ կը թողուն արեւուն տակ։ Արեւուն տաքութենէն ջուրը կը չոգիանայ եւ տակը կը մնայ աղը։

2

Աղը անհրաժեշտ է մեր առողջութեան համար։ Մենք շատ հիւանդութիւններու են-

թակայ պիտի ըլլայինք, եթէ աղը չըլլար։

Կենդանիները անդամ աղ կը փնտռեն. կ'երթան լեռները, աղի քարեր կը գտնեն եւ կը լպեն զանոնք։

Ագր աւելի շատ կը հալի պաղ, քան թէ տաք ջուրի մէջ։

Հապա շաքա՞րը. ըսէք նայիմ, տա՞ք թէ պաղ ջուրի մէջ աւելի շատ կը հալի։

ԱՌԱՆՁ.— Եփած ապուրին մէջ ջուր չեն խառներ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղաման.— Աղի աման։
Աղահանք.— Աղի հանք։
Փշրել.— Փշուր-փշուր ընել. մանրել։
Աւազան.— Ջուր հաւաքելու տեղ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Մարդիկ ուրկէ՞ եւ ի՞նչպէս կը հանեն աղը։ — Ո՞ր հողերուն մէջ աղ կը գտնուի։ — Ի՞նչ բանի կը ծառայէ աղը։ — Կենդանիները ի՞նչ կ'ընեն աղ գտնելու համար։ — Ասանց աղի պատրաստուած կերակուրները ի՞նչպէս կ'ըլլան։ — Աղի չափազանց գործածութիւնը օգտակա՞ր է։

ՎԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Դպէ՞ր երբեմ միասանկ, երբեմ ալ բազմասանկ բառեր եւ յոգնակիի վերածեցէք զանոնք. օրինակ՝ տուն-տուներ, ընկեր-ընկերներ, անկողին-անկողիններ։

44. ՄԵՐ ԲԱԶԸ

Մահակ մը ուսիս՝ քալեմ վեհ ու վէս,
«Հէ՛յ, էհէ՛յ» կանչեմ հսկայի ձայնով.
Քովիս հաւաքուին գայլ, յովազ, աղուէս,
Եւ անոնց վրայ իշխեմ անխրոխով։

Միշտ այսպէս հպարտ գիւղ վերադառնամ
Եւ գիւղի ոգոց նախանձը շարժեմ,
Ժիր գայլ մը հնծնեմ, քաջի պէս սուրամ
Ու հոսն ասջեւէս լեռները քշեմ...

Բայց... ի՞նչ կը լսեմ, շշուկ կայ այնտեղ,
Ո՞վ կը մօտենայ թուփերուն մէջէն,
Մա՞րդ է թէ գազան՝ հրզօր ու ահեղ.
Հիմա ի՞նչ ընեմ... փախչի՞մ այս տեղէն։

Կը շարժի, աւա՜ղ, սիրտս վեր ու վար,
Ծունկերս թոյլ են, մարմինս ալ յոգնած.
Իսկ հոն, թուփին տակ, մէկ փոքրիկ ճագար
Վրաս կը խնդայ՝ ականջը սրած...։

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԵ.— Քանի՛ ծեծես՝ կը խաղայ,
Ծեծը կտրես՝ կը կաղայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վէս.— *Խրոխտ, հպարտ, գոռոզ։*
Ցովազ.— *Մսակեր վայրի կենդանի մը։*
Անխոռով.— *Հանդարտ, խաղաղ, հանգիստ։*
Ժիր.— *Աշխոյժ, գործունեայ։*
Շշուկ.— *Թեթեւ ձայն, շշնկոց։*
Թուփ.— *Գզաթիկ ծառ։*
Ահեղ.— *Սարսափելի, շատ վախնալիք։*
Ճագար.— *Նապաստակի տեսակ մը (աւելի պզտիկ)։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ կը փափաքէր ընել փոքրիկ տղան։ — Ցանկարծ ի՞նչ լսեց։ — Վախցա՞ւ. ինչո՞ւ։ — Ո՞վ կար թուփերուն ետին եւ ի՞նչ կ'ընէր։ — Հապա եթէ գա՞յլ մը ըլլար մօտեցողը։ — Վախկո՞տ թէ քաջ մէկն էր փոքրիկ տղան։

45. ԱՂՈՒԷՍԸ ԵՒ ԿԱՔԱՒԸ

Աղուէսին մէկը կաքաւ մը բռնեց եւ կը պատրաստուէր ուտել զայն։

Այն ատեն կաքաւը ըսաւ աղուէսին.

— Օրհնեալ ըլլայ Աստուած, որ կ'ազատէ զիս այս աշխարհի չարութիւններէն եւ իր արքայութիւնը կը տանի։ Իսկ դուն, աղուէ՛ս, նախ փառք տուր Աստուծոյ եւ ապա կեր զիս։

Աղուէսը կկզեցաւ, աչքերը երկինք բարձրացուց եւ բերանը բանալով ըսաւ.

— Փա՛ռք քեզ, ողորմա՛ծ Աստուած, որ ինծի համար լաւ նախաճաշ մը պատրաստեցիր։

Հապա թէ աղուէսը բացած էր բերանը՝ այս խօսքերն ըսելու համար, կաքաւը՝ թռա՛ւ, փախաւ ու թռաւ օդին մէջ։

Աղուէսին բերանը բաց մնաց։

— Ի՞նչ անմիտ եւ յիմար եմ ես, — ըսաւ ինք իրեն.— առաջ պէտք է կաքաւը ուտէի եւ վերջը միայն փառք տայի Աստուծոյ։

ԱՌԱԾ.— Նախ կեր, ապա գոհացիր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կաքաւ.— *Համեղ միսով թռչուն մը։*
Կկզել.— *Ոտքերուն վրայ կկուզ նստիլ. կ'ըսուի նաեւ պզզել։*
Անմիտ.— *Անխելք։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Օր մը ի՞նչ բռնեց աղուէսը։ — Կաքաւը ի՞նչ ըսաւ անոր։ — Ի՞նչ ըրաւ այն ատեն աղուէսը։ — Յետոյ ի՞նչ պատահեցաւ։ — Ի՞նչ ըսաւ աղուէսը ինքզինքին։ — Ո՞վ աւելի խորամանկ էր, աղուէ՞սը թէ կաքաւը։ — Իսկ ի՞նչ տեսակ կենդանիներ են աղաւնին եւ առիւծը։

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հետեւեալ բառերուն մէջ որո՞նք եզակի են եւ որո՞նք յոգնակի.— մարդ, կայարան, լապտեր, ժամեր, ձի, քուն, աւազաններ, կառքեր, սենեակ, քաղաքներ, օրեր, կենդանի, հիւանդութիւն։

46. ԿԱՏՈՒԻ ՄԸ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԸ

1

Քանի մը օր առաջ՝ խոհարար կինը կը զանգատէր, թէ մուկերը կ'ուտեն տան մէջ գտնուած հացը, միսը, պանիրը եւ թէ ես չէի դիտեր մուկ բռնելու կերպը:

Այս խօսքերէն սիրտս շատ նեղուեցաւ. ուստի որոշեցի վարպետութիւնս ցոյց տալ խոհարար կնոջ:

Երեկոյեան երբ մութը կոխեց, ես կամաց մը սենեակ մտայ եւ պառկեցայ հոն: Շատ չանցած՝ «չրթ–չրթ» ձայն մը լսեցի: Հասկըցայ, որ մուկ մըն էր եկողը:

Քսուելով–քսուելով առաջ սողացի եւ այնքան մօտը գացի մուկին, որ կրնայի վրան ցատկել: Զար կենդանին տեսաւ զիս եւ ծակը փախաւ, բայց ես չուտ մը վրան նետուեցայ եւ բռնեցի զայն առջեւի ճանկերովս, դեռ ան ծակէն բոլորովին ներս չմտած:

2

Կ'ուզէի, որ խոհարար կինը հոն ըլլար եւ տեսնէր յաղթանակս:

Մուկը բերանս առի եւ ուղղակի գացի խոհարար կնոջ անկողնին մէջ դրի զայն: Կը կարծէի, թէ ասոր համար պիտի գար կռնակս շոյէր եւ ըսէր. «Այս ի՞նչ աղուոր կատու է»:



Բայց երբ ան դիշերը ննջասենեակ մտաւ եւ տեսաւ մուկը անկողնին մէջ, այնպէս մը պոռաց կանչեց, որ ես անդամ վախցայ:

Յետոյ ունելի մը առաւ եւ այն աղուորիկ մուկը բռնելով չիտակ պարտէզ նետեց:

ԱՌԱԾ — Նեւիին՝ խրատն ի՛նչ օգուտ,
Սեւին՝ օճառն ի՛նչ օգուտ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ննջասենեակ — Ննջելու, քնանալու յատուկ սենեակ:
Ունելի — Երկաթէ պործիք մը՝ կրակ կամ ուրիշ իրեղէններ բռնելու համար:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ի՞նչ բանի համար կը զանգատէր խոհարար կինը: — Կատուն ի՞նչ որոշում տուաւ այն ատեն: — Յետոյ ի՞նչ ըրաւ: — Ինչո՞ւ խոհարար կնոջ անկողնին վրայ դրաւ մուկը: — Անկէ ետք ի՞նչ պատահեցաւ: — Կրնա՞ք շարունակել կատուին մտածումները:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Գտէք երեք եզակի բառեր, յոգնակիի վերածեցէք զանոնք եւ խօսքեր կազմեցէք անոնցմով, հետեւեալ օրինակին համաձայն — տետրակ–տետրակներ. իմ տետրակներս մաքուր են:

47. ՊԱՏՃԱՌԸ

«Մայրի՛կ, երէկ, պպրոցին մէջ,
Աղջիկ մ՚ինկաւ աթոռէն վար.
Իր ընկերներն անոր վրայ
Ծիծաղեցան անդադար:

Բայց ես խեղճին վրայ, մայրի՛կ,
Ամենևին չբնդացի», —
Ըսաւ Մանուշ, ութ տարեկան
Աղջիկ մը փոքր ու մրատցի:

Մայրիկն բսաւ. «Մանո՛ւշ, գիտե՞ս,
Այդ ընթացքէդ ո՞րքան գոհ եմ.
Բայց բսէ՛ ինձ, ի՞նչպէս կրցար
Ելլալ այդքան յուրջ ու խոհեմ»:

«Ի՞նչպէս խնդալ, քանի որ ե՛ս
Էի ինկողն այն աթոռէն», —
Կարմրելով, թոթովելով
Ըսաւ Մանուշ համեստօրէն...:

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԶ.— Կը մեծնայ՝ պտուղ չի տար,
Ճիւղ կու տայ՝ տերեւ չի տար:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամենևին — *Բնաւ, երբեք:*
Մատցի — *Խելացի:*
Համեստօրէն — *Խոնարհ կերպով:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞վ էր Մանուշ: — Ի՞նչ պատմեց սա մայրիկին: — Մայրիկը ի՞նչ պատասխան տուաւ իրեն: — Պատճառը ի՞նչ էր, որ Մանուշ չէր խնդացեր ինկողին վրայ: — Որո՞նց կ՚ըսեմ համեստ: — Համեստ չեղողներուն ի՞նչ կ՚ըսեմ:

---

48. ՓՈՔՐԻԿ ՄՈՒԿԸ

Մեծ մուկը եւ իր փոքրիկ ձագը անօթի էին: Աչ ու ձախ կը փապվզէին ուտելիք գտնելու համար: Բաւական թափառելէ ետք, մտան տան մը մառանը:

Մառանին մէջ կար թակարդ մը, թակարդին մէջ ալ կախուած էր պանիրի կտոր մը եւ անոյշ-անոյշ կը բուրէր:

— Մայրի՛կ, մայրի՛կ, տե՛ս, ի՞նչ լաւ պանիր է կախուած այնտեղ, — բսաւ փոքրիկ մուկը քիթը վեր վեր քաշելով:

Մայրը տեղէն չշարժեցաւ:

— Է՛հ, ի՞նչ կ՚ըլլայ, եթէ մօտենամ, քիչ մը հոտուրտամ սա պանիրը, — ըսաւ փոքրիկ մուկը ինք իրեն։

Եւ առանց սպասելու մտաւ թակարդէն ներս, ակռաներով բռնեց պանիրին կտորը եւ ուժով մը քաշեց։

Թրա՛խկ...գոցուեցաւ յանկարծ թակարդին դուռը։

Ի՞նչ ընէր հիմա խեղճ մայրը։

ԱՌԱԾ — Կաթին հետ մտածը հագիին հետ դուրս կու գայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թափառիլ — Ապրին անդին պարապ պտըտիլ։
Մառան — Ուտելիք պահելու տեղ, չամաբան։
Բուրել — Անոյշ հոտ աղմակել։
Թակարդ — Մուկ եւ ուրիշ կենդանիներ բռնելու գործիք մը։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ինչո՞ւ կը վազվզէին մուկն ու իր ձագը։ — Վերջը ո՞ւր մտան։ — Ի՞նչ կար մառանին մէջ։ Ի՞նչ կար թակարդին մէջ։ — Ի՞նչ բանի համար դրուած էր թակարդը։ — Ի՞նչ ըսաւ փոքրիկ մուկը իր մայրիկին։ — Ցետոյ ի՞նչ ըրաւ։ — Ի՞նչ կը կարծէք, որ ըրաւ մայրը՝ իր ձագին բռնուիլը տեսնելով։

49. ԵՐԵՒԵԼԻ ՀԵՐՈՍԸ

1

Ծըլիկը, կայտառ եւ աչխոյժ մկնիկ մը, խարտեշագոյն կերպով մօտեցաւ մօրը եւ ըսաւ անոր։

— Գիտե՞ս, մայրիկ, ես այսօր կատու մը կերայ։



Պատաւ մուկը վախէն ցնցուեցաւ եւ աչքերը լայն բացած զոչեց։

— Խենդեցե՞ր ես, ինչ է, այդ ինչե՞ր կ՚ըսես։

Ծըլիկը հպարտ-հպարտ բարձրացուց գլուխը, պոչը ոլորեց ու կրկնեց։

— Այո՛, ես կատու մը կերայ։

Այդ միջոցին մըրիկի պէս ներս խուժեցին երկու ուրիշ մուկեր։

– Զարմանալի՛ բան, չլսուա՛ծ բան, – կը պոռային անոնք։ – Լսեցէ՛ք, լսեցէ՛ք։

2

Բոլոր անկիւններէն հաւաքուեցան մուկերը եւ հարցուցին.

– Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահեր։

– Մենք քիչ առաջ նստած էինք հոն՝ վէրը։ Ճանկարծ լսեցինք փոքրիկ ազու մը ձայնը. «Մայրի՛կ, – կ՝ըսէր ան, – փիսիկս կորսուեր է, չկա՛յ»։ Ուրիշ ձայն մը կը պատասխանէր. «Կ՝երեւի մուկն է կերեր»։

Ծըւիկը առաջ եկաւ գլուխը բարձր բռնած ու ըսաւ.

– Այդ ես էի. ե՛ս կերայ փիսիկը։

Ամէնքը սարսափած եւ եւ քաշուեցան։

– Եւ դուն չվախցա՞ր, – դողալով հարցուց հոն կեցողներէն մէկը։

– Ամենեւին, ինչո՞ւ պիտի վախնայի, – արհամարհոտ ժպիտով պատասխանեց Ծըւիկը։

3

Նոյն պահուն հեռուէն մէկը պոռաց.

– Եղբայրնե՛ր, հոս եկէք. մեղրահացի կտոր մը գտայ։

– Ատիկա իմս է, – գոչեց Ծըւիկը, – ձեռք չդպցնէ՛ք։ Ատիկա փիսիկին թաթիկն է։

– Հա՛, հա՛, հա՛, – խնդացին բոլոր մուկերը։ – Ուրեմն դուն մեղրահացէ՞ փիսիկ կերեր ես։

– Կը կարծէք, թէ ատիկա սարսափելի չէ՞ր, – բողոքեց Ծըւիկը։ – Գիտէ՞ք, այդ մեղրահացը ո՞րքան նման էր փիսիկին, եւ ի՞նչպէս կը փայլէին անոր ոսկեգոծ աչքերը։ Ձեզմէ ո՞վ կը համարձակէր մօտենալ։

Այս խօսքերուն վրայ ամէնքը մէկ սկսան ծափահարել ու միաբերան գոչեցին.

– Կեցցէ՛ մեր քաջ Ծըւիկը։

ԱՌԱՆ։– Կատուն երբ խաղայ,
Մուկը կը դողայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեւելի։– Նշանաւոր, անուանի։
Կայտառ։– Առոյգ, վառվռուն։
Աշխոյժ։– Ժիր, եռանդուն։
Մրրիկ։– Փոթորիկ։
Արհամարհոտ։– Բանի տեղ չդնող։
Մեղրահաց։– Մեղրով շինուած հաց։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։– Ծըւիկը ի՞նչ ըսաւ իր մօրը։ – Ինչո՞ւ վախցաւ մայրը։ – Ի՞նչ ըսելու եկան երկու փոքրիկ մուկերը։ – Ի՞նչ էր պատահած։ – Ի՞նչ տեսակ փիսիկ էր Ծըւիկին կերածը։ – Ինչէ՞ն գիտցան, որ մեղրահացէ էր ան։ – Ի՞նչ բանի մէջ էր Ծըւիկին քաջութիւնը։

50· ՄԱՐՏԸ

Այս խենդ ամսին Մարտ կ'ըսեն·
Հանդիսատ չունինք երեսէն։

Այսօր՝ ուրախ, խաղաղիկ,
Վաղը՝ կայծակ, փոթորիկ։

Առաւն կանուխ՝ պայծառ օդ,
Փիչ եաք մութ է, անձրեւոտ։

Օր մը ցուրտ է, օր մը տաք,
Հոս՝ ջինջ, իսկ հոն՝ ամպի տակ։

Հոս կը խնդայ, հոն կու լայ,
Ասանկ ալ խենդ բա՞ն կ'ըլլայ...։

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԷ·— Մեծ հոր մը կայ,
Ամբողջ աշխարհ
Մէջը կ'իյնայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խաղաղիկ·— *Խաղաղ, հանդարտ։*
Ջինջ·— *Պայծառ, յստակ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·— Ինչո՞ւ «խենդ» կ'ըսեն Մարտին։ — Տարուան ո՞ր եղանակին մէջ կ'իյնայ ան։ — Դուք ո՞ր եղանակը կը սիրէք· ինչո՞ւ։ — Կրնա՞ք մարդոց կեանքի շրջաններուն նմանցնել տարուան չորս եղանակները։

51· ՍՈՒՏ ՀԻՒԱՆԴ

1

Մեծ պահքի մէջ էինք· ես զզուած էի ոսպապուր ուտելէ։ Օր մը միտքս դրի համով բան մը փրցնել մայրիկէս եւ իրիկուան կողմ ուշն վերապարձայ հիւանդկոխ երեւոյթով։

Մայրս, իմ այս անսովոր երեւոյթէս դող ելած, հարցուց թէ հիւա՞նդ եմ, ո՞ր տեղս կը ցաւի։

— Ամէն տեղս, մայրի՛կ, ամէն տեղս, գլուխս, մէջքս, սկսրներս, — պատասխանեցի ես իրր թէ հիւանդ մէկու մը պէս։

— Կ'ուզե՞ս պառկիլ, մա՛նչս, — հարցուց բարի մայրիկս՝ ձեռքը ճակատիս դնելով։

— Ո՛չ, մայրիկ, — մրմնջեցի ես։

— Թէյ պատրաստե՞մ, — հարցուց նորէն։

— Ո՛չ։

— Մածուն կ'ուզե՞ս, կաթ կը խմե՞ս։

— Ո՛չ, ո՛չ։

— Կարագով հաւկիթ եփե՞մ։

Ճիշդ ուզածս էր, բայց փորձեցի ինքզինքս սուտի ծախել։

— Ի՞նչ գիտնամ... ասանկ թոյլ մը եփելու ըլլաս, կարելի է կ'ուտեմ, — աւելցուցի ես հապճեպ խնդուքս բռնելով։

2

Մայրս վութով գործի սկսաւ։ Պահ մը եւաք, թարմ կարագին ու հաւկիթին հոտը քիթս կը գարնէր արդէն։ Բերնիս ջուրերը կը վազէին։ Ուրախութենէս ի՛նչ ընելս չէի գիտեր։ Ելայ ոտքի ու հո՛փ... գլխուս վրայ դարձայ։ Ոտքերս դեռ օդին մէջ էին, երբ վրայ հասաւ մայրս ու տեսաւ զիս այդ դիրքին մէջ։

– Վա՛յ, ի՞նչ պատահեցաւ այս տղուն, – շուարած ըսաւ ինք իրեն։

Հոսկցած էր խաղս։ բայց ոչինչ, ես փառաւորապէս կերայ լմնցուցի կարագով հաւկիթը։ Յետոյ անմեղ ձեւ մը առնելով՝ հարցուցի իմ բարի մօրս։

– Իրաւ ըսէ, մա՛մ, շատ բարկացա՞ր ինծի։

– Հարկա՛ւ։ Տեսնուա՞ծ բան է, որ մարդ իր պահքը ուտէ։ մեղք է, չէ՞։

Եւ աւելցուց գուրգուրալից ձայնով մը։

– Հիմա գնա խաղա եւ իրիկունը մի ուշանար։

Ա՛խ, իմ բարի՛, ներո՛ղ մայրիկս...։

ԱՌԱՆ։– Քիչ ուտելը մարմնի շահ է,
Քիչ խօսիլը՝ հոգիի։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ոսպապուր։– *Ոսպով ապուր։*
Երեւոյթ։– *Կերպարանք, տեսք։*
Անսովոր։– *Սովորականէ դուրս, չտեսնուած։*
Գուրգուրալից։– *Գուրգուրանքով, սիրով լեցուն։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։– Ի՞նչ բանէ զգուած էր փոքրիկ տղան, ինչո՞ւ։ – Օր մը ի՞նչ ըրաւ։ – Ի՞նչ ըսաւ մայրը։ – Յետոյ ի՞նչ եղաւ։ – Ինձո՞ւ սուտ հիւանդ ձեւացած էր տղան – Դուք ալ նման խաղեր ըրա՞ծ էք։ – Ի՞նչ կը նշանակէ «ինքզինքս սուղի ծախել»։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։– Գտէք երեք յոգնակի բառեր, եզակիի վերածեցէք զանոնք եւ խօսքեր կազմեցէք անոնցմով, այսպէս։– ուսուցիչներ–ուսուցիչ։ մեր ուսուցիչը շատ բարի է։

52. ՇԱՏԱԽՕՍ ՄԻՀՐԱՆԸ

1

Կ'ուզէ՞ք ճանչնալ մեր դասարանի «չատախօսը». Միհրան կը կոչուի ան։ Անչէն կը խօսի, ձախէն կը խօսի, սուտը իրաւը իրար կը խառնէ, կը խօսի՛ ու կը խօսի։

Ըսածն ալ բա՞ն մը ըլլար գոնէ...

Հայրն ու մայրը ա՛լ ձանձրացեր էին, իսկ ուսուցիչը ուղղակի յուսահատեր էր։

– Գլո՛ւխ, բայց ի՞նչ գլուխ. բան մը ներս չի մտներ, – կ'ըսէին Միհրանի դասընկերները։

– Լեզո՛ւ, բայց ի՞նչ լեզու, կը դառնա՛յ ու կը դառնայ, – կը կրկնէին դրացի տղաքը։

Միհրանին հոգը չէր սակայն. ան կը շարունակէր խօսիլ, միշտ խօսիլ, անվերջ խօսիլ։

2

Օր մը մեծ հայրիկը կանչեց զինք ու ըսաւ.

– Ըսէ՛ նայիմ, տղա՛ս, քանի՞ աչք ունիս։

– Երկու, – անմիջապէս պատասխանեց Միհրան։

– Քանի՞ ականջ ունիս։

– Երկու։

– Է՛, քանի՞ բերան ունիս։

– Մէկ, միայն մէկ բերան, մե՛ծ հայրիկ, – արագ-արագ պատասխանեց Միհրան։

– Գիտե՞ս ինչո՛ւ այդպէս է։

Միհրան գլուխը քերել սկսաւ։

– Ե՛ս ըսեմ ինչուն, – բացատրեց մեծ հայրիկը։ – Աստուած երկու աչք տուած է մեզի, որպէս զի շատ տեսնենք։ Երկու ականջ տուած է, որպէս զի շատ լսենք։ Բայց մէկ բերան տուած է, որպէս զի քիչ խօսինք եւ միայն պէտք եղածը խօսինք։

Միհրան բառ չգտաւ պատասխանելու։

Շիտակ խօսքին ո՛վ ինչ կրնայ ըսել։

ԱՌԱՆՑ.– Տասը լսէ, մէկ խօսիր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յուսահատիլ.– *Յոյսը կտրել։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Ի՞նչ տեսակ տղայ էր Միհրան։ – Ընկերներն ու դրացի տղաքը ի՞նչ կ'ըսէին իրեն համար։ – Օր մը ի՞նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ իր եւ մեծ հայրիկին միջեւ։ – Կը կարծէ՞ք, որ մեծ հայրիկին խրատը օգուտ մը ըրաւ։ – Ձեր դասարանին մէջ ալ կա՞ն շատախօսներ։

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.– Ձեր այսօրուան դասին մէջ ցոյց տուէք եզակի եւ յոգնակի բառեր։ Եզակիները վերածեցէք յոգնակիի եւ յոգնակիները՝ եզակիի։

53· ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՍԷՐ

Երբոր անցնի ձմեռն ու գայ նոր գարուն,
Կը բազմանան վտակներդդ, հա՛յրենիք·
Օդը սիրուն, ջուրդդ սիրուն, դուն սիրուն,
Ծաղիկներդդ պէս-պէս գոյնով, հա՛յրենիք:

Մարդիկ կու գան սարերուդ վրայ շրջելու,
Իրենց սրտերդ եղնիկներդդ որսալու,
Կամ խըմելու ջուրն ակերուդ անուշիկ·
Անմահական գրախտ ես դուն, հա՛յրենիք:

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԸ·— Շահարէն քաղցր է,
Կապարէն ծանր է,
Շուկան չի ծախուիր,
Մարդէ չի գնուիր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բազմանալ·— *Շատնալ:*
Անմահական·— *Մահ չունեցող, անմահ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·— Ի՞նչ կ'ըլլան վտակները, երբ գարունը գայ: — Ինչո՞ւ կը բազմանան անոնք: — Ի՞նչ է պատճառը, որ գետերը կը յորդին գարնան: — Հայրենիքը ինչո՞ւ այնքան սիրուն կ'երեւայ մեզի: — Ինչի՞ կը նմանցուի ան այս տողերուն մէջ:

54· ԿՏՐԻՃ ԶԻՆՈՒՈՐԸ

Թշնամիները յարձակեր էին մեր սիրելի հայրենիքին վրայ եւ կ'ուզէին բռնութեամբ տիրանալ անոր:

Շատ չատեր կռուի գացին թշնամիին դէմ, հայրենի հողը պաշտպանելու համար: Անոնց մէջ կար նաեւ կաղ երիտասարդ մը, որ չատ կը սիրէր հայրենիքը եւ պատրաստ էր կեանքը զոհելու անոր համար:

Առոյգ եւ հուժկու զինուոր մը, երբ տեսաւ կաղ երիտասարդը, քիչ մը կարեկցութեամբ, քիչ մըն ալ հեգնանքով ըսաւ անոր·

— Խե՛ղճ մարդ, ո՞ւր կ'երթաս այդ կաղ ոտքով· թշնամիները խիստ կը սպաննեն քեզ, որովհետեւ դուն չես կրնար փախչիլ:

Կաղ, բայց կորովի երիտասարդը զարմացած նայեցաւ առոյգ ու հուժկու զինուորին եւ սա պատասխանը տուաւ անոր·

— Բայց ես կռուի չեմ երթար փախչելու համար· կ'երթամ յաղթելու եւ թշնամիները փախցնելու համար:

Զինուորը հասկցաւ իր սխալը, ամչցաւ եւ գլուխը կախ հեռացաւ:

ԱՌԱԾ·— Անպտուղ ծառին քար չեն նետեր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կտրին։— *Քաջ, անվախ։*
Տիրանալ։— *Տէր դառնալ։*
Առոյգ։— *Առողջ, կայտառ։*
Հուժկու։— *Ուժեղ, զօրաւոր։*
Կարեկցութիւն։— *Գութ։*
Հեգնանք։— *Ծաղրանք։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Կաղ երիտասարդը ինչո՞ւ կռուի կ'երթար։ – Հուժկու զինուոր մը ի՞նչ ըսաւ անոր։ – Ի՞նչ պատասխան տըւաւ կաղ երիտասարդը։ – Զինուորը ինչո՞ւ ամչցաւ։ – Ի՞նչ կ'ըսեն իրենց հայրենիքը սիրող մարդոց։ – Ո՞րն է Հայաստանի մայրաքաղաքը։

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Ձեր տետրակին մէջ գրեցէք սպիտակ–ներմակ։ Այս երկու բառերը կը կոչուին հոմանիշ, որովհետեւ երկուքն ալ նոյն նշանակութիւնը ունին։

---

55. ՍԵՒՈՒԿՍ

1

Մենք շատ մը ունէինք, անուանը՝ Սեւուկ։

Սեւուկն ու ես միասին մեծցանք։ Ան շատ բան սորվեցաւ քիչ ատենէն։ Ո՛չ միայն բոլոր–ներս կը հասկնար, այլեւ միտքէս անցածն անդամ կը դուշակէր։

Մենք գրեթէ միշտ միասին կը խաղայինք։ Առաւօտները կ'ընկերանար ինծի մինչեւ դպրոցին դուռը, իսկ երեկոյները կու գար ու կը սպասէր նոյն տեղը։

Երբ դուրս կելլէի դպրոցէն, Սեւուկին ուրախութիւնը չափ ու սահման չէր՝ ունենար։ Շուրջս կը դառնար, ձեռքերս կը լզէր, վրաս կը ցատկէր եւ սատիկ կը բարկանար, եթէ ընկերներս որեւէ ձեւով նեղութիւն պատճառէին ինծի։

Երբ Սեւուկը երեք տարեկան եղաւ, այնքան զօրաւոր էր ու այնքան խելացի, որ մտածեցի ձիու տեղ գործածել զայն։

2

Հայրս ու ես տեսանք պէտք եղած պատրաստութիւնը եւ Սեւուկը լծեցինք սայլակիս։

Ան մեծ հաճոյքով սկսաւ քաշել փոքրիկ կառքս, բայց յանկարծ հեռուէն նշմարեց ուրիշ շնիկ մը եւ անոր կողմը վազեց։

Սայլակս տապալեցաւ, եւ ես կռնակիս վրայ պառկեցայ գետինը· բարեբախտաբար չվիրաւորուեցայ:

Սեւուկը հասկցաւ իր սխալը, եւ դարձաւ եւ սկսաւ ձեռքերս ու երեսս լղել:



Անկէ ետք շատ զգոյշ էր· ա՛լ չէր վազեր: Քիչ-քիչ վարժուեցաւ իր նոր պաշտօնին:

Սկսանք միասին աւելի երկար ճամբորդութիւններ ընել, մանաւանդ ամառները, երբ ես դպրոց չէի ունենար եւ մենք դիւղ կ'երթայինք:

ԱՌԱՆ·— Խաղ շատ գիտեմ, բայց ձայն չունիմ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գուշակել·— Ուրիշին միտքէն անցածը իմանալ:
Սայլակ·— Գոտիկ սայլ, կառք:
Տապալիլ·— Գետին իյնալ, կործանիլ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·— Ի՞նչ տեսակ շուն էր Սեւուկը: — Ինչե՞ր կ'ընէր: — Փոքրիկ տղան ի՞նչ բանի գործածեց զայն: — Ի՞նչ պատահեցաւ առաջին օրը: — Ի՞նչ էր Սեւուկին նոր պաշտօնը: — Շուները ուրիշ ի՞նչ պաշտօններ կը կատարեն: — Ո՞րն է շուներուն գլխաւոր առաւելութիւնը:

ՊԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ·— Ձեր տետրակին մէջ գրեցէք դպրոց-վարժարան եւ ըսէք թէ ի՛նչ կը կոչուին այս երկու բառերը: Դուք ալ գտէք նման բառեր:

56· ՎԱՐԴԸ

Փոքրիկ արդան վարդ մը տեսաւ,
Սիրուն վարդ մը՝ մէջը դաշտին·
Վարդը տեսաւ, ուրախացաւ,
Վազեց դընաց մօտը վարդին,
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը՝ մէջը դաշտին:

Տղան ըսաւ· «Քեզ կը քաղե՞մ,
Ա՛յ կարմիր վարդ՝ մէջը դաշտին»:
Վարդը ըսաւ· «Տե՛ս, կը ծակե՞մ,
Որ չդդպչիս կարմիր վարդին,
Փշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը՝ մէջը դաշտին»:

Ու չար սրղան վարդը քաղեց,
Սիրուն վարդը՝ մէջը դաչտին.
Փուշը թէեւ ձեռքը ծակեց,
Բայց ի՞նչ օգուտ եղաւ վարդին...
Վա՜ խ իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը՝ մէջը դաչտին:

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԹ.— Թէ որ բանաս՝ կը խօսի,
Բայց երբ փակես՝ կը լռէ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սիրուն.— *Գեղեցիկ:*
Քաղել.— *Քրցնել:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Փոքրիկ տղան ինչո՞ւ ուրախացաւ, երբ վարդը տեսաւ: — Ի՞նչ բան աւոր: — Ի՞նչ պատասխան տուաւ վարդը: — Յետոյ ի՞նչ եղաւ: — Վարդերը ի՞նչ գոյն կ'ունենան: — Ուրիշ ի՞նչ ծաղիկներու անուն գիտէք: — Անոնցմէ ո՞րը աւելի շատ կը սիրէք:

---

57. ՀՐԱՇԱԼԻ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

1

Անդամ մը, անտառ գացի որսորդութեան համար: Ճամբան սկսայ ուսել գնած քաղցր բալերս:

Յանկարծ եղջերու մը տեսայ քիչ հեռուն: Ամբակաղմ, գեղեցիկ, ճիւղաւոր պողերով եղջերու մըն էր:

Հրացանիս մէջ փամփուշտ չկար: Իսկ եղջերուն, հանդիստ կանգնած, ինծի կը նայէր. կարծես գիտէր, որ հրացանս դատարկ է:

Բախտէս՝ գրպանիս մէջ քանի մը բալ մնացած էր. համբեղ պտուղները կերայ, իսկ անոնց կորիզներով հրացանս լեցուցի: Այո՛, մի՛ խնդաք:

Հրացանը թնդաց, բայց եղջերուն գլուխը թափահարեց միայն: Բալին կորիզները ճակատին կպան, բայց վնաս մը չտուին կենդանիին, որ ակնթարթի մը մէջ անյայտացաւ անտառին խորը:

Մե՜ղք...

2

Տարի մը ետք, ես նորէն որսի գացած էի: Ի հարկէ, այդ ժամանակ ես բոլորովին մոռացած էի բալի կորիզին պատմութիւնը:

Շատ զարմացայ, երբ անտառին խորէն ճիշդ դիմացս դուրս եկաւ հրաշալի եղջերու մը, պողերուն մէջտեղ՝ մեծ բալենի մը։ Հաւատացէ՛ք, որ հրաշալի բան էր ասիկա. ամրակազմ եղջերու մը եւ գլխուն վրայ՝ մե՛ծ ծառ մը...

Իսկոյն յիշեցի անցեալ տարուան պատմութիւնը. այդ ծառը բուսած էր բալի այն փոքրիկ կորիզէն, որով հրացանս լեցուցած եւ արձակած էի եղջերուին վրայ։

Հրացանս հանեցի եւ նշան բռնեցի. մէկ զարկով կենդանին անկենդան դետին ինկաւ։

Այսպէ՛ս ալ բախտ... հիմա թէ՛ խորովածի միս ունէի եւ թէ բալի անոյշ, որովհետեւ ծառը ծածկուած էր խոշոր, համեղ բալերով։

Ես ըսեմ, դուք ալ հաւատացէք...

ԱՌԱԾ.— Սուտն ալ պոչ կ'ունենայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բալ.— Համեղ պտուղ մը, կեռասին մէկ տեսակը։
Ամրակազմ.— Ամուր կազմուածք ունեցող։

Պոչ.— Եղջիւր, կոտոշ։
Դատարկ.— Պարապ։
Կորիզ.— Կուտ։
Թափահարել.— Գլուխը շարժել։
Ակնթարթ.— Աչք բանալ-գոցելու չափ ժամանակ։
Անյայտանալ.— Անհետանալ, կորսուիլ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Անգամ մը ի՞նչ պատահեցաւ որսորդին։ — Իրակա՞ն պատմութիւն մըն է ասիկա։ — Այս տեսակ պատմութիւններուն ի՞նչ կ'ըսեն։ — Բանի՞ տեսակ պտուղի անուն գիտէք։ — Ո՞ր պտուղը կը սիրէք ամենէն աւելի։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հետեւեալ բառերուն դիմաց գրեցէք իրենց հոմանիշները.— փոքրիկ, ուսուցիչ, գիր, մաղ, բրբիջ, ակնարկ, հասնիլ։

58. ԼԵԶՈՒՆ ԿԸ ՔԵՐՈՒԻ

1

Անգամ մը փոքրիկ Ծովիկը պահարանը բացաւ եւ տեսաւ, որ ամանով մեղը դրուած էր հոն:

– Այս ի՞նչ լաւ բան, – ըսաւ ինք իրենս.– տունն ալ մարդ չկայ:

Ըսաւ եւ սկսաւ ուտել: Ամէնը կերաւ ըմբոյշ, ամանը տեղը դրաւ եւ փախաւ դուրս:

Հինգ վայրկեան չէր անցած, ներս մտաւ մայրիկը, բացաւ պահարանը ու տեսաւ, որ մեղրի ամանը պարապ է, մէջը բան չէ մնացեր:

Անմիջապէս կանչեց Արփիկը, Մանուշը, Գէորգն ու Ծովիկը եւ հարցուց, թէ իրենցմէ ո՞վ էր կերած մեղրը:

Ամէն մէկը կը պնդէր, թէ ինք չէր կերած:

– Լաւ, – ըսաւ մայրիկը, – հանեցէք լեզունիդ եւ ես խոյսն կ'իմանամ, թէ ո՛վ է կերեր:

– Ի՞նչպէս կ'իմանաս, – հարցուց Արփիկը կասկածանքով:

– Ո՛վ որ կերեր է, անոր լեզուն անպատճառ կարմիր կ'ըլլայ:

2

Ասիկա լսելուն պէս՝ Ծովիկը սկսաւ լեզուն ծծել, երբեմն ալ ակռաներով մաքրել զայն: Այն տեսնելն եղբայրն ու քոյրերը քահքահ մը էն փրցուցին: Արդէն հասկցեր էին, թէ ո՛վ էր կերեր մեղրը:

– Ինչո՞ւ այդպէս կ'ընես, – հարցուց մայրիկը ժպտելով:

– Լեղուս կը քերուի, – ըսաւ պզտիկ Ծովիկը կուս կարմիր կարած:

– Զրլլա՛յ թէ նորէն մեղր կ'ուզէ, – հեգնեց մայրիկը:

Եւ ամէնքը մէկ կրկին սկսան խնդալ:

Ծովիկ ինքն ալ խնդաց այս անգամ:

ԱՌԱՁ.– Մի՛ ըլլար լոկ հացի ընկեր,
Եղի՛ր նաեւ լացի ընկեր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պահարան.– Բան մը պահելու տեղ, դարան:
Կասկածանք.– Կասկած, տարակոյս:
Հեգնել.– Ծաղրել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Անգամ մը ի՞նչ ըրաւ փոքրիկ Ծովիկը։ — Վերջը ո՞վ եկաւ։ — Ի՞նչ հարցուց մայրիկը։ — Ի՞նչ ըրաւ Ծովիկը։ — Եղբայրն ու քոյրերը ինչէ՞ն հասկցան, որ ինքն էր կերեր մեղրը։ — Իրա՞ւ կը քերուէր Ծովիկի լեզուն։ ինչո՞ւ այդպէս ըսաւ։

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Ձեր այսօրուան դասին մէջէն ընտրեցէք չորս բառ եւ գտէք անոնց հոմանիշները։

59. ԾԻԾԵՌՆԱԿԻՆ

Դուն կապուտակ ծովով եկուր,
Թեթեւ թեւավ, հովով եկուր։
Ծովի փրփուր լանջով եկուր,
Գարնան երգով, կանչով եկուր։

Սեւուկ, աղուոր աչիկ ունիս,
Մկրատի պէս պոչիկ ունիս։
Ծովի փրփուր լանջով եկուր,
Գարնան չունչով, կանչով եկուր։

Ծիծեռնակը երգով կու գայ,
Առանց անոր գարուն չըկայ։
Ծովի փրփուր լանջով կու գայ,
Գարնան երգով, կանչով կու գայ։

ՀԱՆԵԼՈՒԿ Ի։— Աբուլատ ունի, բուն չունի,
ճիւղեր ունի, բայց ծառ չէ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կապուտակ։— *Կապոյտ։*
Լանջ։— *Կուրծք։*
Աչիկ։— *Աչք, աչուկ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ո՞ր եղանակին կու գան ծիծեռնակները։ — Ե՞րբ կը մեկնին։ — Գարնան ի՞նչը կը կոչուին անոնք։ — Ի՞նչ կը նշանակէ «Ծովի փրփուր լանջ»։ — Ուրիշ ի՞նչ թռչունի անուն գիտէք։ — Ո՞րն է ամենէն հաղցր ձայն ունեցող թռչունը։ — Իսկ ի՞նչ տեսակ ձայն ունի ագռաւը։

60. ՇՈԳԵՆԱՒՈՎ, ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

1

Սուրէն շատ կը սիրէր աշխարհագրութիւնը. գրեթէ միշտ ջուրի պէս սրված կ'ըլլար իր դասը: Բայց երբ կարդը դար ծովու կամ ծոցի, նեղուցի, լիճի կամ գետի անուններ տալու, չփոթութեան կը մատնուէր յաճախ:



Ի՞նչպէս միտք պահէր այդ անվերջ ու անհամանում անունները:

Հակառակի պէս՝ ուսուցիչն ալ միշտ ծովու կամ ծոցի, նեղուցի կամ գետի անուններ կը հարցնէր իրեն:

Սուրէն շատ անդամ իրար կը խառնէր զանոնք. ծովու տեղ քաղաքի մը անունը կու տար կամ նեղուցի տեղ ծոց մը կը ցուցնէր քարտէսին վրայ:

2

Օր մը, աշխարհագրութեան դասին, յանկարծ քանի մը հիւրեր մտան դասարան: Դաս բանալու կարգը Սուրէնինն էր: Ուսուցիչը կանչեց զինք ու ըսաւ.

— Լոնտոնէն շոգենաւ պիտի նստիս եւ պիտի երթաս Եոքոհամա. պիտի ըսես, թէ ճամբան ո՛ր ծովերէն ու նեղուցներէն պիտի անցնիս եւ ո՛ր գլխաւոր նաւահանգիստները պիտի հանդիպիս:

Սուրէն հազաց, թուքը կլլեց եւ՝ ընկերներուն վրայ արագ ակնարկ մը նետելէ ետք՝ պատասխանեց ուսուցչին կողմը:

Բոլորը հետաքրքրութեամբ կը սպասէին, թէ ի՞նչպէս պիտի սկսէր ու մանաւանդ ի՞նչպէս պիտի վերջացնէր ան իր նշանաւոր ճամբորդութիւնը:

ԱՌԱԾ.— Լեռը գովէ՝ դաշտը կեցիր,
Ծովը գովէ՝ ցամաք կեցիր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծոց.— Ծովու մաս մը, որ ցամաքին մէջ մտած է:
Նեղուց.— Երկու ծովեր իրարու միացնող եւ երկու ցամաքներ իրարմէ բաժնող ջուրի նեղ անցք:
Շոգենաւ մատուցիչ.— Ճաշարիչ, չփոթիչ:
Յանախ.— Շատ անգամ:
Անհամանում.— Չհամանող:

Լոնտոն։— *Անգլիոյ մայրաքաղաքը։*

Եոքոհամա։— *Ճափոնի գլխաւոր քաղաքներէն մէկը։*

Նաւահանգիստ։— *Մովկերեայ քաղաք, որուն առջեւ նաւերը կանգ կ'առնեն։*

Ակնարկ։— *Նայուածք։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Սուրէն ո՞ր դասը շատ կը սիրէր։ — Ի՞նչ բան շփոթութեան կը մատնէր զինք։ ինչո՞ւ։ — Ուսուցիչը դիտմա՞մբ դժուար բաներ կը հարցնէր անոր։ — Օր մը ի՞նչ պատահեցաւ։ — Դուք կրնա՞ք Լոնտոնէն Եոքոհամա «ճամբորդել»։

ՊԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Ձեր տետրակին մէջ գրեցէք ներմակ–սեւ։ Այս երկու բառերը կը կոչուին հակադիշ, որովհետեւ իրարու հակառակ նշանակութիւն ունին։

61. ԱԾՈՒԽԸ ՀԱՏԱՒ

1

Շոգենաւը պատրաստ էր ճամբայ ելլելու համար։։։։ Եւ Սուրէն, առանց ժամանակ կորսընցնելու, սկսաւ իր ճամբորդութեան։—

«Լոնտոնէն շոգենաւ կը նստիմ եւ Մանչի ծովէն անցնելով կը մտնեմ Ատլանտեան ովկիանոս։ կը հանդիպիմ Լիզպոն»։

— Շարունակէ՛, — սիրտ կու տար ուսուցիչը։

«Ցետոյ կ'անցնիմ Ճիպրալթարի նեղուցէն եւ կը մտնեմ։։։»։

— Շարունակէ՛, — կը կրկնէր ուսուցիչը գլուխը շարժելով։

«Եւ կը մտնեմ Միջերկրական ծով։ ուղղակի կ'երթամ Ալեքսանդրիա»։

— Շարունակէ՛, շարունակէ՛։

2

Բայց ի՞նչպէս շարունակէր Սուրէն, քանի որ մնացածը չէր գիտեր։ Ո՛չ Սուէզի ջրանցքը միտքն էր մնացեր, ո՛չ Կարմիր ծովը, ո՛չ Պապ էլ Մանդէպի նեղուցը, ո՛չ ալ Հնդկաց ովկիանոսը կամ Խաղաղականը։ Ուստի՝ առանց չփոթելու եւ իրը թէ երկար ճամբորդութենէ մը յոգնած, յարեց։

— Պարո՛ն, շոգենաւին ածուխը հատաւ։։։ չենք կրնար ճամբանիս շարունակել։

Ուսուցիչը ժպտեցաւ։ սկսան խնդալ նաեւ աշակերտներն ու հիւրերը։

Ամէնքն ալ հասկցած էին, թէ ի՛նչ հնարքի դիմած էր Սուրէն, դժուարին ճամբորդութենէ մը ազատելու համար։

ԱՌԱԾ։— Մէկ կայ՝ հազար կ'արժէ։
Հազար կայ՝ մէկ չ'արժեր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լիզպոն։— *Փորթուգալի մայրաքաղաքը։*

Ջրանցք։— *Ջուրի անցք։ մարդոց ձեռքով բացուած նեղուց։*

Հնարք։— *Ճար, միջոց, կերպ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ի՞նչպէս սկսաւ Սուրէն իր ճամբորդութիւնը։ — Ի՞նչ տեղերէ անցաւ։ — Ինչո՞ւ չկրցաւ շարունակել։ — Ի՞նչ հնարքի դիմաց ի վերջոյ։ — Ներկաները ինչո՞ւ խնդացին։ — Դուք կրնա՞ք ըսել, թէ տունէն դպրոց գալու ատեն ի՞նչ փողոցներէ կ'անցնիք։ Ի՞նչ հետաքրքրական բաներ կը տեսնէք ճամբան։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Հետեւեալ բառերուն դիմացը գրեցէք իրենց հականիշները։— Ցշանաւոր, հիւանդ, անոյշ, հանդարտ, բարձր, հարուստ։

62. ՀՆԱՐԱՄԻՏ ԱԳՌԱՒԸ

Ամրան սառամիկ տարէն այրած,
Ամ՛լ ուժաթափ, խանջ ու ծարաւ,
Խեղճ ագռաւ մը երբ կը շրջէր,
Ամպունքերուն մէջէն յանկա՛րծ
Հողէ երկար կուժ մը գտաւ,
Մինչեւ կէսը ջուրով լեցուն։
Ի՞նչ ապուռը բախտ իրեն համար...
Բայց կուռցը կարճ ըլլալուն,
Մինչեւ ջուրին քով չըհասաւ։
Մեր թռչունը ծոյլ չէր բնաւ.
Թէեւ յոգնած, արեւահար,
Գնաց քարեր ժողվեց փութով,
Ամանին մէջ նետեց կարգաւ,
Մինչեւ ջուրը՝ բարձրանալով՝
Իր կուռցին եկաւ հասաւ։

ՀԱՆԵԼՈՒԿ ԻԱ։— Քարի զարնեմ՝ չի կոտրիր,
Ջուրին խեմ՝ կը կոտրի։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հնարամիտ։— *Հնարքներ գտնող, խելացի։*
Ուժաթափ։— *Ուժէ ինկած։*
Կուժ։— *Սափոր։*
Արեւահար։— *Արեւէն զարնուած, այրած։*
Փութով։— *Շուտով։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Օր մը ի՞նչ վիճակի մէջ էր ագռաւը։ — Ի՞նչ գտաւ ածուներուն մէջ։ — Ո՞վ դրած էր կուժը հոն։ — Իր գիւտը ինչո՞վ «բախտ» էր իրեն համար։ — Ի՞նչ հնարք մտածեց, որպէս զի կարենար խմել ջուրը։ — Ի՞նչ տեսակ կենդանի է ագռաւը. ադուէ՞սը։

63. ԴԱՒԻԹԻ ՔԱՐ

Սասունցի Դաւիթը զառնարած զարձաւ, երբ գեռ հազիւ եօթը-ութ տարեկան էր։

Օր մը, Սեւ.սարէն ոչխարները վար իջեցուց լերան ստորոտը, ուր կը տարածուէր Մուշի ընդարձակ դաշտը։

Ոչխարները համախմբուած էին հոն, դաշտին մէջ, իւրաքանչիւր կիներ կթելով էին զբաղած։ Յանկարծ լերան կողէն ահագին ժայռ մը ինկաւ եւ սկսաւ գլորիլ ոչխարներուն կողմը։

Դաւիթ, տեսնելով որ ժայռը պիտի դայ ու ճզմէ հոն հաւաքուած կիներն ու աղջիկները, յանկարծ գնաց ժայռին ընդառաջ եւ ամբ ձեռքը դէմ տուաւ։

Փոքրիկ Դաւիթը այնքան ուժով էր, որ կրցաւ տեղն ու տեղը կեցնել զահավիժող ապառաժը։

Այդ ժայռը մինչեւ հիմա ալ կը մնայ հոն եւ կը կոչուի Դաւիթի քար։ Անոր վրայ դրոշմուած է Դաւիթի ձեռքին նշանը։

ԱՌԱՆ։— Աշխատող ձեռքը չի մուրար։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ատորոտ։— *Լեռան վարի մասը։*
Համախմբուիլ։— *Խմբուիլ, հաւաքուիլ։*
Գահավիժիլ։— *Աստիճանն վար իջնալ, գլորիլ։*
Ապառաժ։— *Ժայռ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ո՞վ էր Սասունցի Դաւիթ։ Ի՞նչ գիտէք անոր մասին։ — Որ մը ի՞նչ պատահեցաւ։ — Բացուրենէն զատ ուրիշ ի՞նչ առաւելութիւններ ունէր Դաւիթ։ — Ո՞ւր կը գտնուի Դաւթի քարը։

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Հետեւեալ բառերուն դիմացը գրեցէք իրենց հականիշները։— սիրուն, պարծենալ, տուն, հին, կուշտ, աշխատասէր։

64. ՀՕՐՍ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ

1

Դպրոցէն կը վերադառնանք ես ու Սամսոնը եւ միասին դաս կը սորվինք կամ իրենց եւ կամ մեր տունը։ Մայրս կ'ուրախանայ, երբ մենք կը կարդանք «գիր կապելով»։ Ան կը հրճուի, որ ես տառերու անունը կու տամ մէկմէկ։



Մայրիկս ինքն ալ կարդալ գիտէ։ Ամէն անգամ որ չուարիմ, օգնութեան կը հասնի եւ սխալներս կ'ուղղէ։ Գործ չի տար ինծի կամ տեղ չի գրկեր զիս, որպէսզի դասերս պատրաստելու ժամանակ ունենամ։

— Դուն կարդա՛, դասերդ պատրաստէ, որ ամօթով չմնաս, — կ'ըսէ դուրգուրանքով։

2

Հայրս նայնպէս կ'ուրախանայ իմ յաստիճանիս։ Իրենս տեսնելով։ Այդ մռայլ, անժպիտ մարդը, օրուան ցաւերն ու յոգնութիւնը մոռցած, ցնծագին կը ժպտի, երբ ես դիրքերը կարդալով կ'բռնեմ. «ա–հա, ա–պա, ա–բի»։

– Կեցցե՛ս դուն, – կ'բռնէ ան ուրախ–ուրախ. – բան սորվէ, որ թշնամիին աչքը հանես, թէ չէ սարի տակ կը ճզմեն քեզ։

Թէեւ ես չեմ հասկնար, թէ ի՞նչ կը նշանակէ «թշնամիին աչքը հանել», բայց հօրս խօսքերէն ոգեւորուած՝ ձայնս աւելի կը բարձրացնեմ.

– Ա–ա–բ՝ սար։ Տ–ա–բ՝ սար։ Մ–ա–ա–ի–ս՝ Մասիս։

–Ա՛յ, կեցցե՛ս, – կը կրկնէ հայրս ու կ'աւելցնէ.– Մասիսը ի՞նչ է։

– Սար, – կը պատասխանեմ ես։

– Կեցցե՛ս, ճիշդ է։

– Հապա ի՞նչ կարծեցիր, – կը հպարտանայ մայրս.– ուրիշ ապոց պէս ծոյլ ու ապէտ չէ մեր Սուրէնը։

– Հա՛, – վրայ կը բերէ հայրս հպարտութեամբ, – որո՞ւն ապան է ան։

ԱՌԱՆ՝– Ադան հաւը կարկչան կ'ըլլայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիր կապել՝– Հեկեր։ Էրկու դամ աւելի դիրքեր մթացնելով կարդալ։
Հրճուիլ՝– Սաստիկ ուրախանալ։
Տան՝– Գիր։
Գուրգուրանք՝– Ակր, գորով։
Մռայլ՝– Երեսը կախ, խիստ դէմքով։
Ցնծագին՝– Խիստ ուրախ։
Կեցցես՝– Ապրիս։
Ոգեւորուած՝– Քաջալերուած, խանդավառուած։
Սար՝– Լեռ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՝– Ինչո՞ւ կ'ուրախանար Սուրէնի մայրը։ – Ի՞նչ կ'ըսէր անոր։ – Դուք ի՞նչպէս կը սորվիք ձեր դասերը. մէկը կ'օգնէ՞ ձեզի։ – Ինչո՞ւ մռայլ ու անժպիտ էր Սուրէնի հայրը։ – Ի՞նչ կը նշանակէ «թշնամիին աչքը հանել»։ – Ճի՞շդ է, որ ոտքի տակ կը ճզմուին ուսում չունեցողները։ – Ի՞նչ բանի համար հպարտ էին Սուրէնի հայրն ու մայրը։

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝– Ձեր տետրակին մէջ գրեցէք հոտ–հօտ, հարբ–յարդ։ Այս բառերը կը կոչուին նմանաձայն։

65. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ՎԱԳՐԸ

Վագրը աղուէս մը բռնեց այս անգամ։
Աղուէսը ըսաւ.
– Լրսէ՛, բարեկա՛մ,
Կը տեսնեմ՝ դուն յաւ սխորժակ ունիս,
Մխաքրդ ուրիշ է, բայց կը սխալիս.
Առաւած դիս կարգեց գազաններու տէր,
Իսկ դուն կը փորձես հիմա զիս ուտե՞լ...
Առածու զայրոյթէն աշխարհ փուլ կու գայ,
Ա՛լ չես ազատիր, երկի՛նքը վրկայ։

Վագրը երկիւղէն գոյն առաւ տուաւ,
Սիրտը կուրծքին տակ ումպ մը ջուր դարձաւ։

– Զես հաւատար, հա՞. Է՛հ, եկուր, եղբա՛յր,
Այս ձորէն դուրս դանք ու մանենք անտառ
Ու տես, թէ ի՛նչպէս գազաններն ամէն
Ինձմէ սարսափած հեռու կը փախչին։
– Լա՛ւ, – հաւանեցաւ վագրը իր վախէն
Եւ աղուէսին հետ դուրս եկաւ ձորէն։
Գայլ, արջ ու յովազ երբ վագրը տեսան,
Գլուխնին առած լեռները փախան։
– Սրխալեր եմ ես, ներէ՛ ծառայիդ, –
Ըսաւ ու փախաւ վագրն ալ միամիտ։
Սա հին առակ է, բայց միաք ունի խոր,
Ուժին հետ մէկտեղ խելք է հարկաւոր։

ՀԱՆԵԼՈՒԿ ԻՐ.– Ծովու վրայ անսահման՝
Ի՞նչ քաղաք է շարժական։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զայրոյթ.– *Սաստիկ բարկութիւն։*
Փուլ գալ.– *Փլչիլ։*
Երկիւղ.– *Վախ։*
Հարկաւոր է.– *Պէտք է։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Անգամ մը ի՞նչ պատահեցաւ։ – Ի՞նչ ըսաւ աղուէսը վագրին։ – Ճի՞շդ էր ըսածը։ – Ցետոյ ո՞ւր գացին երկուքը մէկ։ – Որմէ՞ վախցան անտառին գազանները. վագրէ՞ն թէ աղուէսէն։ – Վախցողը ո՞վ էր. ինչո՞ւ։ – Ի՞նչ է այս առակին իմաստը։

66. Ո՞Վ, ԳՏԱԻ ՄԵՐ ԱՅԲՈՒԲԵՆԸ

1

Դասատուն սկսած չէր դեռ։ Օգտուելով ուսուցչին բացակայութենէն, չարաճճի Թամարեանը բարձրացաւ ամպիոն եւ՝ իր ձայնը նմանցնելով ուսուցչի ձայնին՝ ըսաւ.

– Ես եմ այսօր ձեր պատմութեան ուսուցիչը։ Պիտի պատմեմ ձեզի, թէ ո՛վ դատ եւ ի՛նչպէս դատ հայոց գիրերը։ Միայն թէ սա անպիտան Մեսրոպը չիանդարէ դիս։ Ա՛յ Մեսրոպ, տեղդ նստէ, ես անկարգութիւն չեմ սիրեր. կը պատժուի՛ս։

Ապա դարձաւ փոքրիկ Նեղարեանին եւ հարցուց, միշտ ուսուցչին ձեւերը կեղծելով.

– Ըսէ՛ նայիմ, Նեղարեա՛ն, ո՞վ դատ հայոց գիրերը։

– Ես չդատ, «պարո՛ն», – աչ ու ձախ նայելով պատասխանեց Նեղարեան։

Ահագին քրքիջ մը բարձրացաւ դասարանին մէջ։ Նեղարեան ինքն ալ կը խնդար։

2

Այդ պահուն յանկարծ դրան առջեւ երեւցաւ ուսուցիչը։ Ներս մտաւ ծանր քայլերով, ուղղակի բարձրացաւ ամպիոն եւ ակնարկը պարուցնելով աշակերտներուն վրայ՝ ըսաւ.

– Լսեցէ՛ք, հիմա պիտի պատմեմ ձեզի, թէ ո՛վ դատ եւ ի՛նչպէս դատ հայոց գիրերը։

Ամէնքն ալ պատրաստուեցան լսելու նոր դասը։ Միայն չարաճճի Թամարեանն էր, որ տակն-տակն եաին կը դառնար ու կը նայէր Մեսրոպին եւ Նեղարեանին։

ԱՌԱՆՑ.– Ամէն փայլուն բան
ոսկի մի՛ կարծեր։

ԲԱՌԵՐ ԵՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամպիոն.– Այն բարձր տեղը, ուր կը նստի ուսուցիչը՝ դաս տալու տակն։

Քրքիջ.– Ծիծաղ, խնդուք։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ բրաւ Թամարեան։ Ի՞նչ ըսաւ։ — Ի՞նչ հարցուց Նազարեանին։ — Ի՞նչ պատասխան տուաւ Նազարեան։ — Աշակերտները ինչո՞ւ խնդացին ամէնքն ալ։ — Այդ պահուն ո՞վ մտաւ դասարան։ Ի՞նչ ըսաւ։ — Դուք գիտէ՞ք, թէ ո՛վ գտաւ հայ այբուբենը։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Նմանաձայն կը կոչուին այն բառերը, որոնք տարբեր իմաստ եւ տարբեր ուղղագրութիւն ունին, բայց միեւնոյն ձեւով կը հնչուին։

67. ՈՒՍՈՒՑՉԻՆ ՊԱՏՄԱԾԸ

1

Ակէ տասներեքնդ դար առաջ, — սկսաւ պատմել ուսուցիչը, — մենք ո՛չ դիր ունէինք, ո՛չ ալ գրաւոր լեզու։ Մեր եկեղեցիներուն մէջ արարողութիւնները կը կատարուէին յունարէն կամ ասորերէն։

Եթէ երկար տաեն զուրկ մնայինք սեփական տառերէ, պիտի ձուլուէինք ուրիշ ազգերու մէջ, յոյն կամ ասորի պիտի ըլլայինք։

Բայց հինգերորդ դարուն սկիզբները, համեստ հայ դիւցազի մը միջոցով մեր ազգը կորուստէ։

Այդ հանճարեղ դիւցազին անունը Մեսրոպ Մաշտոցն էր։

2

Ս. Մեսրոպ միտքը դրաւ կազմելու հայ այբուբենը։ Իր այս մտադրութիւնը յայտնեց Սահակ կաթողիկոսին եւ Վռամշապուհ թագաւորին։ Անոնք ալ համամիտ գտնուեցան եւ ամէն կերպով օգնեցին իրեն։

Երիտասարդ վարդապետը երկար ճամբորդութիւններ կատարեց, ուրիշ ազգերու գիրերը ուսումնասիրեց, շարաչար աշխատեցաւ եւ վերջապէս յաջողեցաւ հնարել հայ այբուբենը։

Մեր պատմութեան ամենէն մեծ դէպքն է Ս. Մեսրոպի գիւտը։ Այդ գիւտին շնորհիւ է, որ մենք ունեցանք մեր գրաւոր լեզուն.

Ս. Մեսրոպ, Ս. Սահակ եւ իրենց աշակերտները հայերէնի թարգմանեցին Աստուածաշունչը եւ ուրիշ գիրքեր։ Հայաստանի մէջ ամէն տեղ դպրոցներ բացուեցան, եւ հայ մանուկները սկսան գրել կարդալ սորվիլ հայ լեզուով ու հայերէն տառերով։

Ս. Մեսրոպ մեր ազգին առաջին ուսուցիչը եւ մեծագոյն երախտաւորն է։

ԱՌԱՆ.— Սկսիլը գործին կէսն է։

ՀԱՐՑԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սկսիլ — *Ցուցուիլ, մատնուիլ։*
Զուրկ — *Խոնարհ։*
Համամիտ — *Համաձայն։*
Երախտաւոր — *Լաւութիւն, բարիք ընող։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Հին ատեն զիր ունէի՞ք մեզմէ։ — Եկեղեցական արարողութիւնները ի՞նչ լեզուով կը կատարուէին։ — Ի՞նչ պիտի պատահէր, եթէ սեփական տառեր չունենայինք։ — Ո՞վ փրկեց մեր ազգը կորուստէ։ — Որո՞ւ համար ըսուած է «երիտասարդ վարդապետը»։ — Ինչո՞ւ մեր ազգին մեծագոյն երախտաւորն է Ս. Մեսրոպ։

ՊԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Հետեւեալ բառերուն քով դրէք նոյն ձեւով հնչուող ուրիշ բառեր։— հարկ, դեւ, փակ, գող, սար, վար, թոյլ։

68. ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐ

«Ո՞ւր կը վազեն այսպէս արագ
Ադրեբակին ջուրերն յրատակ»,
Կ՚ըսէր արդեկն իր մայրիկին։
«Այս ափերուն վրայ կրկին
Օր մը արդեօք պիտի դառնա՞ն
Փրփուր տալով զուարթաձայն»։

«Հեռացող ջուրն իր ակունքէն
Երբեք, արդա՛ս, չի դար նորէն,
Ինչպէս օրերն ալ մեր կեանքին
Եա չեն դառնար մեկի կրկին»։

ՀԱՆԵԼՈՒԿ ԻԳ.— Ականջ չունի՝ կը լսէ,
Բերան չունի՝ կը խօսի։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ադրեբակ.— *Ջուրին բխած տեղը, ակ։*
Զուարթաձայն.— *Զուարթ, ուրախ ձայնով։*
Ակունք.— *Ակ, ջուրին բխած տեղը։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Տղան ի՞նչ հարցուց մօրը։ — Ի՞նչ պատասխան տուաւ մայրը։ — Ինչո՞ւ «կեանքի պատկեր» կոչուած է այս ոտանաւորը։ — Գիտէ՞ք ուրիշ բան մը, որ ետ չդառնայ։ — Ո՞ր ջուրերը աւելի արագ կը հոսին։

69. ՍԵՒԱՆԱՅ ԼԻՃԸ

1

Հայաստանի մէջ կան բազմաթիւ մանր ու խոշոր լիճեր։ Անոնց մէջ ամենէն նշանաւորն է Սեւանայ լիճը, որ հին ատեն կը կոչուէր Գեղամայ ծով։

Անոր ջուրը անոյշ է, մութ կապուտագոյն եւ խաղաղ ու հանդարտ տեսք մը ունի։

Սեւանայ լիճին մէջ կը թափին քսանչորս մանր գետեր, իսկ անկէ ծնունդ կ՚առնէ Զանգու գետը։

Լիճին մէջ կը գտնուի Սեւանայ կղզին՝ իր պատմական վանքով։

2

Սեւանայ լիճը հարուստ է համեղ ձուկերով, որոնց մէջ անուանի են կարմրախայտն ու իշխանաձուկը:

Կը պատմուի, թէ ժամանակին իշխան մը այցի կ'երթայ Սեւան կղզին: Ձկնորսները կ'ուզէին անոր գնել լիճին համեղ ձուկէն: Իշխանը գինը կը հարցնէ:



— Ձուկին ծանրութեամբ դրամ, — կը պատասխանեն ձկնորսները:

— Ուրեմն իշխանաձուկ է ասիկա, — կ'ըսէ իշխանը եւ կը վճարէ ուզուած դրամը:

Եւ այդ օրէն ձուկին անունը կը մնայ իշխանաձուկ:

ԱՌԱՆ — Հայրենիքի քարերը աւելի տաք են, քան Բաբելոնի փուռերը:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անուանի — Նշանաւոր:
Կարմրախայտ — Ձուկի տեսակ մը, կարմիր գոյնով:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Հայաստանի լիճերէն ո՞րն է ամենէն նշանաւորը: — Ինչո՞վ նշանաւոր է ան: — Ո՞ր գետը ծնունդ կ'առնէ անկէ: — Ի՞նչ կայ Սեւանայ լիճին մէջ: — Կրնա՞ք պատմել իշխանաձուկին պատմութիւնը: — Ուրիշ լիճերու անուններ գիտէ՞ք:

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Ձատ-զատ նախադասութիւններ կազմեցէք հետեւեալ բառերով — հօտ, յարկ, բեւ, զայլ, հարբ, դոյլ:

70. ԱՄԵՆԱԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՆԸ

1

— Տո՛ւր ինծի այն, ինչ որ ամենէն թանկագինն է քեզի համար, եւ ես կը բժշկեմ քեզ, — ըսաւ բարի պարիկը վիրաւոր թռչնիկին, որ ինկած էր գետի ափին եւ մեռնելու վրայ էր:

Կարմիր արիւնը կաթիլ-կաթիլ կը ծորէր անոր կուրծքէն, եւ կեանքը արագօրէն խոյս կու տար խեղճ թռչնիկին մարմինէն, որ արդէն սկսեր էր սառիլ:

«Ամենէն թանկագին բանը կեանքն է, — մտածեց Թոչնիկը, — բայց միթէ կը խլէ՞ ինձմէ բարի պարիկը իմ կեանքս։ Էհ՛հ, անշուշտ կատակ է ըրածը»։

Եւ անոր ուղղելով իր մարած աչքերը՝ Թոչնիկը շշնջաց.

— Լա՛ւ, բժշկէ դիս եւ ես քեզի կու տամ այն, ինչ որ ամենէն թանկագինն է ինծի համար։

2

Պարիկը դպաւ անոր իր գաւազանով, վէրքը բուժուեցաւ, եւ Թոչնիկը թռաւ ուրախ ու առողջ։

— Դէ՛հ, ա՛ւր ինծի թեւերդ, — ըսաւ պարիկը։

— Թեւե՞ր, — բացագանչեց Թոչնիկը ցընցուելով, — ո՛չ երբեք։

— Միթէ թեւերը ամենէն թանկագին բանը չե՞ն քեզի համար։

— Ճիշդ ատոր համար է, որ չեմ կրնար տալ, — յարեց Թոչնիկը։ — Ա՛ռ կեանքս. աւելի լաւ է ինձ չապրիմ, քան թէ ապրիմ ու թռչիլ չկրնամ։

— Թոխ՛ը, — ըսաւ բարի պարիկը, — ես չեմ փափաքիր քու մահդ. միայն յիշէ՛, որ ամենէն թանկագին բանը կեանքէն ալ թանկ է։

ԱՌԱԾ.— Կովը կոտոշէն, մարդը
խօսքէն կը բռնեն։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիկ.— *Երեւակայական էակ. բարի ոգի։*
Ծորիլ.— *Վազել, հոսիլ, կաթիլ։*
Խոյս տալ.— *Փախչիլ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Պարիկը ի՞նչ ուզեց թռչնիկէն՝ անոր վէրքը բուժելու համար։ — Վերջը ի՞նչ եղաւ։ — Թռչնիկը տուա՞ւ պարիկին ուզածը. ինչո՞ւ։ — Ո՞րն է ամենէն թանկագին բանը մարդոց համար. ա՞չքը, ձեռքե՞րը, լեզո՞ւն։ — Կա՞յ իրապէս կեանքէն աւելի թանկագին բան։

71. ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ



Երբ գարուն գայ բուրաւէտ,
Ի՞նչ կը բերէ իրեն հետ.
— Ծիլ ու ծաղիկ, կանաչ խոտ,
Կարմիր — կարմիր վարդ չաղոտ։

Երբ ամառ գայ, տաք ամառ,
Ի՞նչ կը բերէ մեզ համար.
– Ցորեն, գարի ու հաճար,
Ամէն ցաւի դեղ ու ճար:

Երբ աշուն գայ պտղաբեր,
Ի՞նչ կը բերէ մեզ համար.
– Նուռ, սերկեւիլ, տանձ, խնձոր,
Դեղձ ու խաղող մեղրածոր:

Երբ գայ ձմեռ ցրտաշունչ,
Ի՞նչ կը թափէ լուռ ու մունջ.
– Փաթիլ-փաթիլ փափուկ ձիւն,
Արծաթի պէս պսպղուն:

ՀԱՆԵԼՈՒԿ ԻԴ.– Եկաւ փաթիլ-փաթիլ,
Գնաց կաթիլ-կաթիլ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բուրաւէտ.– Հոտաւէտ, անոյշ հոտ ունեցող:
Շաղոտ.– Շաղ՝ ցօղ, ջուրի չոչի. շաղոտ՝ շաղով, ցօղով ծածկուած:
Մեղրածոր.– Մեղրի պէս քաղցր:
Պսպղուն.– Պսպղացող, փայլող:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Գարունը ի՞նչ կը բերէ մեզի. ամա՞ռը. աշո՞ւնը. ձմե՞ռը: – Այս չորս եղանակներէն ո՞րը կը սիրէք. ինչո՞ւ: – Ձմեռը կը նմանցնեն ծերուքեան. հապա գարո՞ւնը:

72. ԵՂԲԱՅՐՍ ՈՒ ԵՍ

1

Ես եւ մեծ եղբայրս՝ Սուրիկը միասին մեծցած, միասին խաղացած եւ միասին ուսում առած էինք մեր տան մէջ:

Օր մը, անոր սեղանին մօտեցայ եւ ուսումայ, առանց իմ ուզելուս, կոտրեցի փոքրիկ սրուակ մը:

– Քեզի ո՞վ ըսաւ, որ իմ բաներուս ձեռք դպցնես, – պոռաց եղբայրս, որ ճիշդ նոյն պահուն սենեակէն ներս կը մտնէր:

– Վար ձգեցի անդիտակցաբար եւ կոտրեցաւ: Փորձանք մըն է պատահեցաւ, – պատասխանեցի ես:

– Կը խնդրեմ, որ իմ բաներուս չդպչիս, – ըսաւ եղբայրս՝ հաւաքելով սրուակին կտորուանքը:

– Կը տեսնե՞ս, ի՞նչ մեծ փորձանք. սրրուա՞կ մը կոտրեր եմ: Եղածը այս չէ՞:

– Այո՛, քեզի համար բան մը չէ, բայց ինծի համար մեծ բան է, – շարունակեց եղբայրս ես հրելով զիս:

– Մի՛ հրեր, – բարկացայ ես:

– Կորսուէ՛:

– Քեզի կ՚ըսեմ մի՛ հրեր:

2

Սուրիկ ձեռքէս բռնեց եւ ուզեց բռնի հեռացնել զիս սեղանին քովէն, բայց ես արդէն խիստ բարկացած էի. բռնեցի սեղանին ոտքէն եւ զետին տապալեցի:

– Ահա թէ ի՞նչ կը նշանակէ մարդ վոնտել:

Սեղանին վրայի յախճապակիէ առարկաները ու բիւրեղէ զարդերը զետին թափեցան եւ կտոր-կտոր եղան:

– Գարշելի՛ բզէզ, – պոռաց եղբայրս՝ ջանալով բռնել սահող առարկաները:

«Հիմա, – ըսի ես ինծի՝ սենեակէն դուրս ելլելով, – ամէն բան վերջացաւ մեր մէջ. ա՛լ իրարու հետ պիտի չխօսինք մինչեւ մեր կեանքին վերջը»:

ԱՌԱՆ – Բարկացոտ մարդը շուտ կը ծերանայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ակամայ – *Առանց ուզելու:*
Սրուակ – *Փոքրիկ շիշ:*
Յախճապակի – *Նուրբ եւ թանկագին ապակիի տեսակ մը:*
Բիւրեղ – *Կապտորակ գոյնով թանկագին քար մը:*
Բզէզ – *Միջատ մը:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ – Փոքրիկ տղան ուզելո՞վ կոտրեց սրուակը: – Ի՞նչ էր իր յանցանքը: – Վերջը ի՞նչ պատահեցաւ: – Երկու եղբայրներէն ո՞րը աւելի կը գրաւէ ձեր ուշադրութիւնը: – Կրնա՞ք երկուքին բնաւորութեան գլխաւոր գիծերը ներկայացնել:

73. «ՆԵՐԷ՛ ԻՆԾԻ»...

1

Այս փորձանքը պատահած օրը, եղբայրս ու ես մէկ բառ չփոխանակեցինք: Կը զգայի, թէ յանցաւոր եմ. չէի համարձակեր եղբօրս երեսը նայիլ:

Սուրիկ, ընդհակառակն, շատ լաւ պատրաստեց դասերը եւ սովորականին պէս ժպտեցաւ, իբր թէ բան մը պատահած չըլլար:

Դասէն ետք, երբ մեր ուսուցիչը մեկնեցաւ, կը վարանէի մինակ մնալ եղբօրս հետ. կ՝ամչնայի իրմէ:

2

Սուրիկին ոտքերէն անցած պահուս, թէեւ սրտանց հաշտուիլ կ՝ուզէի հետը, բայց երեսս կախեցի դիտմամբ եւ դուռը բացի՝ սենեակէն դուրս ելլելու համար:

Եղբայրս գլուխը վեր առաւ յանկարծ եւ ինծի նայեցաւ:

– Սիրելի՛ Վահէ, – ըսաւ քովս գալով, – բաւական է խռոված մնանք. եթէ վիրաւորեցի քեզ, ներողութիւն կը խնդրեմ:

Եւ ձեռքը ինծի երկարեց:

Զգայի, որ կոկորդս կը սեղմուէր, չունչս կը կտրէր։ Աչքերս տրցունքով լեցուեցան։

– Ներէ՛ ինձի, Սուրի՛կ, – ըսի եղբօրս ձեռքը սեղմելով։

Եւ սիրաս թեթեւցաւ։

ԱՌԱՆՑ։– Իմաստունին հետ քար կրէ, բայց յիմարին հետ փիլաւ մի՛ ուտեր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վարանիլ։– *Ինչ ընելիքը չգիտնալ։ որոշում չկարենալ տալ։*
Խռոված։– *Քէն ըրած, քէնոտած։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։– Փորձանքը պատահելէ ետք ի՞նչ ըրին երկու եղբայրները։ – Ի՞նչ զգացումներ ունէր Սուրիկ։ Վահէ՞ն։ – Առաջին անգամ ո՞վ ներողութիւն խնդրեց։ – Որո՞ւն պարտքն էր ներողութիւն խնդրելը։ – Ի՞նչ կը նշանակէ «սիրտս թեթեւցաւ»։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։– Վերաբաղ՝ առոգանութեան նշաններու։

74· ՈՍԿԻ ՁԵՌՔԵՐ

Ես տատիկ մը ունէի,
Ու երբ բան մը չինէի,
Իմ տատիկս որդեսէր
Ինձի այսպէս միշտ կ'ըսէր·
– Ապրիս, բալի՛կ, ու մեծնաս՝
Ոսկի ձեռքեր ունենաս։

Օր մը, թուղթէ հասարակ
Շինեցի փոքր մէկ նաւակ·
Տատիս առաւ, լո՛ւռ քննեց
Ու գլուխս մեղմ շոյեց·
– Ապրիս, բալի՛կ, ու մեծնաս՝
Ոսկի ձեռքեր ունենաս։

Օր մ'ալ, տախտակ մը բերի,
Սարեակի բոյն շինեցի·
Տատիս անչափ հիացաւ,
Մազերս շոյեց ու ըսաւ·
– Ապրիս, բալի՛կ, ու մեծնաս՝
Ոսկի ձեռքեր ունենաս։

Յետոյ, թէեւ քիչ մը ծուռ,
Շինեցի ես փայտէ դուռ·
Տատիս տեսաւ, գիս գովեց,
Կուրծքին սեղմեց, համբուրեց·

— Ապրիս, բալի՛կ, ու մեծնաս՝
Ոսկի ձեռքեր ունենաս։

Օրեր անցան··· ա՛լ մեծցայ,
Կարդալ — գրել սորվեցայ,
Արհեստ, արուեստ սորվեցայ·
Ոսկի ձեռքեր ունեցայ···

ՀԱՆԵԼՈՒԿ ԻՆ·— Կարմիր քսակ,
Բերանը փակ,
Կեղեւը դեղ,
Կորիզն համեղ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տատ, տատիկ·— *Մեծ մայր։*
Բալիկ·— *Ձագուկ, զաւակ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·— Տատիկը ի՞նչ կ՚ըսէր փոքրիկ տղուն։ — Ի՞նչ կը նշանակէ «ոսկի ձեռքեր ունենաս»։ — Նոյն բանե՞րն են արհեստը եւ արուեստը։ — Փոքրիկ տղան ինչո՞ւ կ՚ըսէր, թէ ոսկի ձեռքեր ունեցաւ ինքն ալ։

75· ԼՈՐԻԿՆԵՐԸ

1

Երբ ես ձի նստայ անտառ երթալու, աղջիկս վազեց եռեւէս ու ըսաւ արագ-արագ·

— Հայրի՛կ, ինծի համար փոքրիկ ծիտեր կը բերե՞ս։

— Կը բերեմ։ Եթէ բռնեմ՝ կը բերեմ, — պատասխանեցի ես։

Մտայ անտառ։ Շատ չանցած՝ ձիուս առջեւէն լոր մը թռաւ, բայց իսկոյն ցած իջաւ։ Վար ցատկեցի ձիէն եւ վազեցի, որ թռչունը բռնեմ։ Բիչ անցին տեսայ բոյն մը, ուր փոքրիկ ծիտեր կային· առի եւ լեցուցի գլխարկիս մէջ· տատներկու հատ էին։

— Ասոնք կը տանիմ տուն, աղջիկս կ՚ուրախանայ, — մտածեցի ես։

2

Այդ պահուն լսեցի թեւերու ձայն եւ մայր լորին աղեկտուր ծղրտոցը։ Լորիկները ծրտծրտացին ու շարժեցան գլխարկիս մէջ։ Մայր լորը կեցած էր ծառի մը ճիւղին վրայ եւ անվերջ ճիչեր կ՚արձակէր։ Աղերսա՞նք էր թէ սպառնալիք, չհասկցայ։

Մտածեցի, որ եթէ լորիկները առնեմ տուն տանիմ, ծանր վիշտ պիտի պատճառեմ

անոնց մօրը։ Ուստի՝ փոքրիկ ծիտերը հանեցի դուրս եւ դրի հոն, խոտերուն վրայ, յետոյ կրկին ձի հեծնելով հեռացայ այդ վայրէն։

3

Երեկոյեան, երբ տուն վերադարձայ, աղջիկս հարցուց.

– Փոքրիկ ծիտերը բերի՞ր, հայրիկ։

– Ո՛չ, աղջիկս, չբերի։

– Ինչո՞ւ չբերիր, – կրկին հարցուց եւ աչքերը լեցուեցան արցունքով։

– Ծիտերուն մայրը չթողուց, – պատասխանեցի ես։

– Մայրը այնտե՞ղ էր։

– Այո՛, եւ կը խնդրէր, որ ձեռք չտամ իր ձագերուն։

– Եթէ բերէիր՝ պիտի լա՞ր։

– Այո՛։

– Լաւ ես բրեր, որ չես բերեր, – յարեց աղջիկս եւ արցունքոտ աչքերը ուրախութենէ չողացին։

ԱՌԱԾ։– Աղուէսը խաղողին չհասաւ,
ըսաւ՝ խակ է։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լորիկ։– Պզտիկ լոր։ Լորը որսի թռչուն մըն է՝ համեղ միսով։
Ծիտ։– Ճնճղուկ։
Աղեկտուր։– Աղիքները կտրող, ցաւագին։
Ծղրտոց։– Կարգ մը թռչուններու հանած ձայները։
Մրւծրւալ։– Մի-ծի ձայն հանել։
Աղերսանք։– Խնդրանք, աղաչանք։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։– Ի՞նչ խնդրեց փոքրիկ աղջիկը իր հայրիկէն։ – Կատարե՞ց հայրիկը իր աղջկան խնդրանքը։ – Որսէ վերադարձին ի՞նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ հօր եւ աղջկան միջեւ։ – Ի՞նչ պիտի ըսէիք դուք, եթէ փոքրիկ աղջկան տեղը ըլլայիք։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։– Վերաբաղ՝ կէտադրութեան նշաններու։

76. ԾԵՐՈՒՆԻԻՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ

1

Օր մը, մեր գիւղը ծերունի մը եկաւ, ճերմակ մօրուքով, ճերմակ մազերով ծերունի մը։ Բայց ի՞նչ ծերունի. առողջ, կարմիր երեսներով ու երկաթի պէս զօրաւոր։

Գուրգէն եղբայրս անվերջ հարցուփներ կ'ընէր ծերունիին, ան ալ ապուռ-ապուռ բաներ կը պատմէր։

Անգամ մը, եղբայրս հարցուց.

– Կ'ըսես, թէ ութսուն տարեկան ես. իմ մեծ հայրս վաթսուն տարեկան է, բայց քեզի չափ առողջ չէ, առանց ցուպի չի կրնար քալել, աչքերը լաւ չեն տեսներ, ձեռքերը կը դողդրդան։ Ինչո՞ւ դուն այսպէս առողջ մնացած ես, իսկ մեծ հայրս արդէն ծերացեր է։

Ծերունին շոյեց եղբօրս գլուխը, ժպտեցաւ ու ըսաւ.

– Տղա՛ս, մարդիկ կրնան շատ երկար ապրիլ, եթէ գիտնան իրենց առողջութեան հոգ տանիլ։ Ես քանի մը պատուէրներ պիտի տամ ձեզի։ Եթէ այս պատուէրներն կատարէք, դուք ալ առողջ կ'ըլլաք, կարիճ կ'ըլլաք եւ երկար կ'ապրիք։

2

Եւ ծերունին սա խրատները տուաւ մեզի.

1. Երբ առտուն արթննաք, չըլլա՞յ որ անկողնի մէջ մնաք. անմիջապէս ելէք եւ քանի մը վայրկեան մարզանք ըրէք։

2. Ձեր մարմինը մաքուր պահեցէք միշտ։ Մաքուր մորթը թէ՛ գեղեցկութիւն կու տայ եւ թէ առաջքը կ'առնէ շատ մը հիւանդութիւններու։

3. Ճաշելէ առաջ օճառով լուացէք ձեր ձեռքերը։ Չըլլա՞յ որ բան ուտէք աղտոտ ձեռքերով։

4. Գոնէ շաբաթը անգամ մը տաք ջուրով լոգանք ըրէք, ամառը՝ աւելի շատ։ Բայց ճաշելէ անմիջապէս եւաք բաղնիք մի՛ մտնէք։ Զգուշացէք լոգանքէ, նաեւ եթէ հիւանդ էք։

5. Մաքուր ջուրով ցօղուեցէք միշտ ձեր բերանն ու կոկորդը։

6. Առտու եւ իրիկուն, ճաշերէ եւաք, խոզանակով մաքրեցէք ձեր ակռաները։

7. Ինչ որ ուտէք՝ լաւ ծամեցէք։ Մանաւանդ աճապարանքով եւ արագ-արագ մի՛ ճաշէք։

8. Քնացէք իրիկունը կանուխ, 8–10 ժամ։

9. Արեւն ու մաքուր օդը հացի եւ ջուրի չափ անհրաժեշտ են։ Ձեր սենեակին օդը միշտ մաքուր պահեցէք, շատ – շատ բանալով լուսամուտները։

10. Քիթով չնչեցէք. երբեք բերնով չունչ մի՛ առնէք, մանաւանդ երբ օդին մէջ փոշի կայ։

11. Քրանած–քրանած ջուր մի՛ խմէք կամ հովին դէմ մի՛ նստիք։

12. Թաց մի՛ պահէք ոտքերնիդ. թրջուած դուլպան կամ կօշիկը անմիջապէս փոխեցէք։

Ծերունիին այս պատուէրները երբեք չեմ մոռնար։

ԱՌԱԾ — Ուշ եկուր, անուշ եկուր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատուէր — *Խրատ*։
Ցուպ — *Գաւազան*։
Լուսամուտ — *Պատուհան*։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Գուրգէն ի՞նչ հարցումներ կ'ընէր ծերունիին։ — Ի՞նչ տարբերութիւն կար Գուրգէնի մեծ հօրը եւ այս ծերունիին միջեւ։ — Ձեր կարծիքով՝ ո՞րն է տրուած պատուէրներուն մէջ ամենէն կարեւորը։ — Ուրիշ ի՞նչ պէտք է ընել առողջ ըլլալու համար։ — Կրնա՞ք ծերունին մը նկարագրել։

77. ՇՈՒՇԱՆԻՆ ԵՐԱԶԸ

Տարին լրացաւ. փոքրիկ Շուշանը
Կը թերթէ ուրախ նոր «Հայկարան»ը,
Ու կը թրթռայ սիրտը աղջկայ.
Ա՜խ, աշունը ե՞րբ արդեօք պիտի գայ։

Մեծ քոյրը ըսաւ.— Քիչ մը համբերէ՛,
Մինչեւ որ մէկը գայ Սեպտեմբերի։
Ա՛յ քեզ բան. աշո՛ւն, սալո՛ր, Սեպտեմբեր..
Ու տատիկին մօտ վազեց անհամբեր։

– Տատի՛կ ջան, տատիկ, ո՞րը կու գայ չուտ,
Սեպտեմբե՞ր արդեօք թէ աշունը ցուրտ։
– Մատաղ բլլամ քեզ, անուշիկ Շուշան,
Անանք երկուքն ալ միասին կու դան։

Իջաւ գիշերը խաղաղ ու անուշ,
Աստակը, հեռո՛ւն, արագ կը վազէ·
Կը նիրհէ փոքրիկ Շուշանը մուշ–մուշ,
Ու երազին մէջ ծառեր կը տեսնէ...

Զորս կողմը նախշուն ծառեր կան կանգնած,
Հասած են արդէն դեղձն ու սալորը,
Եւ ինքն ալ ուրախ, նոր հագուստն հագած,
Կը վազէ դպրոց, ինչպէս բոլորը։

ՀԱՆԵԼՈՒԿ ԻՋ.– Լեզու չունի՝ կը խօսի,
Ականջ չունի՝ կը լսէ·
Թէ հարկ բլլայ՝ կը հնչէ,
Քեզ իր մօտը կը կանչէ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիրհել.– Քնանալ։
Նախշուն.– Զարդարուն։
Դեղձ.– Դեղնորակ համեղ պտուղ մը։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Ինչո՞ւ ուրախ է Շուշան։ – Ի՞նչ բանի կը սպասէ։ – Ի՞նչ ըսաւ մեծ քոյրը։ – Ի՞նչ հարցուց տատիկին։ – Տատիկը ի՞նչ պատասխան տուաւ։ – Երազին մէջ ինչե՞ր տեսաւ Շուշան։ – Ձեր քաղաքին մէջ դպրոցները ե՞րբ կը բացուին։ – Դուք ալ ուրախութեամբ կը սպասէ՞ք դպրոցներու բացումին։

78. ԶԱՐՄԱՆԱԼԻ ԹՌՉՆԻԿԸ

1

Մեր գիւղի դաշտերուն մէջ շատ փոքրիկ թռչուն մը կայ· տեղացիները Թիշ կը կոչեն զայն։ Փոքր ընկոյզի մեծութեամբ, կարճ պոչով կլորիկ արարած մըն է։ Զայնը այնքան սակաւ է, որ սասը քայլի վրայ հազիւ կը լսուի։

Կուսաղան, ամբարտաւան մէկը ծաղրելու համար՝ մեր գիւղացիները կ՚ըսեն·

– Մարդ չէ, Թշի ձագ է...

Այո՛· Թիշը, հակառակ մատնոցի նմանող իր մարմնին, այնպէս կը յոխորտայ, որ կ՚ըսես՝ արծիւ է։

Իրաւ ալ, այս խեղճուկ թռչնիկը ինքզինք արծիւ կը կարծէ։

2

Անդամ մը, դաշտին մէջ, հայրս ու ես հանդիպեցանք այս անասնիկին, որ թուփէ թուփ կը թռչէր վախվխելով։ Իրաւունք ունէր վախնալու, որովհետեւ ամպերը կուտակուած էին երկնքին վրայ· շուտով սաստիկ անձրեւ պիտի տեղար։

Ցանկարծ ամբողջ ձորը դղրդաց ամպի գոռոցէն, բայց Թիշը, փոխանակ թուփերուն մէջ պահուելու, մէջքի վրայ պառկեցաւ եւ մանրիկ ոտքերը ցցեց վեր։

Հայրս նայեցաւ ու խնդաց։

– Հասկցա՞ր ինչ կ՚ընէ, – հարցուց ինծի։

– Ո՛չ, – պատասխանեցի ես, – ինչո՞ւ այդպէս կ՚ընէ։

– Ոտքերը դէմ կու տայ, որ երկինքը փուլ չգայ։

3

Տարիներ եաք, անձրեւոտ օր մը, ես նորէն տեսայ այս դարմանալի թռչնիկը. դարձեալ պատկած էր մէջքի վրայ, իսկ ոտքերը «դէմ տուած էր ամպին»։

Այս չնչին արարածը կը կարծէր, որ եթէ այդպէս չընէ, այսինքն եթէ ոտքերը դէմ չը-տայ ամպին, երկինքը կը փլչի աշխարհի վրայ։

ԱՌԱԾ։– Այսօր նուշ է, վաղը փուշ է։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամբարտաւան։– *Մեծամիտ, ինքն իւրն հաւնող։*
Յոխորտալ։– *Պարծենալ, մեծ-մեծ խօսիլ։*
Անասնիկ։– *Փոքրիկ անասուն։*
Կուտակուիլ։– *Իրարու վրայ դիզուիլ, հաւաքուիլ։*
Թուփ։– *Փոքր ծառ։*
Փուլ գալ։– *Փլչիլ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։– Ի՞նչ տեսակ թռչուն է թիշը։ – Ինքզինքի՞ նչ կը կարծէ։ – Անգամ մը ի՞նչ պատահեցաւ։ – Ի՞նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ հօր եւ զաւկին միջեւ։ – Ուրիշ թռչուններու անուն գիտէ՞ք. անոնց մէջ ո՞րը շատ կը սիրէք. ինչո՞ւ։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։– Ընդհանուր վերաբաղ։

79. ՎԵՐՋԻՆ ԴԱՍԸ

1

Աշխարհագրութեան դասին՝ ուսուցիչը դարձաւ Գրիգորին ու ըսաւ.

– Գրիգո՛ր, ոտքի՛։

Գրիգոր ոտքի ելաւ։

– Քանի՞ աշխարհամաս կայ երկրի վրայ, – հարցուց ուսուցիչը։

– Չորս, – պատասխանեց Գրիգոր մատներուն վրայ համրելով։

– Որո՞նք են։

– Անգլիա, Ռուսիա, Ֆրանսա եւ Հայաստան։

Ուսուցիչը գլուխը օրօրեց դժգոհութեամբ եւ կրկին հարցուց.

– Ո՞րն է Անգլիոյ մայրաքաղաքը։

– Ֆրանսա...

— 2 —

Օր մը, թուաբանութեան դասին, ուսուցիչը հարցուց նորէն.

– Ծառին վրայ տասը թռչուն կար. որսորդը մէկը զարկաւ հրացանով. քանի՞ թռչուն մնաց ծառին վրայ։

– Ութ։

– Ինչ։

– Մէկ, – լսուեցաւ այս ու այն կողմէն։

Խիկար մատը բարձրացուց եւ ըսաւ.

– Ո՛չ մէկ թռչուն:

– Ինչո՞ւ. չէ՞ որ սրսորդը միայն մէկ թռչուն դարկաւ:

– Ինը թռչունները ողջ մնացին, բայց թռան գացին եւ ո՛չ մէկ թռչուն մնաց ծառին վրայ:

3

– Այժմ նոր հարցում մը, – ըսաւ ուսուցիչը. – կրնա՞ք ըսել, թէ մէկ քիլօ բամպա՞կն է ծանր թէ մէկ քիլօ երկաթը:

– Երկա՛թը, երկա՛թը, – բացագանչեցին տղաքը ամէն կողմէ:

– Ես կ'ըսեմ՝ հաւասար են, – պատասխան տուաւ Խիկար:

Տղաքը զարմացած Խիկարին նայեցան:

– Ինչո՞ւ, – հարցուց ուսուցիչը:

– Որովհետեւ երկուքն ալ մէկ քիլօ են, – ըսաւ Խիկար:

– Ապրիս. հիմա վերջին հարցում մը. ափսէին մէջ կար չորս խնձոր, մէկը տուի Արամին, միւսը՝ Վարդանին, երրորդը՝ Գրիգորին, չորրորդը՝ Գէորգին. ինծի ի՞նչ մնաց:

– Ափսէ՛ն, – ըսաւ Խիկար:

Եւ դասը վերջացաւ: Տարուան վերջին դասն էր:

ԱՌԱՆ.– Շիտակ խօսքը դառն կ'ելլայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշխարհամաս.– Երկիրը կը բաժնուի հինգ աշխարհամասի կամ ցամաքամասի.– Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, Ամերիկա եւ Ովկիանիա:

Կրկին.– Նորէն, զարձեալ:

Այժմ.– Հիմա:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Ուսուցիչը ի՞նչ հարցուց Գրիգորին: – Գրիգոր ինչդ պատասխան տուա՞ւ: – Անգլիա, Ռուսիա, Ֆրանսա, Հայաստան աշխարհամա՞ս են. հապա ի՞նչ են: – Երկրորդ հարցումին ի՞նչ պատասխան տուաւ Խիկար: – Ճի՞շդ էր իր պատասխանը: – Ուրիշ ի՞նչ հարցումներ ըրաւ ուսուցիչը: – Ուրեմն ո՞վ ամենէն խելացին էր դասարանին մէջ:

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ

ԴԱՍ		ԷՋ
1·	Դպրոցին ճամբան	3
2·	Ամէն բան գիտէ	4
3·	Կարեւոր դասը	6
4·	Առուն	8
5·	Հայրիկին ատիճանը	9
6·	Արդէն վարպետ է	11
7·	Գայլը եւ ուլը	14
8·	Ուլիկը	15
9·	Ի՞նչ պատմեց ուլիկը	17
10·	Ո՞վ է ուժովը	18
11·	Վանկ կը խաղան	19
12·	Պզտիկ պատմութիւն	21
13·	Ձին եւ ցուլը	23
14·	Բադիկ Տիմի արկածները (Ա· Մաս)	24
15·	Բադիկ Տիմի արկածները (Բ· Մաս)	27
16·	Բադիկ Տիմի արկածները (Գ· Մաս)	29
17·	Ժամացոյցը	31
18·	Միամիտ տղան	33
19·	Ո՞ւր գնաց	35
20·	Պզտիկ չարաճճին	37
21·	Ո՞վ շատ լոյս կու տայ	38
22·	Ան ո՞վ է···	40
23·	Տո՛ւյ, տո՛ւյ···	42
24·	Պետիկին դեղատումը	43
25·	Ի՞նչն է լաւը	46
26·	Գառը	48
27·	Ասանկ ալ դասընկե՛ր···	52
28·	Արջն ու մեղուն	52
29·	Փոքրիկ սնափառը	54
30·	Հուրիկին աղօթքը	55
31·	Վա՛ղը, վա՛ղը	58
32·	Արեւքը կու գայ	60
33·	Հիմա՛, մայրիկ···	62
34·	Ոսկիին ու երկաթին վէճը	64
35·	Գետակը	66
36·	Զուրին օգուտներն ու վնասները	68
37·	Զուրին երգը	70
38·	Սասունցի Դաւիթը՝ գառնարած	72
39·	Ձեղա՞ւ···	74
40·	Մեծ հայրիկին ակնոցը	76
41·	Սասունցի Դաւիթը եւ քաղքցիք	78
42·	Շարժող տունը	80
43·	Աղը	82
44·	Մեր քաջը	84
45·	Աղուէսը եւ կաքաւը	86
46·	Կատուի մը մտածումները	88
47·	Պատճառը	90
48·	Փոքրիկ մուկը	91
49·	Երեւելի հերոսը	93
50·	Մարտը	96
51·	Սուտ հիւանդ	97
52·	Շատախօս Միհրանը	100
53·	Հայրենական սէր	102
54·	Կտրին զինուորը	103
55·	Սեւուկս	105
56·	Վարդը	107
57·	Հրաշալի որսորդութիւն	109
58·	Լեզուն կը բերուի	112
59·	Ծիծեռնակին	114
60·	Շոգենաւով ճամբորդութիւն	116
61·	Ածուխը հատաւ	118
62·	Հնարամիտ ագռաւը	120
63·	Դաւթի քար	121
64·	Հօրս ուրախութիւնը	123
65·	Աղուէսն ու վագրը	126
66·	Ո՞վ գտաւ մեր այբուբենը	128
67·	Ուսուցչին պատմածը	130
68·	Կեանքի պատկեր	132
69·	Սեւանայ լիճը	133
70·	Ամենաթանկագին բանը	135
71·	Զորս եղանակները	137
72·	Եղբայրս ու ես	139
73·	«Ներէ՛ ինծի»···	141
74·	Ոսկի ձեռքեր	143
75·	Լորիկները	145
76·	Ծերունիին պատուէրները	148
77·	Շուշանին երազը	151
78·	Զարմանալի թռչնիկը	153
79·	Վերջին դասը	155

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Ա· Լեզու: Բ· Գիրք ու տառեր: Գ· Աչք: Դ· Սիկարէր: Ե· Աւել: Զ· Ամառ: Է· Հոր: Ը· Արեւ: Թ· Շուք: Ժ· Շրթունք: ԺԱ· Փարչ: ԺԲ· Գետ: ԺԳ· Կրիայ: ԺԴ· Լռութիւն: ԺԵ· Հոլ: ԺԶ· Եղջերուի եղջիւրներ: ԺԷ· Ականջ: ԺԸ· Քուն: ԺԹ· Գիրք: Ի· Եղջերուի կոտոշներ: ԻԱ· Թուղթ: ԻԲ· Նաւ: ԻԳ· Արձագանգ: ԻԴ· Ձիւն: ԻԵ· Նուռ: ԻԶ· Հեռաձայն:

5

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԵՆ	Լ. Դ.
1. ՀԱՅԿԱՐԱՆ, Նախապատրաստական	250
2. ՀԱՅԿԱՐԱՆ, Ա. տարի	250
3. ՀԱՅԿԱՐԱՆ, Բ. տարի	250
4. ՀԱՅԿԱՐԱՆ, Գ. տարի	275
5. ՀԱՅԿԱՐԱՆ, Դ. տարի	350
6. ՀԱՅԿԱՐԱՆ, Ե. տարի	450
7. ՀԱՅԿԱՐԱՆ, Զ. տարի	500
8. ՀԱՅԿԱՐԱՆ, Է. Ը. տարի	600

ԳԻՆ՝ 250 Լ. Դ.

Հասցէ՝—

LIBRAIRIE HAMASKAÏNE
10, Rue Hussein Beyhoum
Beyrouth
LIBAN